# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 16 (1716) ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 2, 2015
VOLUME 35, NO. 16 (1714) SATURDAY, MAY 2, 2015

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԵՏԵՒՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ

***ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ***

Հայոց Ցեղասպանութեան հարիւրերորդ տարելիցին նուիրուած մեր խմբագրականի մէջ կը գրէինք. «Այսօրուան դրութեամբ, օրէ օր յաւելում կ'արձանագրէ Ցեղասպանութիւնը ճանչցող երկիրներու թուաքանակը»:

Ապրիլեան ներկայ օրերուն, զինք նախորդող երկիրներու երկար շարքին կը միանայ Պուլկարիան, որուն խորհրդարանը, ընթացիկ տարուան Ապրիլի 24-ին, 157 թեր եւ 36 դէմ քուէներով նանչցաւ Օսմանեան Կայսրութեան կողմէ Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւ մը, ուր կը հաստատէ, թէ «Պուլկարիա կը ճանչնայ 1915-1922 տարիներուն, Օսմանեան Կայսրութեան կողմէ իրականացուած հայ ժողովուրդին ցեղասպանութիւնը, ինչպէս նաեւ Ապրիլ 24-ը կը նշանակէ հայերու «զոհերու յիշատակի օր»:

Համաձայն իր վարքագիծին, Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը իր մօտ հրաւիրած է Անգարայի մօտ Պուլկարիոյ դեսպան Կրասիմիր Տուլեցկինը, որ բացատրութիւն տայ իրենց խորհրդարանին քուէարկած բանաձեւին կապակցութեամբ:

Հարուած, հարուածի վրայ. Թուրքիոյ իշխանութիւնները բոլորովին կորսուած, չեն գիտեր ուրկէ խմել ջուրը, երբ զիրենք յագեցնող ջրարատ աղբիւրները, մէկը միւսին ետեւէն կը ցամքին իր շուրջ: Օսմանեան Կայսրութեան ժառանգորդ, արդի Թուրքիոյ իշխանութիւնները իրենց գիտակցութիւնը կորսնցնող գինովի մը նման ձարբոտուքներ կը շռայլեն աջ ու ձախ: Անոնք բողոքը ու լռելեայն սպառնալիք կը տեղեկացնեն բոլոր անոնց վրայ, որոնք յանուն պատմական ճշմարտութեան եւ մարդկային արդարութեան, կը ճանչնան եւ կը դատապարտեն Օսմանեան Կայսրութեան՝ հայ ժողովուրդի դէմ իրագործած աշխարհի առաջին Ցեղասպանութիւնը:

Արդարեւ, Թուրքիա բողոքեց Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Հոլանտի դէմ, որ իր մասնակցութիւնը բերած էր Երեւանի մէջ կայացած հանդիսութիւններուն Ցեղասպանութեան 100-ամեակին կապակցութեամբ: Անշուշտ, Թուրք-

*Շար.ը էջ 18*

# 100-Ամեակը Ապահովեց Հայկական Ցեղասպանութեան Միջազգային Ճանաչումը

## Հայութիւնը Թեւակոխեց Հատուցման Հանգրուանը

### Լոս Անճելըսի 130 Հազարանոց Ցոյցը՝ Մեծագոյնը Սփիւռքի Պատմութեան Մէջ

*Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի միջոցառումներու արձագանգները կը շարունակեն ղբաղեցնել աշխարհի մեծ մայրաքաղաքները՝ ամենաբարձր մակարդակներու վրայ: Ապրիլ 24-ի նախօրեակին իրար յաջորդող ճանաչումի դիրքորոշումները ուշքէն հանեցին Թրքական կառավարութիւնն ու անոր նախագահ Ռէճէփ Էրտողանին, որ սպառնալիքներ կը շարունակէ տեղացնել Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի, Ռուսաստանի, Գերմանիոյ, Աւստրիոյ, Պուլկարիոյ, Հռոմի Պապի, Եւրոպական կառոյցներու եւ բոլոր անոնց հասցէին, որոնք տարբեր յայտարարութիւններով եւ կեցուածքներով եկան հաստատելու Հայկական Ցեղասպանութեան իրողութիւնը:*

*Միջազգային մամուլն ու լրատուամիջոցները կը շարունակեն լայն տեղ յատկացնել հարիւր տարիներ առաջ հայութեան ենթարկուած ճակատագրին:*

*Այս առթիւ, յատկանշական էին Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքին Թուրքիոյ դաշնակից երկու երկիրներու՝ Գերմանիոյ Նախագահի եւ Աւստրիոյ Խորհրդարանի կատարած յայտարարութիւնն ու ընդունած բանաձեւը:*

*Նաեւ, պէտք չէ անտեսել Միացեալ Նահանգներու Նախագահ Պարաք Օպամայի յայտարարութիւնը, ուր թէեւ «ցեղասպանութիւն» բառը չէր օգտագործուած, սակայն, Հռոմի Պապի յայտնի ելոյթը երկրորդելով, Ամերիկայի Նախագահը եկաւ հաստատելու պատմական իրողութիւնը:*

*Այսպիսով կարելի է ըսել, որ տասնամեակներու վրայ երկարող, Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ Հայ ժողովուրդի մղած պայքարը տուած է իր դրական արդիւնքը եւ միջազգային ճանաչումը ապահովուած է անկախ Թրքական պետութեան պաշտօնական կեցուածքէն:*

*Հայութիւնը այժմ կը թեւակոխէ նոր հանգրուան, ուր շեշտը պիտի դրուի հատուցման պահանջներուն վրայ՝ Թրքական եւ միջազգային դատարաններու միջոցաւ:*

*Թէեւ մեր ընթերցողները արդէն իսկ տեղեակ կրնան ըլլալ 100-ամեակի առթիւ տեղի ունեցած շատ մը միջոցառումներուն, սակայն որպէս գրաւոր մամուլ, պարտք կ'զգանք անդրադառնալ այս առթիւ տեղի ունեցած պատմական նշանակութիւն ունեցող կարեւոր իրադարձութիւններուն:*



Ֆրանսայի, Հայաստանի, Սերպիոյ, Կիպրոսի եւ Ռուսաստանի նախագահները Ծիծեռնակաբերդի բարձունքին



Մղոններ երկարող Հայութեան խիտ շարքերը՝ Լոս Անճելըսի «Ուիլշըր» պողոտային վրայ

ԵՐԵՒԱՆ

*Ապրիլ 24-ի առաւօտեան, ներկայութեամբ Ռուսիոյ, Ֆրանսայի, Սերպիոյ եւ Կիպրոսի նախագահներուն, Ծիծեռնակաբերդի մէջ տեղի ունեցաւ հարիւրամեակի յիշատակի կեդրոնական հանդիսութիւնը: Նախագահները եւ պաշտօնական հիւրերը նախ ծաղիկներ զետեղեցին, ապա նախագահ Սերժ Սարգսեան արտասանեց ուղերձ մը:*

*«Հայ ժողովուրդի արեւմտեան հատուածը տեղահանուեցաւ եւ բնաջնջուեցաւ համաձայն պետականօրէն մշակուած ծրագրի: Պարզապէս հայ ըլլալու պատճառով մօտ մէկ ու կէս միլիոն մարդ սպաննուեցաւ՝ յաւերժական լռութեան մէջ թաքցնելով մարդկային ցեղի աներեւակայելի վայրագութիւնները: Մէկ մասն ալ վերապրեցաւ՝ սեփական կեանքի օրինակով սերունդէ սերունդ փոխանցելով պատմութեան պատգամը», ըսաւ Սարգսեան: Անոր համաձայն, այսօր Հայոց ցեղասպանութիւնը մերժող դաժան մեքենային դէմ կը դնեն խիղճն ու ազնուութիւնը, հակառակ որ վէրքը կը շարունակէ արիւնահոսիլ, երբ աշխարհին մէջ տակաւին կայ լռութիւն եւ ժխտողականութիւն, այնպէս ինչպէս նշած էր Վատիկանի Ֆրանչիսկոս Պապը: «Ցեղասպանութեան ճանաչումը մարդկային խիղճի եւ արդարութեան յաղթանակն է անհանդուրժողականութեան եւ ատելութեան հանդէպ», ըսաւ նախագահ Սարգսեան: Նախագահը հաստատեց, որ այսուհետեւ անհնար է հայերը լռեցնել կամ շանթաժի ենթարկել:*

*Խօսքեր արտասանեցին նաեւ հիւր նախագահները: Ֆրանսուա Օլանտ նշեց, որ 1915-ին Թրքական դժոխային մեքենան գործարկուեցաւ եւ հայերը ենթարկուեցան զանգուածային սպանութիւններու եւ տեղահանութեան: Նշելով, որ Ցեղասպանութենէն վերապրած հայեր հաստատուեցան Ֆրանսայի մէջ. Օլանտ նշեց, որ հայերը այդ*

*Շար.ը էջ 5*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Մոսկուան ու Անքարան յայտնուեցին «հայկական» ծուղակում

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Ռոյթերզը Ապրիլի 27-ին հաղորդել է Թուրքիայի Նախագահ Էրդողանի խօսքը, կապուած այն իրողութեան հետ, որ ՌԴ Նախագահ Փութինն Ապրիլի 22-ին, անդրադառնալով հայերի ցեղասպանութեանը գործածել էր «ցեղասպանութիւն» բառը՝ «Աշխարհն առանց ցեղասպանութեան» երեկոյի մասնակիցներին ուղղուած իր հեռագրում: Էրդողանը յայտարարել է, որ Ռուսաստանը նախ պէտք է բացատրի, թէ ինչ է կատարւում Ուքրաինայում եւ Ղրիմում, մինչ ցեղասպանութիւն բառն օգտագործելը:

Ապրիլի 24-ին ընդառաջ ռուս-թուրքական յարաբերութիւնը ստացաւ բաւական ուշագրաւ բնոյթ: Ռուսաստանի Նախագահը Ապրիլի 22-ին գործածեց ցեղասպանութիւն բառը: ՌԴ արտգործնախարարը, նոյն Ապրիլի 22-ի իր հարցազրոյցում խուսափեց այդ բառից, միեւնոյն ժամանակ յայտարարելով, որ Մոսկուան ամէն ինչ կ՚անի հայ-թուրքական արձանագրութիւնները կեանքի կոչելու համար:

Լուց, եթէ իհարկէ Անքարան աւելի լսող լինի Մոսկուայի հետ յարաբերութիւններում: Բայց, այդ մարտավարութիւնը չաշխատեց, եւ ակնյայտ է, որ Անքարան ներկայում ինքն է մեծացնում ճնշումը Ռուսաստանի վրայ, եւ թէեւ Փութինը մեծ հաշուով իր խօսնակի միջոցով փորձել էր արդարանալ Անքարայի առաջ, Էրդողանը այդուհանդերձ շարունակում է ճնշումը Մոսկուայի վրայ:

Երեւան գալուց առաջ Փութինի խօսնակը յայտարարել էր, թէ տեղի է ունեցել գրոյց Էրդողանի հետ, եւ քննարկուել են Երեւան այցի պլանները: Այդ ժամանակ Թուրքիան չէր արտայայտում որեւէ դժգոհութիւն, եւ թւում էր, թէ այստեղ կայ ռուս-թուրքական լիակատար փոխըմբռնում: Յետոյ յանկարծ եղաւ Փութինի ուղերձը համաժողովին, մեծ հաշուով անսպասելի ուղերձը, քանի որ այդպիսի ուղերձ որեւէ մէկը չէր սպասում թէ բովանդակութեան, թէ ընդհանրապէս ֆորմալ իմաստով:

Ուղերձն ըստ երեւոյթին պայմանաւորուած էր Ուաշինգթոնից ստացուած տեղեկութեամբ, որ Օպա-

### Միմիանց հետ հաշիւներ պարզող Անքարան ու Մոսկուան յայտնուեցին հայկական հարցով լարուած միեւնոյն ծուղակում

Թուրքիայի արտգործնախարարութիւնը բաւական կոշտ էր արձագանքել Փութինի յայտարարութեանը, ինչից յետոյ՝ արդէն Ապրիլի 24-ին, Երեւանում, ՌԴ Նախագահը խուսափեց օգտագործել ցեղասպանութիւն բառը: Սակայն, Անքարային դա չբաւարարեց, եւ դժգոհութիւն հնչեց ընդհանրապէս երեւանեան այցի կապակցութեամբ:

Անդրադառնալով այդ դժգոհութեանը, կամ դրա հնարաւորութեան վերաբերեալ լրագրողների հարցերին, ՌԴ Նախագահի մամուլի քարտուղարն ասել էր, որ Անքարան դժգոհելու պատճառ չունի, հանդիսանում է ՌԴ ռազմավարական գործընկերը: Պեսկովը յայտարարել էր, որ պէտք է ուշադիր կարդալ Փութինի ելոյթը: Նա հաւանաբար ակնարկել էր, որ Փութինը որեւէ բառ չի ասել Թուրքիայի ու ցեղասպանութեան մասին, այլ ընդամէնը հաթաթա է տուել Արեւմուտքին՝ խորհուրդ տալով որեւէ կարեւոր տարածաշրջանում քայլ անելուց առաջ մտածել հետեւանքների մասին:

Բայց, ինչպէս երեւում է, Անքարան չի ընդունել Պեսկովի բացատրութիւնը, եւ Էրդողանին չի հետաքրքրում, որ Փութինը Ապրիլի 22-ի «սխալը» Ապրիլի 24-ին ուղղել է եւ չի ասել ցեղասպանութիւն բառը:

Ըստ երեւոյթին, Ռուսաստանը փորձեց հայկական հարցն օգտագործել Թուրքիայի հանդէպ առաւել յարմար դիրքեր դուրս գալու համար, սակայն ինքը յայտնուեց փոսի մէջ: Ռուսաստանը փորձեց նախ կիրառել մտրակը, յետոյ Թուրքիային ցոյց տալ, որ կարող է հրաժարուել հայերին աջակցեման չի արտասանի ցեղասպանութիւն բառը: Մինչ այդ յայտնի էր, որ Ուաշինգթոնում «ցեղասպանութիւն» բառը կանխելու է մեկնել Թուրքիայի ԱԳ նախարար Ջաւուշօղլուն: Կրեմլն ըստ երեւոյթին կարծեց, որ Թուրքիան ինչ-ինչ պայմանաւորուածութիւն է ձեռք բերել Ուաշինգթոնի հետ եւ փորձեց ի պատասխան ատամ ցոյց տալ՝ կիրառելով ցեղասպանութիւն բառը:

Չի բացառւում, որ Ուաշինգթոնը հենց այդ հաշուարկով էլ Ապրիլի 24-ից երկու օր առաջ բաց էր թողել տեղեկութիւնը, որ Օպաման կը խուսափի ցեղասպանութիւն բառից: Սովորաբար ուղերձների ինտրիգը պահպանւում էր մինչեւ վերջին պահը: Ռուսաստանը երեւի թէ կուլ տուեց խայծն ու ատամ ցոյց տուեց Թուրքիային, որին յաջորդեց Թուրքիայի արձագանքը, եւ առաջացաւ ռուս-թուրքական որոշակի լարում:

Իհարկէ, եղածը բաւարար հիմք չէ խօսել ռուս-թուրքական պառակտման մասին, բայց առաջացած լարումն իրեն զգացնել կը տայ տեւական ժամանակ: Փաստացի ստացւում է, որ հայկական հարցի օգնութեամբ սեպ է խրուել ռուս-թուրքական դաշինքի միջեւ: Որքան խորն է այդ սեպը, ցոյց կը տայ ժամանակը, սակայն այնքան ժամանակ, որ այդ սեպը կը մնայ դաշինքում խրուած, Հայաստանի եւ տարածաշրջանի համար վիճակը կարող է գնահատուել չարեաց փոքրագոյն:

Այդպիսով, հաւանական է, որ միմիանց հետ հաշիւներ պարզող Անքարան ու Մոսկուան յայտնուեցին հայկական հարցով լարուած միեւնոյն ծուղակում:

«ԼՐԱԳԻՐ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

# Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը եւ Հայաստանի գովազդը

ԿԱՐԻՆԷ ՍԱՐԻԲԵԿԵԱՆ

Հայոց ցեղասպանութեան ապրիլքսանչորսեան միջոցառումներն արդէն անցեալ են, կեանքը բնականոն հուն է վերադառնում: Ինչպի՛սն է լինելու յետապրիլքսանչորսեան կեանքը Հայաստանում, ի՞նչ կարող ենք մենք ստանալ ապրիլեան այս օրերի վերելքից ու ազգային միասնութեան զարթօնքից, բոլորիս համակած համընդհանուր արժանապատուութեան զգացումից: 100-րդ տարելիցի միջոցառումները պետական համակարգուած արարողակարգի, դիւանագիտական ճակատում կազմակերպուած աշխատանքի լաւագոյն օրինակ էին, եւ այսօր արդէն կարելի է ընդգծել, որ միջոցառումն ստացուած էր:

Կարեւոր խնդիրն այժմ արդիւնքները նպատակային օգտագործելն ու դրանք «ապրանքային տեսքի» վերածելն է:

Ապրիլ ամսուայ ողջ ընթացքում Հայաստանը միջազգային առաջատար լրատուամիջոցների ուշադրութեան կենտրոնում էր, գրեթէ ամէն օր հայերիս ի նպաստ շեշտադրումներով մէկը միւսից լաւ ռեպորտաժներ ու յօդուածներ էին թողարկւում ամենահեղինակաւոր լրատուամիջոցներով՝ աշխարհին ներկայացնելով, որ քարտէզի վրայ կայ Հայաստան անունով փոքրիկ պետութիւն, որը 100 տարի առաջ ահեղ ցեղասպանութիւնից յետոյ վերապրել ու այսօր շարունակում է արարել:

Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը դարձաւ իւրօրինակ ակցիա՝ հայերին ու Հայաստանը ճանաչելի դարձնելու համար: Ակամայից Հայոց ցեղասպանութիւնը իւրօրինակ բրենդի (վաճառանիշ) վերածուեց, տարելիցը առիթ հանդիսացաւ, որ մեր պետութիւնն ու ժողովուրդը ներկայացուի աշխարհում: Այդ «բրենդը» պէտք է օգտագործել պետութեան հզօրացման եւ տնտեսութեան զարգացման համար, որովհետեւ մէկ այլ բրենդի ստեղծման համար ռեսուրսներ, ցաւօք նաեւ գաղափար մենք չունենք:

Երկիրն այժմ բացառիկ շանս է ստացել՝ օգտագործելու ստեղծուած դրական իմիջը՝ Հայաստանում զարգացնելու ցեղասպանութեան թեմատիկայով կինոինդուստրիա՝ կեանքի կոչելու հզօր նախագծեր՝ միջազգային ճանաչման կինոգործիչների ու դերասանների մասնակցութեամբ: Օրինակ՝ Հայոց ցեղասպանութեան մասին ֆիլմում նկարահանուելու առաջարկ կարելի է անել Անտոնիօ Բանդերասին, ով, ինչպէս յայտնի է, ամօթալի է համարել Աթա-Թուրքի կերպարը մարմնաւորելը՝ խոշոր հոնորարով:

Այս օրերին Հայաստան այցելեցին բազմաթիւ հեղինակաւոր եւ ազդեցիկ քաղաքական, մշակութային եւ հասարակական գործիչներ. յայտնի շուուաստղ Քիմ Քարտաշեան, Գրեմիի բազմակի դափնեկիր Քանյէ Ուեսթ, աշխարհահռչակ շանսոնիէ Շառլ Ազնաւուր, Սերժ Թանկեան՝ SOAD-ի փառահեղ համերգով, 24/04 Համաշխարհային նուագախումբ: Հայաստանի պետական միջոցառումներին ներկայ էին բազմաթիւ եկեղեցական պատուիրակութիւններ, 60 երկրների պաշտօնական պատուիրակութիւններ, որոնցից 4-ը՝ նախագահի մակարդակով. ՌԴ նախագահ Վլադիմիր Փութին, Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանդ, Սերբիայի նախագահ Տոմիսլավ Նիկոլիչ, Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիս: Սրանք երկիրը գովազդելու լուրջ ատրիբուտներ են, որը համակարգուած կերպով անհրաժեշտ է օգտագործել՝ տուրիզմի զարգացմանը նպաստելու համար: Օրինակ՝ արտասահմանում շատ ընդունուած է գովազդել այս կամ այն յայտնի դերասանի նախընտրած սրճարանի սիրելի անկիւնը, վայրը կամ նստարանը, որտեղ այցելել է հանրաճանաչ աստղը: Քիմ Քարտաշեանն, օրինակ, գրառում կատարեց երեւանեան ռեստորաններից մէկի պատին, որը արդէն իսկ աշխատող գովազդ է:

Սրանք ընդամէնը լրագրողական առաջարկներ են, մինչդեռ համակարգուած եւ պրոֆեսիոնալ ծրագիր մշակելու դէպքում, անշուշտ, տարբեր դետալներ հաշուի կ՚առնուեն, եւ սա, բնականաբար, մասնագէտների անելիքն է: Բայց որ պէտք է աննախադէպ մեծ ու դրական ռեզոնանսը (հնչեղութիւն) անպայման օգտագործել՝ սա միանշանակ է, այլապէս մի քանի օր անց երկիրն ու հասարակութիւնը հանդարտ կը վերընկղմուեն գաղջ մթնոլորտի մէջ՝ իրենց հետ տանելով այս օրերին կուտակուած դրական էներգիան: Այսպէս թէ այնպէս՝ երկրի ապագան արդարութիւնն ու տնտեսութիւնն են ապահովելու:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## ՀԽ-ում Յոյս Ունեն, Որ Ապրիլի 24-ից Յետոյ Կալանաւորուած Անդամները Կ'ազատուն




*Հիմնադիր Խորհրդարանի կալանաւորուած անդամներու ազատ արձակման պահանջով ցոյց Երեւանի մէջ*

Հիմնադիր Խորհրդարան (ՀԽ) ընդդիմադիր կառոյցը ներկայացնող մի խումբ երիտասարդներ պաստառներով ու կոչերով եղան մի քանի եւրոպական դեսպանատների, Ազգային Ժողովի, գլխաւոր դատախազութեան եւ վերջում ՄԱԿ-ի գրասենեակի առջեւ:

Նրանք իշխանութիւններին կոչ էին անում ազատել իրենց կալանաւորուած ընկերներին, իսկ դեսպանատների աշխատակիցներին եւ պատահական անցորդներին իրազեկում էին, որ Հայաստանում, իրենց բնորոշմամբ, կրկին քաղաքական բանտարկեալներ կան:

«Ուզում եմ, որ հայ ժողովուրդը հասկանայ, որ իր հերոսին են ձերբակալում, իր ազատ քաղաքացուն են ձերբակալում, իր պահանջատէր քաղաքացուն են ձերբակալում», - ասաց «Հիմնադիր խորհրդարան»-ի երիտասարդ անդամներից մէկը:

Ապրիլի 7-ին «Հիմնադիր խորհրդարան»-ի ղեկավար անդամ Ժիրայր Սեֆիլեանի ու նրա ընկերների ազատազրկումից յետոյ առաջին անգամ Սեֆիլեանի ընտանիքի անդամները հնարաւորութիւն են ունեցել հանդիպելու նրանց: Ժիրայր Սեֆիլեանի եղբայրը՝ Թորոս Սեֆիլեանը «Ազատութիւն» ռատիոյին ասաց, որ կալանավայրում խնդիրներ չունեն, իրեն անհանգստացնում է միայն երիտասարդ ակտիվիստ Գէորգ Սաֆարեանի վիճակը, ով արդէն 12-րդ օրն է շարունակում է հացադուլը:

Թորոս Սեֆիլեանն ասաց, որ հիմա, երբ Ապրիլի 24-ն արդէն անցել է, յոյս ունի, որ «Հիմնադիր խորհրդարան»-ի 5 անդամները ազատ կարձակուեն:

Սեֆիլեանին ու միւսներին ազատազրկել էին Ապրիլի 7-ին՝ Ապրիլի 24-ին անկարգութիւններ ծրագրելու մեղադրանքով: Կալանուած ընդդիմադիրների փաստաբանները պնդում են, թէ նրանց ապօրինի են պահում անազատութեան մէջ: Լուրջ հիմնաւորումներ այդպէս էլ չեն ներկայացուել, թէ ընդդիմադիրներն իսկապէս զանգուածային անկարգութիւններ էին ծրագրել:

«Տեսանք, որ նման բան չպատահեց: Սա էլ չպատահեց ոչ թէ որովհետեւ Ժիրայրը կամ մեր հինգ ընկերները անազատութեան մէջ են, ոչ, իրօք չկար էդպիսի բան», - ասաց Թորոս Սեֆիլեանը:

Ժիրայր Սեֆիլեանի եղբայրը «Հիմնադիր խորհրդարան»-ի անդամ չէ, Սփիւռքում է բնակւում, ասում է, որ Հայաստան է եկել առաջին հերթին կրտսեր եղբօրը սատարելու համար: Թորոս Սեֆիլեանն ասում է նաեւ, որ դեռ 7 տարի առաջ մի հանդիպման ժամանակ զրուցել է Նախագահ Սերժ Սարգսեանի հետ, ով այն ժամանակ ասել էր, որ յարգում է Ժիրայր Սեֆիլեանին:

«Յոյսը, որ ես ասում եմ, մի բան ուզում եմ այդ օրերի իմ հանդիպման հետ կապուած՝ այդ, ինչ որ ինքն ասել էր ինձ, դա չեմ ուզում վերջնական ոտնակոխ անել, որովհետեւ ինձ ասել է, որ մենք Ժիրայրին սիրում ենք, յարգում ենք: Այդպիսի բառեր ես լսել եմ անձամբ իրենից: Վնաս չի տայ, եթէ միամիտ դուրս գամ, բայց ես տակաւին ուզում եմ հաւատալ՝ ահաւասիկ, անցաւ այդ օրը, իրենք թող ուրեմն զգան իրենց պարտականութեան լիուլի կատարումը», - ասաց Ժիրայր Սեֆիլեանի եղբայրը:

## ՀՀԿ-ում «Ապստամբութիւն» է Հասունանում

«Իրատես de facto» թերթը գրում է. «Մինչ Ապրիլի 24-ը «սառեցուած» ներքաղաքական կեանքը շուտով «հալուելու» է: Հալոցքի հետ մեկտեղ «Ջրի երես» են դուրս գալու նաեւ տեւական ժամանակ խմորուած ինտրիգները: Քանի որ ընդդիմադիր դաշտում մարդ ու գործընթաց դոյզն ինչ չեն մնացել, բոլոր զարգացումները տեղափոխուել են իշխանական դաշտ:

ՀՀԿ-ում սկսել են իրար լաւ չհասկանալ: Դժգոհողների նոր ալիք է հասունանում, սակայն «ապստամբները» դեռ լուռ են: Բայց հերիք է առիթ լինի, եւ նրանք իրենց կարծիքը «համապատասխան տեղում» կը յայտնեն եւ կը յիշեցնեն: «Ընդդիմադիր» ՀՀԿ-ականների հիմնական «թիրախը» սոցիալ-տնտեսական վիճակն է ու դրա ոչ ճիշդ կառավարումը: Նրանց դիտարկմամբ, երկրում աւելի վատ տնտեսական պայմաններ են, քան տարիներ առաջ ֆինանսատնտեսական ճգնաժամի օրերին:

ՀՀԿ «գանգատուողները» վստահեցնում են, որ այս վիճակը շատ լաւ գիտակցում է նաեւ երկրի ղեկավարութիւնը, եւ առաջիկայում հնարաւոր են որոշ փոփոխութիւններ ոչ միայն քաղաքականութեան, այլեւ որոշակի պաշտօնեաների առումով»:

www.massisweekly.com

## Արամ Մանուկեանը Դժգոհում է Սերժ Սարգսեանի Ելոյթից

Հայաստանի Ազգային Ժողովի Ապրիլ 28-ի յայտարարութիւնների ժամին, գրեթէ բոլոր պատգամաւորները խօսեցին Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի միջոցառումներից ու աշխարհի արձագանգից:

ՀԱԿ խմբակցութեան քարտուղար Արամ Մանուկեանը որոշեց խօսել մայրենի լեզուի աղաւաղումներից եւ յատկապէս պաշտօնեաների կողմից այն անտեսելուց:

Նա անդրադարձաւ յատկապէս ռուս յայտնի լրագրող Վլադիմիր Պոզների հետ Սերժ Սարգսեանի հարցազրոյցին: Պարոն Մանուկեանը հերթականութեամբ սկսեց թուարկել այն բոլոր քերականական ու լեզուական սխալները, որոնք ռուսերէնում թոյլ է տուել Սերժ Սարգսեանը. «Ձեմ հասկանում՝ այս մարդու ելոյթները նայող չկա՞յ: Շատերն են այս ելոյթից յետոյ ամօթ են զգացել: Կարող ես նրան չընդունել որպէս ՀՀ Նախագահ, սակայն նա այդ պարագայում ՀՀ-ն էր ներկայացնում: Ու այս լեզուական խնդիրները միայն վերեւներում չէ»:

Արամ Մանուկեանը եւս մէկ անգամ խօսեց օտարամոլ դիմելաձեւերի մասին. «Քանի անգամ եմ ասել, որ վերացրեք այստեղ «-իչ»-ով դիմելաձեւից: Սա մոնղոլական աւանդոյթ է: Հայկական ազգանուններն այնքան մեծ ինֆորմացիա են պարունակում, որ պէտք չէ դրանք աղաւաղել»:

Ինչ վերաբերում է հեռուստաեթերին, ապա պարոն Մանուկեանը նշեց, որ այն վերածուել է աղբանոցի, որը նայելիս ֆիզիկական ցաւ է պատճառում. «Այն հեռուստախաղը՝ «Ինչ, որտեղ, երբ», ինչո՞ւ է ռուսերէն: Դուք խախտում էք օրէնքը: Ինչ խաղ ուզում էք խաղացէք, ինչ լեզուով ուզում էք, սակայն եթեր մի տուէք: Անգամ Կրթութեան եւ գիտութեան նախարարն է ռուսերէն խօսում այդ խաղի ընթացքում: Լեզուն քո արժանապատուութեան խնդիրն է. եթէ այստեղ չէք պահպանելու, ապա որտեղ էք պահպանելու այն»:

Իսկ ՀՀԿ պատգամաւոր Կարէն Աւագեանը մինչ կը սկսէր իր ելոյթը, յայտարարեց. «Ես ամէն անգամ զարմանում եմ մի խումբ պատգամաւորների վրայ, որոնց նախանձը խեղդում է իրենց: Սակայն ելոյթս աւելի կարեւոր է, քան նրանց անդրադառնալը»: Եւ նա կրկին անդրադարձաւ Հայոց ցեղասպանութեան միջոցառումներին:

Նոյն ժամին ՀՀ ԱԺ փոխխօսնակ Էդուարդ Շարմազանով ասաց, որ Գալիպոլիի միջոցառումների թուրքական պլանն ամբողջովին տապալուեց:

Նրա խօսքով՝ դա ապացուցում է այն հանգամանքը, որ Թուրքիայի ԱԳՆ-ն անմիջապէս դատապարտեց մի շարք երկրների, դրանց թւում՝ Ռուսաստանի, Գերմանիայի, Կիպրոսի, Աւստրիայի եւ այլոց առաջնորդներին եւ ներկայացուցիչներին, որոնք իրենց համերաշխութիւնն էին յայտնել հայ ազգին: Անգարայի կողմից նման սեւեռուն ուշադրութիւնը Հայոց ցեղասպանութեանը շատ բանի մասին է խօսում:

«Թուրքիայի պլանները ձախողուեցին, եւ այնպէս ձախողուեցին, որ նրանք ստիպուած ուղիղ եթերով ցուցադրեցին ոչ թէ Գալիպոլին, այլ Երեւանում Ցեղասպանութեան միջոցառումները: Նրանք կոչ էին անում Օլանդին եւ Պուտինին, լինելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ, անկողմնակալ մնալ Լեռնային Ղարաբաղի հարցում:

## Սերժ Սարգսեանն Այցելել է «Արտադրուած է Հայաստանում» Ցուցահանդէսը



*Սերժ Սարգսեան «Արտադրուած է Հայաստանում» ցուցահանդէսի տաղաւարներէն մէկուն առջեւ*

Նախագահ Սերժ Սարգսեանն Ապրիլ 28-ին այցելել է «Մերիդիան» ցուցահանդէսային կենտրոնում Ապրիլի 26-28-ը անցկացուող «Արտադրուած է Հայաստանում» ցուցահանդէս, որի նպատակն է՝ ներկայացնել Հայաստանի արդիւնաբերութեան առկայ ներուժը, արդիւնաբերութեան զարգացման հնարաւորութիւնները, ինչպէս նաեւ աջակցել հայաստանեան ընկերութիւնների հետագայ զարգացմանն ու արտահանման խթանմանը:

Հանրապետութեան Նախագահը շրջել է տաղաւարներով եւ հետաքրքրուել է Հայաստանի տնտեսութեան գրեթէ բոլոր ոլորտները ներկայացնող եւ արտահանման ներուժ ունեցող ընկերութիւնների արտադրանքով, ցուցադրուած ապրանքատեսականիով: Հայրենական արտադրութիւնը ներկայացնող ցուցահանդէսին մասնակցող ընկերութիւնների ներկայացուցիչների հետ Նախագահը զրուցել է նաեւ նրանց խնդիրների եւ զարգացման ծրագրերի մասին:

# ԼՈՒՐԵՐ

## Թուրք Լրագրողի Տպաւորութիւնները Երեւանից

Հայաստանի նախագահի հետ ընդարձակ հարցազրոյց վերցրած թուրքական Hurriyet-ի լրագրող Ջանսու Ջամլըբելը ներկայացրել է իր տպաւորութիւնները Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին Հայաստան կատարած այցից:

Ջանսու Ջամլըբելն իր հրապարկման սկզբում գրել է, որ 1915-ի «իրադարձութիւնների» 100-րդ տարելիցի յիշատակի միջոցառումներին Թուրքիայից եկած լրագրողի պարտականութիւնը նաեւ մեծ բեռ է: Նա յիշեցնում է, որ 8 կամ 10 տարի առաջ Ապրիլի 24-ի մասին Թուրքիայում խօսում էին որպէս «այսպէս ասած Հայոց ցեղասպանութեան պնդումներ» կամ «անհիմն հայկական պնդումներ» տերմիններով, իսկ 2008-ից ֆութպոլային դիւանագիտութեան սկսուելուց յետոյ արդէն օգտագործում են 1915-ի իրադարձութիւններ եզրոյթը:

Թուրք լրագրողն անդրադառնում է ֆրանսահայ երեխաների հետ իր շփմանը՝ շեշտելով, որ նրանք բոլորը Ֆրանսիայում են ծնուել, սակայն նրանց ծնողները կամ պապերն ու տատերը ծնուել են Թուրքիայի տարբեր կողմերում: «14-ամեայ Լիանա Բալը, ում ընտանիքը Թուրքիայի Թոքաթ նահանգից է հեռացել, Թուրքերէնով ասում է, որ իրենց մօտ ընդունուած խօսք է. «Թշնամուդ լեզուն լաւ իմացիր» եւ ծիծաղում է: Նա շարունակում է, որ ինքը Թուրքերին Թշնամի չի համարում, սակայն երբ հերքում են ցեղասպանութիւնը, կատաղում է: «Կեցցեն բոլոր երեխաները»,-բացականչում եմ ինքս ինձ»,-յիշում է Ջանսուն:

«Ցեղասպանութեան Թանգարանում 1915-ի հետ կապուած շատ լուսանկարներ կան» Անատոլիայի գիւղերից քշուած հայերի երեխաների լուսանկարներն աւելի էին ծանրացնում մԹնոլորտը»- նշում է լրագրողը՝ անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան Թանգարան իրենց այցին: Նա շեշտում է, որ Թանգարանի տնօրէն Հայկ Դեմոյեանը Թանգարանում իրենց հետ շրջայցի ժամանակ գրպանից հանել եւ ցոյց է տուել Օսմանեան բանակի հրամանատար Սարգիս Թորոսեանին պարգեւ յանձնելու էնվեր փաշայի նամակը՝ նշելով, որ տեղահանութիւնը չի շրջանցել նոյնիսկ Սարգիս Թորոսեանին:

«Դեմոյեանը մէկ այլ օսմաներէնով փաստաԹուղԹ է ցոյց տալիս՝ ասելով, որ այն էլ հայի ունեցուածքը խլելու հրամանագիրն է: Տեսէք, առանց Թուրքիայի արխիւների բացուելու էլ ինչպիսի փաստաԹղԹեր ենք ձեռք բերել, սակայն հրաժարւում է ասել, Թէ որտեղից են ճարել դրանք»,-նշել է Ջանսու Ջամլըբելը:

## Հայկական Հարցի Արժէքը Մեծանալու է Փոխհատուցման Պահանջներով

Թուրքական Milliyet-ի ազդեցիկ Թուրք սիւնակագիր Քադրի Գիւրսելը Ապրիլի 24-ին Երեւան այցից յետոյ ընԹերցողներին ներկայացրել է 1915-ի հետ կապուած իր տեսակէտները՝ «Հայկական հարցի արժէքը մեծանալու է փոխհատուցման պահանջներով» վերնագրի ներքոյ:

1915-ից առաջ Թուրքիայում ապրող հայերը կազմում էին բնակչութեան 10 տոկոսը, իսկ այսօր նրանց Թիւը շատ չնչին է՝ 50 հազար:

2015-ի Ապրիլի 24-ը հետեւում Թողեցինք, սակայն բոլորս էլ գիտենք, որ դրանից յետոյ էլ կեանք կայ:

Իսկ Թուրքիային Հայկական հարցում ի՞նչ մարտահրաւէրներ են սպասւում, եւ Թուրքիան դրանք ինչ ձեւով է դիմաւորելու:

Թուրքիայի դրական կողմը.

Թուրքիայում Հայկական տաբուն վաղուց վերացել է: Թուրքիան վերջապէս ընդունել է, որ Հայկական հարց գոյութիւն ունի:

Թուրքիան արդէն հասկացել է, որ Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման անհրաժեշտութիւն կայ, եւ դրա համար նոյնիսկ 2009-ին արձանագրութիւններ ստորագրուեցին:

Թուրքիայի բացասական կողմը.

Հայկական հարցի տաբուի վերացմամբ՝ Թուրքիան չգիտի Թէ ինչպէս գլուխ հանի ստեղծուած իրավիճակից:

Թուրքիան խուսափում է առերեսուել Հայկական հարցի հետ: Իշխող կուսակցութեան բաւականաչափ քաղաքական գաղափարախօսութեան բացակայութիւնը Թոյլ չի տալիս մտնել Հայկական հարցի կարգաւորման ճանապարհ:

«Լեռնային Ղարաբաղի հարցի կարգաւորում» նախապայմանով արձանագրութիւնները, Թէկուզ եւ իրաւական առումով կան, սակայն քաղաքական առումով դրանք մեռած են ծնուել:

Թուրքիան Գալիպոլիի ճակատամարտի տարելիցը ամէն տարի նշում էր Մարտի 18-ին, սակայն այս տարի նշեց Ապրիլի 24-ին: Սա խորամանկ տակտիկա կարող է լինել, սակայն հնարաւոր չէ պնդել, որ դրանով Թուրքիան բարոյական առաւելութիւն ստացաւ:

Հայկական հարցի ծանրացող մարտահրաւէրների առաջ Թուրքիան հիմնականում նման տիպի խորամանկութիւններով է աշխատում դիմակայել:

Նոր մարտահրաւէրներից հասկացւում է, որ «1915-ի իրադարձութիւնների» հետեւանքով փոխհատուցման եւ հետ վերադարձի պահանջներ են լինելու:

Երեւանում հասկացայ, որ առաջիկայում օրակարգում են լինելու օսմանցի հայերի Թողած ունեցուածքի վերադարձի կամ փոխհատուցման հարցերով նրանց Թոռների կողմից բացուելիք դատերը:

Թուրքիան դէմ առ դէմ է մնալու յատկապէս եկեղեցիների գոյքը վերադարձնելու պահանջով միջազգային դատական գործընԹացների դէմ:

Արձանագրութիւնների չվաւերացումը իրար աւելի շատ մօտեցրեց Սփիւռքին եւ Հայաստանին: ԵԹէ սահմանը բացուեր ու յարաբերութիւնները ստեղծուէին, ապա դա հեռու կը պահեր Սփիւռքին:

www.massispost.com
daily news updates

## Սերժ Սարգսեան. «Պահանջում ենք Ճանաչում»



Ռուս յայտնի լրագրող Վլադիմիր Պոզներ հարցազրոյց կ'ունենայ Սերժ Սարգսեանի հետ

Ռուս յայտնի լրագրող Վլադիմիր Պոզներ Ռուսաստանեան ալիքով իր հեռատեսիլի հաղորդման ընԹացքում հիւրընկալել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին:

Պոզների դիտարկմանը, Թէ արդեօք Անգարան հրաժարւում է ճանաչել Ցեղասպանութեան փաստը, որովհետեւ մտավախութիւն ունի, որ դրանից յետոյ Հայաստանը կարող է նիւԹական փոխհատուցման, հողերի վերադարձի պահանջ ներկայացնել, Սերժ Սարգսեանն արձագանգել է. - «Կարծում եմ, պահանջների մասին աւելի շատ խօսում են Թուրքական հասարակութիւնում, քան հայաստանեան: Միգուցէ Թուրքիայի իշխանութիւնները նման մտավախութիւն ունեն, բայց ես կարծում եմ, որ դա հարցի երկրորդ կողմն է: Առաջին կողմը ճանաչումն է: Դուք խօսեցիք Գերմանիայի նախագահի յայտարարութիւնից այն ժամանակուայ Գերմանիայի մեղսակցութեան վերաբերեալ: Իմ կարծիքն է՝ դա համոզուած, ուժեղ մարդու ելոյԹ էր: Դա մի մարդու ելոյԹ էր, ով մտահոգուած է ժողովուրդների միջեւ հետագայ յարաբերութիւններով: Ճանաչումները տարբեր են լինում: Մենք կարիք ունենք այդպիսի ճանաչման: Իսկ փոխհատուցումների, այլ պահանջների մասին... Մենք հանդիսանում ենք միջազգային հանրութեան մի մասը եւ մենք տարբեր կազմակերպութիւնների պատասխանատու մասնակից ենք՝ ՄԱԿ-ից մինչեւ Եւրոպայի խորհուրդ, ԱՊՀ, եւ պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետութեան ոչ մի պաշտօնատար անձ այս 20-25 տարիների ընԹացքում ոչ մի անգամ չի խօսել որեւէ պահանջի մասին: Սա ինչ-որ բանի մասին խօսում է»:

Իսկ հարցին՝ «Հարիւրամեակի կարգախօսն է՝ «Յիշում եմ եւ պահանջում»: Ի՞նչ էք պահանջում», Սերժ Սարգսեանը պատասխանել է. - «Պահանջում ենք ճանաչում: Իսկ Թէ յետոյ ինչ կը հետեւի, այդ ամէնը բանակցութիւնների առարկայ է»:

Հարցին, Թէ ինչու ԱՄՆ-ն ու Իսրայէլը առ այսօր չեն ճանաչել Հայոց ցեղասպանութեան փաստը, Հայաստանի նախագահը արձագանգել է. - «Որովհետեւ Միացեալ Նահանգների, Իսրայէլի համար շահերը աւելի կարեւոր են, քան համամարդկային արժէքները: Տուեալ դէպքում նրանք ասում են, որ ելնում են իրենց ազգային շահերից»:

«Օսմանեան կայսրութեան պաշտօնեաների կողմից ցեղասպանութեան իրկանացման համար մենք մեղաւոր չենք համարում Թուրքիայի ներկայիս իշխանութիւններին, բայց երբ նրանք ժխտում են նրանք արդէն դառնում են մեղսակիցներ», - ասել է Հայաստանի նախագահը:

Անդրադառնալով հայ-Թուրքական արձանագրութիւններին՝ նախագահ Սարգսեանը նշել է, որ փաստաԹղԹերը հետ է կանչել խորհրդարանից, որպէսզի մէկ անգամ եւս նախազգուշացնի Թուրքիայի իշխանութիւններին՝ Հայաստանը մտադիր չէ յաւերժ սպասել Թուրքական խորհրդարանի կողմից արձանագրութիւնների վաւերացմանը. - «Դա իրաւական քայլ չէր, այլ քաղաքական, որովհետեւ, մեր օրէնսդրութեան համաձայն, իրաւական քայլ կը լիներ ստորագրութիւնների յետկանչը: Այդ դէպքում կը նշանակէր, որ այդ փաստաԹղԹերը այլեւս գոյութիւն չունեն: Սակայն այդ փաստաԹղԹերը այսօր գոյութիւն ունեն, եւ եԹէ Թուրքական խորհրդարանը վաւերացնի դրանք, կարծում եմ, մեր խորհրդարանը նոյնպէս կարող է դա անել»:

## «Գալիպոլիի 100-Ամեակն Ապրիլի 24-ին Նշելը Ծանր Նստեց Թուրքիայի Վրայ»

Թուրքական Cumhuriyet պարբերականի լրագրող Դոյգու Գյուվենչը խիստ քննադատութեան է ենԹարկել Թուրքական իշխանութիւնների քայլերը Հայոց ցեղասպանութեան ճանաչման դէմն առնելու հարցում՝ շեշտելով, որ դրանից Թուրքիան միայն կորուստներ ունեցաւ:

«Թուրքիան մեծ կորուստներ ունեցաւ հայերին որպէս պատասխան Գալիպոլիի 100-ամեակը հենց Ապրիլի 24-ին նշելով:

Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ցեղասպանութիւնը ճանաչող երկրները կամ ճանաչումը վերաձեւակերպող երկրների Թիւը 10-ով աւելացաւ:

2015-ին «ցեղասպանութիւն» ասող երկրներն են՝ Վատիկան, Արգենտինա, Աւստրիա, Բուլղարիա, Չիլի, Չեխիա, Գերմանիա, Հոլանտիա, Ռուսաստան եւ Սիրիա: Անգարան աշխատանքներ է տանում, որպէսզի կանխի Գերմանիայի նախագահի ելոյԹն արտացոլող որոշումը Գերմանիայի խորհրդարանում»,-նշել է Cumhurֆyet-ի լրագրողը:

# 100-Ամեակը Ապահովեց Հայկական Ցեղասպանութեան Միջազգային Ճանաչումը

Շարունակուած էջ 1-էն

նոր հայրենիքը պաշտպանեցին քաջութեամբ՝ նացիզմի դէմ պայքարին մէջ:

Նախագահ Վլատիմիր Փութին ըսաւ, որ միջազգային հանրութիւնը պէտք է ամէն ինչ կատարէ, որպէսզի նման ողբերգութիւնները չկրկնուին: Անոր համաձայն, այսօր եւս աշխարհի մէջ գլուխ կը բարձրացնէ փաշիզմը, ազգայնամոլութիւնը եւ պէտք է հարց տալ, թէ ինչու այս բոլորը կը պատահի:

Նախագահ Նիքոս Անասթասիատիս նշեց, որ Կիպրոսն ու Հայաստանը կը դատապարտեն Ցեղասպանութեան ոճրագործները եւ վառ կը պահեն զոհերուն յիշատակը: Նախագահը մաղթեց, որ պատմական փաստերը ճանչցուին:

Իսկ Սերպիոյ Նախագահ Թոմիսլաւ Նիքոլիչ իր ելոյթին մէջ նշեց, որ Ցեղասպանութիւն եզրը կը շահարկուի քաղաքական նեղ շահերու համար: Անոր համաձայն, ոչ ոք իրաւունք ունի մոռնալու զոհուած հայերուն յիշատակը:

Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը իր կարգին նշեց, որ Հայոց ցեղասպանութիւնը մեր նորագոյն պատմութեան մեծագոյն ողբերգութիւնն է, որ համարժէք դատապարտում չստանալով նախադէպ դարձած էր նոր ոճրագործութիւններու:

Գարեգին Բ.-ի համաձայն, Ծիծեռնակաբերդի հանդիսութիւնը կ'ընդգծէ պատասխանատուութիւն՝ բռնութիւններէ զերծ աշխարհ մը ունենալու:

Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակը յաւերժացնող Ծիծեռնակաբերդի յուշահամալիրը ականատես դարձաւ մարդկային ալիքի: Ապրիլ 24-ի կէսօրէն եւ Ապրիլ 25-ին, հարիւր հազարաւոր հայեր եւ օտարազգիներ այցելեցին յուշահամալիր, իրենց յարգանքի տուրքը մատուցելու համար մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշատակին: Անմար կրակին շուրջ տեղադրուած ծաղիկներու բարձրութիւնը հատեց մէկ ու կէս մեթրի սահմանը:



ՍԴՀԿ պատուիրակութիւնը մասնակցեցաւ խորհրդարանական Ծիծեռնակաբերդի պաշտօնական արարողութեան

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ծիծեռնակաբերդի յուշահամալիր այցելեց եւ Ցեղասպանութեան հարիւրամեակի ոգեկոչման համահայկական յանձնախումբի կազմակերպած կեդրոնական հանդիսութեան ներկայ գտնուեցաւ նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան պատուիրակութիւնը, ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեանի գլխաւորութեամբ:

Պատուիրակութիւնը նախապէս իր մաս մասնակցութիւնը բերած էր «Ընդդէմ Ցեղասպանութեան Յանցա գործութեան» միջազգային համաժողովին, աւելի քան 60 երկիրներէ ժամանած մօտ 600 մասնակիցներու կողքին:

Պատուիրակութիւնը նաեւ ներկայ էր Հայոց ցեղասպանութեան մէկ ու կէս միլիոն նահատակներու սրբադասումի արարողութեան, որ տեղի ունեցաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ:

## ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՍՐԲԱԴԱՍՈՒՄ

23 Ապրիլը իբրեւ պատմական օր արձանագրուեցաւ հայոց նորագոյն պատմութեան էջերուն մէջ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի բացօթեայ խորանին վրայ տեղի ունեցաւ 1,5 միլիոն նահատակներու սրբադասման արարողութիւնը, մասնակցութեամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ. վեհափառի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.-ի եւ եպիսկոպոսաց դասի: Արարողութեան ներկայ էին նաեւ քրիստոնեայ տարբեր եկեղեցիներու բարձրաստիճան հոգեւորականներ, Հայաստանի նախագահն ու բարձրաստիճան պաշտօնեաները, տարբեր երկիրներու դիւանագիտական ներկայացուցիչներ եւ սփիւռքահայ պատուիրակներ:

## ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը իւրայատուկ միջոցառումներով նշուեցաւ Լոս Անճելոսի հայաշատ գաղութին մէջ: Արդարեւ, Ապրիլի 24-ին առաւօտեան ժամը 10-ին Հոլիվուտի «Լիթլ Արմինիա» թաղամասին մէջ հանդիսաւոր պայմաններով բացումը կատարուեցաւ Հայոց Ցեղասպանութեան հրապարակին, «Սանսէթ» եւ Ուեսթըրն պողոտաներու խաչմերուկին: Այնուհետեւ տեղի ունեցաւ Արդարութեան քայլարշաւը:

Լոս Անճելըսի ոստիկանութեան գնահատմամբ 130 հազար հոգիներ մասնակցած են ցոյցին:

Տարբեր տարիքի հայորդիներ իրենց մասնակցութիւնը բերին 10 քիլոմեթր (6 մղոն) երկարութեամբ զանգուածային երթին, որն աւարտեցաւ Թրքական հիւպատոսարանին առջեւ: Թէ քայլարշաւի սկիզբին եւ թէ աւարտին տեղի ունեցաւ բազմամարդ միթինկ, ուր հայոց արդար դատին ի նպաստ զօրակցական ելոյթներ ունեցան գոնկրէսական Ատամ Շիֆ, Լոս Անճելոսի քաղաքապետ Էրիք Կարսեթի եւ ուրիշներ:



Լոսանճելըսահայեր կը տողանցեն Հոլովուտի պողոտաներով

Լոս Անճելըսի երթը նկատուեցաւ քաղաքի ամենէն բազմամարդ ցոյցերէն մէկը: Իսկ հայկական առումով սփիւռքի պատմութեան մեծագոյն ցոյցը, որ լայն արձագանքի արժանացաւ Ամերիկեան հեռատեսիլի կայաններուն կողմէ, որոնք ուղղիղ սփռումներ կատարեցին ցոյցի ընթացքին:

Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նուիրուած հաւաքներ տեղի ունեցան նաեւ Մոնթեպելլօ, Ֆրեզնօ, եւ Կլենտէյլ քաղաքներուն մէջ: Այս վայրերուն մէջ եւս ելոյթներ ունեցան հայ եւ տեղական քաղաքական ականաւոր գործիչներ:




Պոլսոյ մէջ թուրք ցուցարարները՝ հայ նահատակներու լուսանկարները պարզած

## ԹՈՒՐՔԻՈՅ ՏԱՐԱԾՔԻՆ

Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակին առթիւ Պոլսոյ Հայոց պատրիարքարանի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ պատարագ՝ ներկայութեամբ Եւրոմիութեան հարցերով Թուրք նախարար Վոլքան Պոզքըրին, Պոլսոյ մօտ Միացեալ Նահանգներու գլխաւոր հիւպատոսին եւ յոյնաց պատրիարքին: Պատարագին ընթացքին ընթերցուեցաւ Թուրքիոյ Նախագահ Ռէճէփ Թայիփ Էրտողանի յայտարարութիւնը:

«Մեր հայ քաղաքացիներուն համար յատուկ իմաստ ունեցող այս օրը համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ կեանքէ զրկուած օսմանցի հայերու յիշատակը անգամ մը եւս կը յարգեմ, անոնց երեխաներուն եւ թոռներուն ցաւակցութիւն կը յայտնեմ: Թանկագին հայ քաղաքացիներ, մարդկութեան մեծագոյն արհաւիրքներէն հանդիսացող պատերազմին ժամանակ կեանքէ զրկուած որեւէ ազգի եւ կրօնի ներկայացուցիչներու յիշատակը կը յարգեմ: Մենք անգամ մը եւս կ'ըսենք, որ գիտենք հայ հասարակութեան հետ նախապէս տեղի ունեցած տխուր իրադարձութիւններուն մասին եւ ձեր ցաւը անկեղծօրէն կը կիսենք: Մեր սրտերու դռները մինչեւ վերջ բաց են այդ հայերու վերապրող թոռներուն առջեւ», ըսած է Թուրքիոյ Նախագահը:

Պոլսոյ մէջ Ապրիլ 24-ին տեղի ունեցան բազմաթիւ ձեռնարկ ներ: Առաւօտեան, գործիչներ եւ քաղաքացիներ այցելեցին այն տուները, ուր ժամանակին ապրած են Կոմիտաս վարդապետը, Ռուբէն Սեւակը եւ ուրիշներ:

Այլ խումբ մը հաւաքուեցաւ Սուլթանահմատ հրապարակին մօտ՝ իսլամական արուեստի թանգարանին մէջ, ուր 1915-ի Ապրիլ 24-ին պահած էին ձերբակալուած հայերը: Հաւաքի մասնակիցները բարձրացուցին «Ճանաչում, Ներողութիւն եւ Հատուցում» գրութիւնները:

Կալաթասարայ համալսարանի խումբ մը ուսանողներ հարիւրամեակին առթիւ բարձրացուցին Մեծ Եղեռն, Մարդասպանի Պետութիւն եւ Հրանդ Տինք պաստառներ:

Այնթէպ քաղաքին մէջ քրտական ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան անդամները 1915-ի Հայոց Ցեղասպանութեան զոհերուն յիշատակին հա-

Շար.ը էջ 6

# 100-Ամեակը Ապահովեց Հայկական Ցեղասպանութեան Միջազգային Ճանաչումը

*Շարունակուած էջ 5-էն*

*մար ձեռնարկ մը կազմակերպեցին: Կուսակցութեան հետեւորդները նստացոյցի ընթացքին բարձրացուցին «1915-ի Հայոց ցեղասպանութեան համար ներողութիւն կը խնդրենք հայերէն» պաստառներ:*

*Թուրքիոյ հարաւ արեւելեան Մարտին նահանգի Տէրիքի շրջանի հայկական Սուրբ Գէորգ եկեղեցւոյ մէջ Ապրիլ 24-ին յարգեցին նահատակներուն յիշատակը: Թրքական լրատուամիջոցներուն համաձայն տեղի երկու հայ ընտանիքներուն մասնակցութեամբ տեղի ունեցաւ արարողութիւն եւ մոմավառութիւն:*

*Տիարպէքիրի պատմական պարիսպներու մէկ հատուածին մէջ տեղի ունենեցաւ ֆրանսահայ լուսանկարիչ Անթուան Ակունճեանի լուսանկարներու ցուցահանդէսը՝ նուիրուած Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակին:*

*Թրքական լրատուամիջոցներուն համաձայն, «Լռութեան ճիչը» անունը կրող ցուցահանդէսին ներկայացուած են հայ լուսանկարիչին կողմէ զանազան երկիրներու մէջ առնուած նկարները: Ցուցահանդէսի բացման հանդիսութեան ներկայ գտնուեցաւ նաեւ Տիարպէքիրի քաղաքապետը: Ան յայտարարեց, որ իրենք երբեք պիտի չմոռնան Ցեղասպանութիւնը:*

*Մօտակայ Վան քաղաքին մէջ նկարահանուեցան ոստիկաններ, որոնք կը փորձէին վերցնել Հայոց Ցեղասպանութիւնը դատապարտող պաստառները:*

*Թունճելի (Տերսիմ) շրջանին մէջ Ապրիլ 24-ին տեղի ունեցաւ յիշատակի հաւաք, որուն ընթացքին բողոքարարներ պետութեան կոչ ուղղեցին ճանչնալու Ցեղասպանութեան փաստը: Ցուցարարները աւանի հրապարակէն ուղղուեցան այն վայրը, ուր 1915-ին կալանաւորուած էին հայերը: Իսկ քրտական Ժողովուրդներու Դեմոկրատական Գոնկրէս կազմակերպութիւնը յայտարարութեամբ մը Ցեղասպանութիւն համարեց 1915-ին տեղի ունեցածը, պահանջելով ճանաչում:*

*Ընդհանուր առմամբ, Պոլսոյ եւ Թրքական այլ քաղաքներու մէջ տեղի ունեցած ձեռնարկները ընթացան առանց միջադէպի: Սակայն Պոլսոյ Թեքնիքական համալսարանի տարածքին մէջ ուսանողներու կողմէ ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած ձեռնարկի մասնակիցները ենթարկուեցան համալսարանի անվտանգութեան աշխատակիցներու եւ ոստիկաններու յարձակումին:*

*Պոլսոյ հայաշատ Քատըքոյ շրջանին մէջ, Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակին առթիւ կազմակերպուած երթի մասնակիցները ենթարկուեցան ոստիկանութեան յարձակումներուն: «Ակօս» թերթին համաձայն, երթը կազմակերպուած էր քրտական Ժողովուրդներու Դեմոկրատական Կուսակցութեան եւ Ժողովուրդներու Դոմոկրատական Գոնկրէսին կողմէ:*

*Մասնակիցները պարզած են Ցեղասպանութիւնը ճանչցող պաստառներ, որոնց դէմ դրած են ոստիկանները եւ ձերբակալած 6 անձեր:*

## ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

*Կիրակի, Ապրիլ 26-ին Նիւ Եորքի հռչակաւոր Թայմզ հրապարակին վրայ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին նուիրուած բողոքի մեծ հաւաք, որուն ընթացքին ծերակուտական Չարլզ Շումըր յայտարարեց, որ Ցեղասպանութեան փաստը ժխտողները «արեւուն տակ տեղ չունին»: Ելոյթ ունեցաւ նաեւ Թուրք ակադեմական Թաներ Աքչամը:*

## ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

*24 Ապրիլ 2015-ին լիբանանահայութիւնը վերահաստատեց, որ կը մնայ Սփիւռքի բաբախուն սիրտը, հակառակ շրջանի խնդիրներուն, հակամարտութիւններուն, ներքին քաղաքական եւ ապահովական վերիվայրումներուն:*

*Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակին առթիւ, աւելի քան 50 հազար հայորդիներ բողոքի ու պահանջատիրութեան պատմական երթով մը Անթիլիասէն Պուրճ Համուտ քալեցին, վերահաստատելով իրենց յանձնառութիւնը՝ նահատակներու կտակին:*

*Առաւօտեան, Անթիլիասի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ տեղի ունեցաւ պատարագ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի հանդիսապետութեամբ, ներկայութեամբ պետական, պաշտօնական, դիւանագիտական եւ կրօնական անձնաւորութիւններու:*

*Հարիւրամեակի ոգեկոչման Լիբանանի կեդրոնական մարմնի, քաղաքական կուսակցութիւններու, միութիւններու, ոչ հայ լիբանանցի քաղաքական գործիչներու ձեռամբ ծաղկեպսակներու զետեղումէն ետք, հայկական միութիւններու փողերախումբերուն գլխաւորութեամբ սկսաւ բողոքի երթը՝ ծովեզերեայ մայրուղիին վրայ: Բազմահազար լիբանանահայերուն միացան նաեւ ասորիներ, որոնք եւս Ջարդեր տեսած են օսմանցի Թուրքերուն ձեռամբ:*

*Բողոքի երթին մասնակցողները բարձրացուցին լիբանանեան եւ հայկական դրօշներ եւ պահանջատիրական լոզունգներ պարունակող պաստառներ:*

*Շատեր ժամանած էին իրենց երեխաներուն հետ: Մօտ մէկ ու կէս ժամ ետք երթը հասաւ Պուրճ Համուտի քաղաքապետարանի մարգադաշտ, ուր տեղի ունեցաւ քաղաքական հաւաք:*

*Պուրճ Համուտի քաղաքապետարանի մարգադաշտին վրայ հաւաքուած լիբանանահայերու բազմութեան առջեւ ելոյթ ունեցա Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի շրջանի վարիչ մարմնի ատենապետ Ընկ. Ալէքսան Քէօշկէրեան:*

*ՌԱԿ անունով ելոյթ ունեցաւ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ Միքայէլ Վայէճեան, իսկ ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի կողմէ խօսք առաւ Յակոբ Բագրատունի:*



*Լիբանանահայութեան ցոյցը՝ Պէյրութի փողոցներով*

## ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՄԷՋ

*Լաս Վեկասի Մէջ Տեղի Ունեցան 100-Ամեակի Միջոցառումներ*

*Լաս Վեկասի աճող հայկական գաղութէն ներս տեղի ունեցան Հայկական Ցեղասպանութեան 100-ին նուիրուած միջոցառումներ:*

*Ապրիլ 23-ի երեկոյեան, Լաս Վեկասի Հայ Առաքելական եկեղեցիէն ներս մատուցուեցաւ աղօթք, որուն յաջորդեց մոմավառութեամբ հսկում:*

*Արարողութեան ընթացքին եկեղեցւոյ հովիւ, Տէր Նարեկ Մատէրեան իր ելոյթին մէջ անդրադարձաւ 1,5 միլիոն հայ նահատակներու սրբադասման իմաստին:*

*Արարողութեան ներկայ էին Հայաստանի պատուոյ հիւպատոս՝ Պր. Էնտի Արմէնեան, ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի անդամ Կէրի Սինանեան եւ Կուսակցութեան Լաս Վեկասի մասնաճիւղի անդամ Ծորճ Յակոբեան:*

*Ապրիլ 24-ին, քաղաքի «Սանսէթ Փարքին» մէջ տեղի ունեցաւ հիմնարկէքի արարողութիւն՝ Հայկական Ցեղասպանութեան յուշարձանին, որ նախաձեռնութիւնն է Լաս Վեկասի Ամերիկահայերու Մշակութային Ընկերակցութեան:*

*Արարողութեան հանդիսավարն էր Պատուոյ Հիւպատոս Էնտի Արմէնեանը: Հիմնարկէքին ներկայ էին բազմաթիւ տեղական քաղաքական դէմքեր, որոնք իրենց ելոյթներուն մէջ անդրադարձան Յուշարձանի իմաստին ու անոր կարեւորութեան:*

*Կը նախատեսուի որ, Յուշարձանի պաշտօնական բացումը տեղի ունենայ յառաջիկայ Սեպտեմբերին, զուգադիպելով Հայաստանի անկախութեան տարեդարձին:*

*«Լաս Վեկասը տունն է աւելի քան 20 հազար հայերու եւ այս շատ լաւ ծրագիր մըն է համայնքը ի մի բերելու ու յարգելու յիշատակը՝ Ցեղասպանութեան զոհերուն», այս առթիւ ըսաւ Ընկ. Կէրի Սինանեան:*

*Նոյն կարծիքը յայտնեց նաեւ Ընկ. Ծորճ Յակոբեան աւելցնելով-. «Խիստ կարեւոր է որ համայնքի բոլոր կազմակերպութիւնները իրար քով-քովի գալով ու միասնաբար աշխատելով, իրականութիւն դարձնեն Յուշարձան մը, որ վայել է ընդհանուր համայնքին»:*



## ԼԻԲԱՆԱՆ
## ԴՐՕՇԸ, ՈՐ ԴԱՐՁԱՒ ԵՐԹԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ





Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակին առթիւ Լիբանանի մէջ կազմակերպուած պատմական երթի մասնակիցները եւ հեռատեսիլի կայաններէն երթին հետեւողները վստահաբար նկատեցին երթի մասնակիցներուն բարձրացուցած հսկայական եռագոյն դրօշը: 50 մեթր երկարող դրօշի պատրաստութիւնը եւ երթի ընթացքին անոր բացայայտումը նախաձեռնութիւնն էր ՍԴՀԿ Հայկ Բժշկեան Պատանեկան Միութեան անդամներուն:

Պատանիները նախօրոք ծրագրած եւ նշեալ դրօշակը պատրաստած էին, անոր հետ ներկայանալու համար մեծ երթին: Այսպիսով, երկար եռագոյնը դարձաւ հարիւրամեակի Լիբանանի պահանջատիրական երթի գլխաւոր խորհրդանիշը ու զայն կարելի էր տեսնել երթին մասնակցած հայորդիներու հրապարակած գրեթէ բոլոր լուսանկարներուն մէջ:

## ՀԱՅ «ՍԻՔԼԻՍԹ»ՆԵՐԸ ԴԷՊԻ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ



Մինչ աշխարհի չորս ծագերուն եւ Հայրենիքի մէջ մեծ մաշտաբով ընթացք առին Հայոց Ցեղասպանութեան Հարիւր Ամեակի Տարելիցի անկինադարձային եւ յուզումնալի միջոցառումները, այս օրերուն իրենց 3000 մղոն երթը կը շարունակեն դէպի Ուաշինկթըն՝ Հայ «սիքլիսթ»ներ Armenian cyclists Association-ի նախաձեռնութեամբ, յարգելու յիշատակը մէկ ու կէս միլիոն մեր հայ նահատակներուն:

Ապրիլ 24-ին, Հոլիվուտի Ուիլշըր պողոտայէն սկիզբ առաւ սոյն արշաւը, յատուկ ընկերակցութեամբ նաեւ գոնկրէսմէն Ատամ Շիֆի, որ միշտ եղած է հայ դատի եւ մեր ժողովուրդի կողքին: Պարոն Շիֆ 26 մղոն իրենց հետ մնալէ ետք, յաջողութիւն մաղթեց այս խումբին, որոնք նաեւ յատուկ պատգամնամակ ունէին իրենց հետ՝ նախագահ Պարաք Օպամային յանձնելու:

Սոյն խումբին մաս կը կազմէ նաեւ Վազգէն Մելիքեան, Լիբանա-

Շար.ը էջ 18

## ՄԻՋ-ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՏԱՐԱԳ ՊԸՐՊԷՆՔԻ ՄԷՋ

100-րդ տարելիցի հանդիսութեանց ծիրէն ներս Ապրիլի 23ին, 2015, երեկոյեան ժամը 7ին Հայոց Առաջնորդարանի Ս. Ղեւոնդ Մայր տաճարին մէջ աւելի քան հազար հոգի ներկայ եղաւ միջ-համայնքային պատարագին: Օրուան պատարագիչն էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Սուրբ Գրային ընթերցումներ կատարեցին Հայ Կաթողիկէ համայնքի առաջնորդ Գերշ. Միքայէլ Եպս. Մուրատեան եւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան կողմէ Վեր. Ծօ Մաթոսեան: Օրուան հոգեշունչ պատգամը փոխանցեց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Ան մէջբերելով Եսայի Մարգարէի մէկ խօսքը ըսաւ. «Եւ ձեզի չպիտի մոռնամ: Ապա յարեց խոնարհելով մեր նահատակներու յիշատակին առջեւ մենք կը տեսնենք նոր երթը հայ ժողովուրդին»: Ապա կարդաց նոյն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ, հանդիսաւոր արարողութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ի միացեալ այն յայտարարութիւնը, որով մեր մէկ ու կէս միլիոն հայ նահատակները կը սրբադասուէին եւ կ'անցնէին մեր եկեղեցւոյ սուրբերու շարքին:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979



Armenian National Philharmonic Orchestra
Concert of Remembrance





Eduard Topchjan, *Artistic Director and Principal Conductor*
Anush Nikoghosyan, *violin*

KHACHATURIAN Spartacus Suite
MANSURIAN Violin Concerto
SHOSTAKOVICH Symphony No. 5

The worldwide ambassadors of Armenian music will perform for the first time at Walt Disney Concert Hall. Don't miss this very special evening.

Tue MAY 12 7:30pm

Յիշում եմ և պահանջում
I REMEMBER AND DEMAND

Directions & Parking Info: Walt Disney Concert Hall is located in Downtown Los Angeles at 151 S. Grand Avenue. On-site parking is available for $9.

WALT DISNEY CONCERT HALL

Tickets: $33-$125
LAPhil.com
323.850.2000
818.491.8989 The Armenian
818.265.0506 ticketmicket.com
LA PHIL
Programs, artists, prices and dates subject to change

# ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ ՄԻԱՅՆ ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐՈՒ ՀԵՐՈՍՆԵՐԸ ՉԵՆ՝ ԱՅԼԵՒ ՄԵՐ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒՈՐԴՆԵՐՈՒՆ

## Հարցազրոյց՝ Թուրքիոյ «ՆՈՐ ԶԱՐԹՕՆՔ»ի Համաբանբեր ՍԱՅԱԹ ԹԵՔԻՐի հետ

Հ. Ո՞վ է Սայաթ Թեքիր:

*Պ. Պոլսահայ մը, 1984ի ծնունդ, մասնագիտութեամբ ընկերաբան եմ աւարտած եմ Միմար Սինանի անուան գեղեցիկ արուեստներու համալսարանը եւ կը շարունակեմ ուսումս Գոչ համալսարանի մէջ: Թուրքիոյ մէջ գործող բազմազգի հասարակական «Նոր Զարթօնք» կազմակերպութեան հիմնադիրներէն մին եմ եւ համաբանբերը, ինչպէս նաեւ անոր կողմէ 2009 թուականին հիմնուած դիմադրական սոցիալիստական թեքումով 95.1 ալիքի վրայ «Ozgur Radyo»՝ «Նոր Ռատիօ» համացանցային ձայնասփիւռի կայանի համադեկավարը եւ «Նոր Օր» յայտագրի պատրաստողն եմ: Ձայնասփիւռը 15 լեզուներով յայտագիրներ կը սփռէ, ներառեալ համշէնահայերէնով, արեւելահայերէնով եւ արեւմտահայերէնով: Աշխատանքներուն իրենց ներդրումը կը բերեն ասորիներ, թուրքեր, քիւրտեր, զազաներ, լազեր, չերքեզներ: Յայտագիրները կ'անդրադառնան նաեւ կիներու իրաւունքներուն, կենդանիներու պաշտպանութեան, բնապահպանման եւ այլ նիւթերու: 2010-ին, հակադարձելով UNESCOի կողմէ արեւմտահայութիւնը վտանգուած եւ չքացման եզրին գտնուող լեզուներու ցանկին վրայ ընդգրկելու որոշումին, հիմնեցինք նաեւ «Հայ մշակոյթի զօրակցական միութիւն»-ը, որ հայերէնի դասընթացքներ կը կազմակերպէ ոչ միայն հայերէն չգիտցող հայերուն, այլեւ իսլամացած հայերուն, որոնց թիւը հասած է արդէն 300ի, ներառեալ ակադեմականներու եւ խառն ամուսնութիւն կնքողներուն: Հրատարակած ենք նաեւ երեք գիրքեր՝ թրքերէն լեզուով, երկուքը Ցեղասպանութեան մասին, որոնցմէ մէկը՝ 1965 թ.ին, Լիբանանի մէջ, երբ ոգեկոչեցին Ցեղասպանութեան 50 ամեակը, Թուրքիոյ մէջ եղած արձագանգներու մասին է, իսկ երկրորդը «Schindler's List»ի նիւթին նմանող պատմութիւն մըն է որ Ցեղասպանութիւնը կը ներկայացնէ հայեր փրկող թուրքերու տեսանկիւնէն: Երրորդ գիրքը՝ լեզուական նիւթով է: Միութիւնս նաեւ հայերէն ժապաւէններ կը ցուցադրէ, ինչ որ շատ կարեւոր է, որովհետեւ Պոլսոյ մէջ ոչ մէկ տեղ հայերէն ժապաւէն կը ցուցադրուի: Նպատակ ունինք թուրքերուն ծանօթացնել մեր մշակոյթը, մեր պատմութիւնը, ինչ որ մեզ կը տարբերէ ուրիշ հայկական միութիւններէ: Եւ ի վերջոյ, եթէ մենք չխօսէինք մեր դատին մասին, վախնալով հալածանքներէն եւ հետապնդումներէն, ապա ուրիշներ պիտի խեղաթիւրեն մեր պատմութիւնը: Հետեւաբար, մեր դռները բաց են մեր գրականութենէն օգտուիլ փափաքողներուն համար, որոնք կը փափաքին ծանօթանալ մեր տեսակէտներու եւ մեր ներկայացուցած պատմութեան: Ի վերջոյ, եթէ հայեր 100 տարիէ ի վեր համոզուած են որ թուրքն է ջարդարարը եւ ցեղասպանը, Թուր քիոյ նոր եւ անցնող սերունդներն ալ խորապէս համոզուած են որ հայերը ջարդած են թուրքեր եւ դաւաճանած Օսմանեան կայսրութեան: Անոնք այսպէս դաստիարակուած են եւ կը հաւատան իրենց սորված պատմութեան: Այս գծով դժուար է փոխել սերունդներու ամբողջ մտածելակերպ մը, սակայն կայ նաեւ մտաւորական դասակարգ մը որ իսկապէս պրպտելով պատմութիւնը, բացայայտեց իրականութիւնը եւ նոյնիսկ ձեռնարկեց հայ ժողովուրդէն ներողութիւն խնդրելու արշաւի:*

Հ. Իսկ ո՞վ հիմնած է «Նոր Զարթօնք» կազմակերպութիւնը:

*Պ. «Նոր Զարթօնք»ը հիմնուած է 2004ին՝ email-ով միացած խումբ մը երիտասարդներու կողմէ: Գիտէք մեր բոլոր նոր սերունդը շատ սերտ կապեր ունի համացանցի հետ եւ ասիկա մեր հզօրագոյն առաւելութիւնը ըլլալով կը գործածենք ի նպաստ մեր շարժման: Այս շարժումը հիմնեցինք, որովհետեւ շատ հարցեր ունէինք, որոնց մասին պէտք է բարձրաձայնէինք եւ մտաւորական մակարդակի վրայ արծարծէինք այս հարցերը, յատկապէս նկատի առնելով որ մենք պահպանողական շրջանակի մէջ կը գտնուինք եւ այսպիսի հարցեր քննարկելու համար պոլսահայ շրջանակը պատրաստ չէր: Սակայն աւելի ուշ նկատեցինք, որ միայն համացանցային խումբ մը ըլլալը բաւարար չէ, այլեւ մենք պէտք է իրարու մօտ գայինք, համախմբուէինք ֆիզիքապէս ալ, որպէսզի գործնական գետնի վրայ ալ շարժում ծաւալէինք, սակայն այն ժամանակաշրջանին մղիչ ուժ կամ դրդապատճառ չունէինք: Հայոց Ցեղասպանութեան 90-ամեակը լաւ առիթ էր գետնի վրայ շարժում ստեղծելու եւ մենք Հրանդ Տինքի եւ պոլսահայ մտաւորականներու հետ զանազան բանախօսութիւններ կազմակերպեցինք թրքական համալսարաններու մէջ՝ Ցեղասպանութեան եւ հայ մշակոյթի մասին:*

*Հրանդ Տինքի ահաբեկումը դժբախտաբար, եղաւ մեր գործունէութեան շղթայազերծման գլխաւոր մղիչ ուժը: Համբերութեան բաժակը այլեւս յորդած էր եւ ժողովուրդը միացաւ մեզի ու մեր ձայնը բարձրացուցինք անարդարութիւններու դէմ: Ճիշդ է «Նոր Զարթօնք»ը հիմնադրուած էր մեծամասնութեամբ հայ երիտասարդներու կողմէ, սակայն մենք չենք զբաղիր միայն հայութեան հետաքրքրող հարցերով. մեր գործունէութեան ծիրէն ներս կ'իյնան նաեւ Թուրքիոյ ժողովրդավարական իրավիճակը, դասակարգային հարցերը, կիներու եւ միասեռականներու իրաւունքներուն, բնապահպանման եւ այլ նիւթերու, ներառեալ gerontocracyի հարցերը, ուր ընկերութիւն մը կը տիրապետուի միայն տարեցներու կողմէ, որոնք առիթը չեն տար երիտասարդներուն արտայայտուելու կամ աշխատելու իրենց մտահայեցողութեամբ:*

*Այժմ մենք կը մասնակցինք Ցեղասպանութեան ճանաչման ի նպաստ ցոյցերուն, Հրանդ Տինքի եւ զինուորական ծառայութեան ընթացքին, սոյզ Ապրիլ 24ին սպաննուած Սեւակ Պալըքչըի դատերու արդարացի լուծման ի խնդիր կազմակերպուող երթերուն, կանանց վրայ բռնութիւններ գործադրողներու եւ յատկապէս Սամաթիոյ մէջ բռնութեամբ սպաննուած տարեց հայ կնոջ՝ Մարիցա Քիւչիւքի յիշատակին բազմամարդ երթերուն, որոնց ոչ միայն հայերը կը մասնակցին, այլեւ մեզի կ'աջակցին միւս համայնքներէն: Մենք Թուրքիոյ «Ազգերու ժողովրդավարութիւն» կուսակցութեան, սոցիալիստներու կողմէ հիմնադրուած HDPի անդամ ենք: Մեզի կը կոչեն սոցիալիստ հայեր: Սակայն մենք բոլորին՝ քաղաքական շրջանակներուն թէ ապահովական մարմիններուն սորվեցուցած ենք զէթ երկու բառ՝ «Նոր Զարթօնք»:*



*Պէտք է նաեւ ազնիւ ըլլանք եւ խոստովանինք որ Հրանդ Տինքի սպանութենէն ետք ինչպէս կ'ըսէ ասացուածքը՝ «Հովը մեր կռնակէն կը փչէ» հետեւաբար մեզի կը մնայ միայն առագաստները բանալ եւ սլանալ:*

Հ. Խօսեցաք հրատարակութիւններու մասին, որոնցմէ յատկանշական է Հնչակեան Քսան կախաղաններէն Փարամազին նուիրուած հատորը: Կարելի՞ է մանրամասնել:

*Պ. Փարամազին նուիրուած այս հատորը գրած է Քատըր Աքըն, որ հիմնադիրներէն մէկն է HDPի: Ան միայն վերջերս սկսած էր հետաքրքրուիլ Փարամազով, այսինքն՝ հազիւ երկու տարի:*

*2007ին՝ երբ «Նոր Զարթօնք» շարժումը հիմնադրուեցաւ, թուրք ձախակողմեան շարժումներուն դիմելով անոնց նկատել տուինք որ սոցիալիստական եւ յեղափոխական գաղափարները Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցած են 1920էն կամ Քեմալիզմէն շատ առաջ: Ճի՛շդ է, մենք Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան անդամ չենք, սակայն մեր ապրած հողերուն վրայ սոցիալիզմի առաջին քայլերը նետողները մեր մշակոյթի մէկ անբաժան բաղկացուցիչն են եւ Փարամազն ու Քսան կախաղանները մեր, սոցիալիստներու եւ աշխարհի համայն յեղափոխականներու հերոսներն են, հետեւաբար մենք անոնց գաղափարախօսութեան ջահակիրներն ենք, եւ անոր համար ալ անոր նահատակութիւնը կ'ոգեկոչենք ամէն տարի: Մեզ կը համախմբէ Փարամազներու եւ Քսաններու գաղափարները, մտածելակերպը, պայքարը, աշխարհամտածելակերպը:*

Շար.ը էջ 18

Կազմակերպութեամբ
ԿԼԷՆՏԷՅԼԻ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ
Կիրակի, Մայիս 3, 2015
Առաւօտեան ժամը 10:30-էն սկսեալ
Կարօ եւ Անի Պեքարեաններուն բնակարան մէջ
3013 Emerald Isle Dr., Glendale, CA 91206
Մուտքի Նուէր՝ $25
Տոմսերու համար դիմել՝
(818) 913-9311 • (818) 284-2155

# Massis Weekly

Volume 35, No. 15 Saturday, May 2, 2015


## World Leaders Join Armenians in Genocide Centennial Commemoration



YEREVAN — Tens of thousands of people marched to the Tsitsernakabert memorial in Yerevan on Friday April 24 to pay their respects to some 1.5 million Armenians who were massacred by the Ottoman Turks 100 years ago in the first genocide of the 20th century.

In what has been an annual ritual in Armenia for almost 50 years, they laid flowers by the hilltop memorial's eternal fire surrounded by 12 inward-bending columns symbolizing Armenian-populated provinces of the Ottoman Empire.

The daylong procession began amid heavy rain after an official ceremony during which Armenia's political and spiritual leaders as well as dozens of foreign dignitaries marked the 100th anniversary of the start of the genocide.

The heads of the visiting delegations walked to the memorial one by one, escorted by Armenian schoolgirls holding the national flags of their respective countries. Each foreign leader then put a yellow rose into a wreath shaped as a forget-me-not flower, the official emblem of the commemorations of the genocide centennial.

"The western part of the Armenian people, who had for millenniums lived in their homeland, in the cradle of their civilization, were displaced and annihilated under a state-devised plan with direct participation of the army, police, other state institutions, and gangs comprising criminals released from the prisons specifically for this purpose," President Serzh Sarkisian said in a speech at Tsitsernakabert.

In his speech, Sarkisian similarly denounced Turkey's continuing claims

**Continued on page 4**

## Erdogan Lashes out at World Leaders for Recognizing Armenian Genocide

ISTANBUL — Turkish President Recep Tayyip Erdogan on Saturday lashed out at the European Union and world leaders who have recognized the 1915 massacres of Armenians as genocide on the centenary of the events.

Erdogan accused the leaders of France, Germany and Russia of "supporting claims based on Armenian lies".

Erdogan also accused the United States of siding with Armenia despite the fact that US President Barack Obama stopped short of calling the killings as "genocide" and instead used the Armenian term Medz Yeghern (great catastrophe) for the World War I killings.

"The last countries to speak of genocide are Germany, Russia and France. What happened during the two world wars that had been initiated by Germany in the past century is before our eyes," Erdogan was quoted by Turkey's state-run Anadolu news agency as saying on Saturday.

"First, they (Germany, Russia and France) must, one by one, clean the stains on their own histories," he added.

During commemoration ceremonies in Armenia on Friday, French President Francois Hollande and Russian President Vladimir Putin urged modern-day Turkey to recognise the massacre as genocide.

"We would have wished that Putin had not gone to Armenia, nor Mr Hollande" Erdogan told a meeting of businessmen in Istanbul in comments broadcast by Turkish television.

Erdogan went on to accuse the EU — whose parliament voted to call the events a genocide on April 15 — of "not telling the truth" and said: "Hey European Union! Don't offer us any thoughts, keep them to yourself."

"They have ears that do not hear, eyes that do not see, and tongues that do not speak the truth."

"Have no concern, should there be a situation where the incidents of the past were accounted for today, Turkey would be the most comfortable on this aspect."

## 130,000 March in Los Angeles to Commemorate Armenian Genocide




LOS ANGELES – In an unprecedented show of support for the centennial commemoration of the Armenian Genocide, over 130 thousand community leaders, religious figures, elected officials and activists took to the streets of Little Armenia on April 24th to march for justice for the martyred souls who perished at the hands of the Ottoman government during World War I.

Throngs joined Friday's six-mile walk from the Little Armenia neighborhood to the Turkish Consulate, carrying flags and signs voicing their common and persistent call for the Turkish government to recognize the deaths of more than 1.5 million Armenians as genocide. Many of the signs voiced forceful messages: "We Demand Justice" and "Turkey Must Pay." The march is said to have been the largest in the history of protests in Los Angeles joined by politicians at the federal, state and local level.

The event began with an unveiling ceremony of the "Armenian Genocide Memorial Square" sign adorning the busy intersection of Hollywood Boulevard and Western Avenue. The erection of the signs, spearheaded by Los Angeles City Councilmember Mitch O'Farrell with the participation of the Consul General of RA in Los Angeles Sergey Sargisov, drew thousands of onlookers while Federal, State and local political leaders hailed the sign as an important and significant step towards recognition of the Armenian Genocide.

Councilmember O'Farrell stated that the marker will show that the city of Los Angeles recognizes the history of the Armenian Genocide, emphasizing the impact of the event on the Armenian community.

"One hundred years ago, the Ottoman Empire attempted to annihilate an entire race in the first genocide of the last century," said Congressman Adam Schiff. "When it was over, 1.5 million Armenian men, women and children lay dead and many thousands of others barely survived. Despite a brutal campaign of massacres, forced death marches, lootings and rape, the Young Turks failed to destroy the Armenian people as evidenced by the vibrant diaspora and Armenian nation."

Immediately following the unveiling ceremony was the Armenian Genocide Commemoration Committee of Western US — a coalition of 19 community organizations, organized a march which began with an invocation by H.E. Archbishop Hovnan Derderian of the Western Diocese of the Armenian Church, Moushegh Mardirossian of the Western Prelacy, H.E. Mgr. Michael Mouradian, Bishop of Armenian Catholics of North America, and Rev. Joe Matossian. The event featured speakers including LA Mayor Eric Garcetti, Consul General Sergey Sargisov, State Senator Kevin De Leon and Councilmember Mitch O'Farrell, whose Armenian language speech invigorated the audience made up of young and old Armenians and non-Armenians.

Elected officials at the Federal, State and local levels listened to the speeches as they gazed at the myriad of audience members holding signs in support of recognition, restitution and reparations for descendants and victims of the Armenian Genocide. Among those in attendance were Congressmembers Adam Schiff and Judy Chu, State Assemblymembers Mike Gatto, Scott Wilk, Mike Gipson and Adrin Nazarian, State Controller

**Continued on page 4**

# Armenian Genocide Commemorations in Istanbul



ISTANBUL — Commemoration events organised by Turkish and international human rights groups, took place on April 24 in Istanbul to mark the centenary of the Armenian genocide during which more than 1.5 million Armenians were killed.

On the "Walk to Remember" through the district of Sultanahmet. marchers carried posters that read: "Recognise the Genocide". Some held red carnations or violet crocuses, a stand-in for the purple forget-me-nots that symbolise the centenary elsewhere.

Later on Friday, a rally was held in Istanbul's Taksim Square. The ceremony was attended by an unprecedented number of people, mostly Diaspora Armenians, Kurds and Turks.

The Kurdish People's Democratic Party (HDP) Sisli district headquarters and Youth Coordination of Istanbul staged a march on April 23 commemorating the genocide. They visited the houses of some of the Armenian intellectuals who marched to death on April 24, 1915 and laid flowers there.

The participants carried banners with the inscription "Together – 1915-2015" and "Confront the Genocide," as well as photos of Armenian intellectuals.

Holy mass in memory of the victims was held at the Istanbul Armenian Patriarchal Church. Led by Deputy Patriarch Aram Atesyan, the ceremony was also attended by Turkey's EU Minister Volkan Bozkir. President Erdogan's message was also read at the ceremony where white doves symbolizing peace were released and bells were rung 100 times.

In a statement to the press at the entrance of the church, Minister Bozkir said he was greatly honored to take part in the mass led by Armenian Deputy Patriarch Aram Atesyan, adding, "This is the first mass to be held officially since 1916. A representative of the Turkish government is taking part in such a ceremony for the first time".

# Armenian Genocide Commemoration in Lebanon



BEIRUT — Tens of thousands of Lebanese of Armenian origins marched in the suburbs of Beirut Friday, commemorating the 100th anniversary of the Armenian genocide and vowing never to forget the atrocities committed against their ancestors by the Ottoman Empire. Carrying Armenian flags and pictures of the violet forget-me-not flower, the symbol of the centennial, marchers of all ages trekked south from the Armenian Catholicosate of the Great House of Cilicia in Antelias to national football stadium in Burj Hammoud.

Ahead of the protest, Prime Minister Tammam Salam telephoned the head of the Catholicosate of the Great House of Cilicia, Aram I, to express sympathy with Armenians.

Salam appreciated the role that Armenian confessions have played in Lebanon to consolidate the country's unity.

# Thousands Rally in Times Square to Mark Centennial of Armenian Genocide




NEW YORK (RFE/RL) –Thousands of people rallied in New York on April 26 to demand the U.S. government recognize the deaths of up to 1.5 million Armenians during World War I as genocide.

The rally marked the centennial of the killings under the Ottoman Empire — today's Turkey.

Addressing the crowd in Times Square, Senator Charles Schumer (Democrat – New York) said, "I stand with you in making sure the deniers are not given any place under the sun."

Speakers included several Jewish leaders as well as Taner Akcam, a Turkish-born scholar who supports the Armenian cause as a professor at Clark University, in Worcester, Massachusetts.

"It is very troubling to see that the United States has still not recognized the Armenian genocide," he said, adding that the justification is the crucial role of Turkey in U.S. security strategy.

Rabbi Steven Burg, the Eastern Director of the Simon Wiesenthal Center, said Rafael Lemkin, a Polish-born Jew, coined the term genocide after World War II — convincing the world to view the Holocaust as a crime against humanity.

"He started his quest because of the Armenian genocide," the rabbi said.

Lemkin recognized that the Armenian genocide was the first in the 20th century, Burg said.

And his definition served as the basis for the UN Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, adopted in 1948.

# Cilician See Files Lawsuit to Reclaim Sis Catholicosate from Turkey

ANTELIAS, LEBANON — On Tuesday 28 April 2015, an attorney of the Catholicosate of Cilicia submitted a brief to the Constitutional Court in Turkey, requesting the return of its Centre in Sis (Kozan), the Secretariat of the Catholicosate of Cilicia informs.

Convinced that recognition of the Genocide and compensation should go together, His Holiness Aram I, on the year of the 100th anniversary commemoration of the Armenian Genocide of 1915, has filed a lawsuit at the Turkish Constitutional Court for the return of the Spiritual Centre of the Catholicosate in Sis. In initiating this effort, His Holiness is setting a precedent for the descendants of the martyrs to reclaim their family belongings.

Since 2012, His Holiness Aram I has presided over a committee of Turkish and international human rights lawyers, preparing the current litigation. The committee will explain the lawsuit through two press conferences. The first will be held on Wednesday 29 April in Washington DC and the second soon after in Geneva.

The Catholicosate of Cilicia settled in Sis, the former capital of the Cilician Kindgom, in1295, after moving from several places due to the political uncertainties in the region. In 1921, following the 1915 Genocide, the Ottoman authorities ordered Catholicos Sahak II Khabayan and the clergy to vacate the location within two days. The Catholicos and the clergy left the monastery in Sis, taking with them very few objects, such as the basin pot for the preparation of the holy muron, some manuscripts and liturgical items. After moving between Jerusalem, Aleppo, Damascus and Cyprus, in 1930 the Catholicosate settled in Antelias.

## Armenian Genocide Monument Unveiled in Fresno



FRESNO -- With the tricolors red, blue, and orange illuminating its pillars against the evening sky, Fresno's Genocide Centennial Monument was christened before a crowd of more than 4,000 people at Fresno State's Maple Mall on April 23.

Since the early 1880s when the Seropian brothers first arrived from their native Marsovan in Western Armenia, successive waves of Armenian immigrants from the corners of the world have made the Central San Joaquin Valley and Fresno in particular their new home. The much anticipated ribbon cutting ceremony brought together the valley's Armenian community-both young and old, established as well as newly arrived families -for the historic unveiling of a monument dedicated to the victims and survivors of the Armenian Genocide.

Along with the university's commitment to diversity, the monument was made possible by the financial support of numerous patrons as well as the broader community. The Armenian Genocide Centennial-Fresno Committee, which comprises representatives from the valley's various Armenian organizations, coordinated construction of the monument and has promoted more than 30 other centennial events in the past several months.

As with many of the worldwide activities that marked this year's commemoration, the theme of justice resonated throughout the program, including a call to the governments of the United States and Republic of Turkey to recognize this crime against humanity.

Patterned after the Genocide Monument Dzidzernagapert in Yerevan, Fresno's monument embodies symbols of cultural meaning. The broken halo that crowns the structure signifies the fracture left by the Genocide as well as the unity of the Armenian people. Beneath the halo stand nine pillars-made of concrete and imported tufa stone-representing the six historical provinces of Western Armenia, the region of Cilicia, the Armenian Diaspora, and the Republic of Armenia.

## Louisiana Armenians Commemorated The Genocide Centennial



BATON ROUGE -- Sunday, April 19, 2015 was a memorable day for the small but vibrant Louisiana Armenian community. More than hundred people were gathered at the St. Garabed Armenian Church in Baton Rouge, where Divine Liturgy and Requiem Service (Hokehankist) was offered by Rev. Father Tatios Abdalian, in memory of the 1.5 million Armenians who perished at the hands of the Turkish government.

The church service was covered by the local ABC station.

Following the church services, food (Hokejash) was served in memory of the genocide victims.

Afterwards, commemoration event was held at the Church hall. Opening remarks were delivered by St. Garabed Parish Council Chairman, Mr. Vazken Kaltakjian, who acknowledged the presence of community members from New Orleans, other parts of the state and even from Alabama, who had to drive for hours, to attend this event.

Church Choir member, Mrs. Azadouhi Moutafian recited a poem titled "We Protest" by Hovhannes Shiraz.

The event's guest speaker was Mr. Krikor Khodanian from Los Angeles. He talked about the progress which was made during the past fifty years, to achieve the recognition of the Armenian Genocide. He reminded the audience that there was a time when the Armenian Genocide was known as the "Forgotten Genocide". "During the years since then, we have been able to bring the recognition to a level where it can no longer be ignored by the civilized world."

During his closing remarks, Father Abdalian emphasized the importance and the meaning of the canonization of our martyrs as saints of the Armenian Church. Father Abdalian stated that each one in attendance has lost a loved one or a relative during the massacres, and as such, each one will become a descendant of a saint.

In conclusion, special thanks and appreciation was given to Tamar Gregorian, who was the organizer and the driving force behind the success of, not only this event, but the public relations campaign, which was launched to bring the issue of the Armenian Genocide to the attention of the local and state politicians, the media and the American public.

Following the commemoration event, the attendees walked to the Armenian Cemetery adjacent to the church, where a wreath was placed at the Armenian Martyrs' Khatch Kar.

## Armenian Community in Las Vegas Pays Homage to Genocide Centennial



LAS VEGAS – One hundred rings chimed to mark the centennial of the Armenian Genocide during a somber commemoration ceremony on April 23rd at the Armenian Apostolic Church of Las Vegas.

After the prayer service, Father Narek Maderian declared, during the candlelight vigil, that the 1.5 million martyrs who perished during the Genocide are now saints. Among those present at the event, were Honorary Consul for the Republic of Armenia, Andy Armenian, SDHP Executive Board member Garry Sinanian, and SDHP Las Vegas chapter member George Hagopian.

On April 24th, the Armenian American Cultural Society of Las Vegas (AACS), Clark County commissioners and other community leaders presided over the groundbreaking ceremony for the Las Vegas Armenian Genocide Memorial Monument at Sunset Park. The projected date of completion for the monument is in September, it will coincide with the Republic of Armenia's Independence Day.

Serving as the keynote speaker, Honorary Consul Andy Armenian, discussed the history of Armenian-Americans residing in the Las Vegas community throughout the years and thanked those responsible in that region for memorializing an important chapter of world history.

"On the centennial of the Armenian Genocide where Armenian survivors were scattered to countries all around the world, we would like to remember the 1.5 million victims who were killed 100 years ago and at the same time thank America and the State of Nevada for providing us an opportunity for a new beginning," said Armenian. "Today the Armenian-American community in Las Vegas is donating this memorial monument at Sunset Park to the people of Southern Nevada so new generations remember the tragic history in order not to repeat such terrible deeds in the future."

"The Armenian community is funding this project's design, construction and upkeep," said Commissioner Scow. "But the entire Las Vegas community benefits, because this monument will allow our citizens to come to know and learn about this very sordid and shocking chapter in world history. I'm happy to support this endeavor and look forward to the monument's completion."

"I applaud the Armenian community for bringing this project to fruition and Clark County is proud to lend its support," said Commissioner Sisolak. "The unspeakable acts endured by the Armenian people must never be forgotten. This memorial will help ensure that happens and assist in educating future generations."

"Las Vegas is home to over 20,000 Armenian, said Mr. Sinanian. "This is a great way for the community to come together to reflect on and honor those who perished during the Armenian Genocide." Mr. Hagopian echoed Sinanian's sentiments and added, "it is important that all the organizations in the community come together to work together to have a monument that is suited for the entire community."

# "iwitness" Interactive Public Art Display Unveiled at Grand Park in Los Angeles



LOS ANGELES — On Saturday April 25th, Los Angeles County Mayor Michael Antonovich unveiled a month-long interactive public art display at Grand Park to commemorate the centennial of the Armenian Genocide through public art.

Conceived by artists Ara Oshagan, Levon Parian and architect Vahagn Thomasian, "iwitness" incorporates photography and architecture to educate and inform a new generation about the Genocide. The display consists of massive portraits of eyewitness survivors telling the story from the frontlines — people who were there — most of whom are Southern California residents who immigrated here to reestablish their lives.

"This remarkable memorial honors the 1.5 million victims of the Armenian Genocide and tells the personal stories of survivors — first-hand eyewitnesses to one of the worst atrocities of the 20th century," said LA County Mayor Antonovich.

"iwitness is a temporary monument to the men and women who rebuilt their disrupted lives and communities in the aftermath of genocide," said artist Ara Oshagan. "The proximity and clustering of the sculptures alludes to, and reflects, the new communities they created after being dispersed across the globe."

The installation offers a continually shifting perspective during the day, as shadows cast by sunlight create a dynamic interplay between the asymmetrical lines, shapes and forms of the sculptures. At night, a different atmosphere and environment is created as each sculpture in the network is illuminated from the inside.

To educate and promote discourse, audiences at iwitness walk amid these larger-than-life sculptures to reflect on its message and the Turkish government's continued denial of the Armenian Genocide.

For the next 30 days, school children and other visitors to this remarkable memorial will hear the personal stories of the survivors.

# Two Turkish Dailies Published with Armenian Headlines on April 24

ISTANBUL (Agos) — Today's issues of the daily Cumhuriyet and Özgür Gündem newspapers have been published with Armenian headlines .

Cumhuriyet chose ?????? ????? (Never Again) as its headline, while Özgür Gündem featured the words ???, ??????, ?????????? (See, Hear, Confront).




In its headline on April 24, 2015, the 100th Anniversary of the Armenian Genocide, Cumhuriyet featured the words "Never Again" in Armenian, preceded by a heading stating, 'We mourn the shared pain of these lands suffered 100 years ago'. The piece went on to state "The pain of the disaster that took place during the time of the Ottoman Empire remains fresh. It is time to confront this wound which paralyzes the mind, the conscience, and the sense of right and justice; so it happens never again!".

Özgür Gündem, on the other hand, also commemorated the Assyrian Genocide, Seyfo, stating, "In the planned genocide carried out by the state in 1915, 1,5 million Armenians and 500 thousand Assyrians were deported and massacred. The wound remains open… The AKP government claims the genocide as its own by denying it, while peoples say, 'recognize, confront and apologize'."

# World Leaders Join Armenians in Genocide Centennial Commemoration

Continued from page 1

that Ottoman Armenians died in smaller numbers and not as a result of a premeditated government policy. "As Pope Francis rightly pointed out [on April 12,] 'Concealing or denying evil is like allowing a wound to keep bleeding without bandaging it,'" he said.

Sarkisian went on to thank foreign nations and various international bodies that have officially recognized the Armenian massacres as genocide. The Armenian leader further praised scores of Turks who were due to gather in Istanbul later in the day to commemorate the genocide victims. "They are strong people who are doing the right thing for their homeland," he said.

The 3-hour ceremony also involved speeches by the visiting presidents of Cyprus, France, Russia and Serbia and a prayer service led by Catholicos Karegin II, the supreme head of the Armenian Apostolic Church.

Both Putin and Hollande emphasized the fact that the Russian Empire, France and Britain jointly condemned the mass killings and deportations of Armenians as a "crime against humanity" in May 1915, one month after they were ordered by the rulers of the Ottoman Empire.

The official ceremony ended with an address by Esther Mujawayo, a prominent survivor of the 1994 genocide in Rwanda.

Mujawayo read out the forum's concluding declaration that calls on the outside world to ensure a greater international recognition of the Armenia genocide and condemns its denial by Turkey. The declaration also calls for a worldwide "strengthening of genocide prevention mechanisms."


# Jobs for International Medical Graduates (IMG,FMG) and US Medical Grads

Entry level positions with acute care hospitals are available at some of our hospitals in California, Kansas, Indiana, Nevada, Pennsylvania, Texas, Rhode Island, and New Jersey. This is a suitable opportunity for those seeking a career in hospital/healthcare management.

**Job Description:**

The position (entry level) will introduce you to operations of acute care facility where your medical background could be applied (but, does not involve direct patient care). Projects may include concurrent and retrospective chart reviews for clinical documentation, or tasks involving medical coding, clinical performance improvement, infection control, case management, etc. Selected candidates will be offered per diem positions assigned to projects which will introduce you to foundations for long-term careers at the hospitals. Those candidates with high aptitude and satisfactory performance may be considered for full-time employment based on availability.

**Qualifications:**

• Must be a medical school graduate that successfully completed the program (do not need to be licensed in US).
• Experience in acute care settings is preferred.
• The position requires assertive personality with strong written and verbal communication skills.
• Candidates with post-graduate education in related field, including public health, are preferred.

To officially apply and be considered for open positions please go to www.primehealthcare.com/careers and apply to the Coder Auditor Trainee position.

We are an Equal Opportunity Employer and do not discriminate against applicants due to veteran status, disability, race, gender, or other protected characteristics.

• Location: CA, KS, IN, NJ, NV, PA, RI, TX, M
• Compensation: DOE
• Principals only. Recruiters, please don't contact this job poster.
• Please, no phone calls about this job!
• Please do not contact job poster about other services, products or commercial interests.


# 130,000 March in Los Angeles to Commemorate Armenian Genocide

Continued from page 1

Betty Yee, LA County Mayor Michael Antonovich, LA County Assessor Jeffrey Prang, LA City Councilmembers Felipe Fuentes, Nury Martinez, Paul Koretz and Paul Krekorian, LA City Attorney Mike Feuer and many others.

The march proceeded towards the Turkish Consulate in Los Angeles where Los Angeles City Councilmember Krekorian addressed the 130 thousand strong and described the story of his grandmother and her brother, a professor in Turkey who was arrested, tortured, and killed by the Turkish government at the start of the Armenian Genocide. Krekorian condemned President Obama's decision to once again refuse to utilize the word Genocide. "Presidents come and go," he said. "Congressmen come and go. But the truth remains."

Los Angeles City Councilmember Paul Koretz, addressed the crowd and expressed his his heartfelt connection to the Armenian people's struggle for justice for the genocide of their people. "As a Jew, I know of many loved ones who were lost to the Holocaust, which may have happened because the Armenian Genocide was ignored," he said.

Representative Adam Schiff, who earlier this week read out the names of one thousand Genocide victims on the House floor, called on Turkey to recognize the crimes of it predecessors and "help heal the wounds." Rep. Schiff also condemned President Obama for his failure to recognize the Genocide. Schiff said: "To be honest, it would have been better if the President said nothing at all."

Also speaking at the rally were co-chairs of the AGCC, AGBU chairwoman Talin Yacoubian and former chairman of the Armenian Bar Association Garo Ghazarian, who asked all representatives of the 19 organizations which comprise the AGCC to join them and renowned Armenian singer Harout Pamboukjian on stage as they sang Armenia's national anthem.

# ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ ՀԱՄՈԶՈՒԱԾ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ

***ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ***




Հայրենիքի ազատագրութեան բանակին համոզուած զինուորները՝ եղան հայ ժողովուրդի յեղափոխութեան գաղափարի սերմնացաններէն, որոնք իրենց կեանքի ամբողջական նուիրումով ազատագրական պայքարի դաշտին մէջ ակօսներ բացին, ուր ծիլեր արձակեցին եւ պատրաստուեցան յաջորդող սերունդի յեղափոխականները: Բոլորիս ծանօթ է որ յեղափոխութիւնը յանկարծակի չպայթեցաւ: Անիկա արդիւնքն էր աւելի քան կէս դարու գաղափարական խմորումին, որուն մէջ կարեւոր դեր ունեցան Ֆրանսական յեղափոխութենէն ներշնչուած մեր զարգացած, ուսումնատենչ նոր սերունդի զաւակները: Այդ յեղափոխութեան իտէալներով տոգորուած սերունդը իր արեան գնով պաշտպանեց հայուն իրաւունքն ու պատիւը:

**Դոկտ. Աբէլ Քհնյ. Մանուկեան**

*Ահաւասիկ այս պատուաբեր ազգային գործօնքի սերունդին ռահվիրաները եղան. Խաչատուր Աբովեան, որ իր «Վէրք Հայաստանի» վէպով սերմանեց յեղափոխութեան այն գաղափարը՝ թէ միայն զէնքի ուժով կարելի է պաշտպանել հայուն պատիւն ու իրաւունքը, Խրիմեան Հայրիկ՝ 19րդ դարու հայ իրականութեան ամենէն տիրական դէմքերէն, Պերլինի վեհաժողովէն ստացած իր յուսախաբութենէն ետք, իր բողոքի ձայնը բարձրացուց եւ իր «երկաթէ շերեփ»ի անփոխարինելի պատգամով բացայայտ կոչ մը ըրաւ իր ժողովուրդին որ իր փրկութիւնը յեղափոխութեան եւ զէնքի մէջ պէտք է փնտռել, Ռափայէլ Պատկանեան, որ թէեւ ողբաց իր ժողովուրդի թշուառ վիճակը, սակայն եւ այնպէս յեղափոխական ոգի ներշնչեց իր «Հիմի էլ լռե՞նք» արձակ բանաստեղծութեամբ, Միքայէլ Նալբանդեան, Րաֆֆի, Մկրտիչ Փորթուգալեան, Արփիար Արփիարեան, եւ տակաւին շատեր, որոնք 19րդ դարու վերջերուն հայ երիտասարդութեան գաղափարական խմորումին մշակները դարձան: Ահաւասիկ այս մշակներն էին որ զարկ տուին հայ յեղափոխական շարժման, որուն յաջորդեցին 1860-1885 թուականներուն տեղի ունեցած Սասունի զինեալ դիմադրութիւնները, ինչպէս նաեւ 1862-ի եւ 1877-1878 Զէյթունի ապստամբութիւնները:*

*Անուրանալի է նաեւ, այս բոլորին մէջ, դերը հայ մամուլին որ անդադրում պարսաւեց Նամանաւանդ գաւառներու մէջ հայերու դէմ կատարուած անմարդկային բռնութիւնները, կողոպուտն ու անողոք սպանդը: Ահաւասիկ այս բոլոր հանգրուաններէն անցնելէ ետք, դէմ յանդիման կու գանք կազմակերպուած յեղափոխական աշխատանքի, որուն մէջ իր արժանաւոր վաստակը ունի Հնչակեան կուսակցութիւնը որ հիմնուեցաւ 1887-ին Ժընեւի մէջ: Թէեւ բազում են վկայութիւնները Հնչակեան Կուսակցութեան գործունէութեան մասին, սակայն եւ այնպէս այդ բոլորի կողքին՝ Արժանապատիւ Տէր Աբէլ Քահանան, իր բանասիրական ներհուն աշխատանքով, կու գայ ամբողջացնելու շարքը արժէքաւոր ուսումնասիրութիւններուն, որոնք կը ներբողեն Հնչակեան Կուսակցութեան բոլոր հայրենանուէր գործունէութիւնները:*

*Գրքին մասին խօսելէ առաջ, հակիրճ կերպով կ'ուզեմ ներկայացնել բազմավաստակ, բազմատաղանդ եւ ներհայեցող հոգեւորականը, որ իր ներշնչումը ստանալէ ետք Էջմիածնի Ս. Խորանէն, չի դադրիր յեղափոխական ըլլալէ՝ իր բացայայտ արտայայտութիւններուն եւ գրութիւններուն մէջ: Բոլորիդ ծանօթ է իր յեղափոխական նկարագիրը, որուն մասին կ'արժէ այլ առիթով անդրադառնալ: Ահաւասիկ այդ յեղափոխականի ոգին է, որ մղեց զինք, մտնելու զուիցերիական փոշոտած արխիւներու մէջ, երեւան հանելու համար որոշ իրողութիւններ, որոնք վրիպած էին պատմագէտներու հայեցողութենէն: Արժանապատիւ Տէր Աբէլ Քահանայ Մանուկեան, աւազանի անունով Հրաչ, ծնած է Լիբանան, ուր եւ ստացած է իր նախնական կրթութիւնը Նոր Հաճընի Սահակ-Մեսրոպեան Վարժարանին մէջ:*

*Մանուկ հասակէն յատուկ սէր ունեցած է Հայ Եկեղեցւոյ հանդէպ: Անսալով իր ներքին կոչին, 1973 թ. կը մեկնի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, շարունակելու իր կրթութիւնը հոգեւոր անդաստանէն ներս: Գէորգեան Ճեմարանին մէջ ցոյց կու տայ իր անհուն սէրն ու նուիրումը հոգեւոր ծառայութեան հանդէպ ու ապա, 1980-ին, Վազգէն Կաթողիկոսի ձեռամբ կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ, վերանուանուելով Տ. Աբէլ Աբեղայ: 1980-ին կը մեկնի Վիեննայի Պետական համալսարան: 1984-ին կը ստանայ Աստուածաբանական Գիտութիւններու Մագիստրոսի տիտղոսը, եւ աւելի ետք կը վկայուի Աստուածաբանութեան Դոկտորի կոչումով համալսարանի նոյն կաճառէն:*

*Այնուհետեւ կը ծառայէ Մայր Աթոռէն ներս որպէս «քրիստոնէական քարոզչութեան եւ հաւատքի տարածման կեդրոն»ի տնօրէն: 1992-ին կը նշանակուի Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հովիւ: 1995-ին հովուական նոր պաշտօնով կը մեկնի Ժընեւ եւ անսակարկ մեծ նուիրումով կը ծառայէ այնտեղ մինչեւ 2012 թուական:*

*Բոլոր անոնք, որոնք առիթը չեն ունեցած կարդալու այս փոքրիկ ոսկէ մատեանը, որ կը պանծացնէ Հնչակեան Կուսակցութեան վաստակը հայ ժողովուրդի ծառայութեան եւ գոյատեւման պայքարին մէջ, կը թելադրենք որ անյապաղ ընթեռնուն զայն, ներշնչուելու համար յեղափոխական գաղափարախօսութեան գործիչներու հպարտաւիթ ազգանուէր գործունէութենէն: Հեղինակը իր գիրքը բաժնած է երկու մասի: Առաջին բաժնին մէջ կը գտնենք մանրամասնութիւններ թէ ինչպէս Ժընեւի մէջ սաղմնաւորուեցաւ եւ կազմուեցաւ Հնչակեան Կուսակցութիւնը, եւ թէ որո՞նք կարեւոր դեր ունեցան այս յեղափոխական շարժման սկզբնական տարիներուն:*

*Բանասէր հեղինակը, արխիւային իր պրպտումներով, նոր լոյս սփռած է յատկապէս հիմնադիրներու ամէնօրեայ աշխատանքներուն, ինչպէս նաեւ անոնց ունեցած կեցութեան դժուարութիւններու մասին՝ որպէս ուսանող կամ քաղաքական-յեղափոխական գործիչ օտար երկիրներու մէջ: Երկրորդ բաժինը որ կը կրէ «Թարմ Հողակոյտերու առջեւ »խորագիրը, ընթերցողը ո՛չ միայն կը հրապուրէ իր Արեւմտահայ լեզուի տիրապետութեամբ ու պատմելու ոճով, այլեւ ինքնաբերաբար զայն կը խորասուզէ Համիտեան Ջարդերէն մինչեւ Ատանայի Ջարդի տարիներուն մէջ, եւ մինչեւ Մեծ Եղեռն՝ զգալու եւ ճմլուելու ամէն մէկ արհաւիրքի պատմութեան առաջ:*

*Հեղինակը այս երկրորդ բաժնին մէջ յատկապէս կը բարձրացնէ զուիցերիացի ժողովուրդին ցուցաբերած մարդասիրական օգնութիւններու եզակի կեցուածքը: Բողոքի ցոյցեր, ստորագրահաւաքներ, նիւթական հանգանակութիւններ, ինչպէս նաեւ որբանոցներու, դարմանատուներու եւ կրթական օճախներու հիմնարկութիւններ՝ Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ տարածքին:*

*Այս շրջանին, Զուիցերիոյ թերթերուն մէջ կը կարդանք զանազան յօդուածներ՝ Օսմանեան կայսրութեան տնտեսական սնանկութեան եւ քայքայումին մասին: Զուիցերիոյ Ընկերվարական մամուլը լայնօրէն կ'անդրադառնայ երիտթուրքերու յեղաշրջումին 1907-1908 թուականներու պատմութեան: Իսկ «Ֆօլքսրեխթ» թերթը 1909 թուականի իր Ապրիլ 24 թիւով կը հաղորդէ եւ կը նկարագրէ Ատանայի Ջարդին սրտաճմլիկ տեսարանները, եզրակացնելով որ Ատանան ամբողջապէս մոխրացած է եւ կործանած են ամերիկացիներու եւ եւրոպացիներու կողմէ հաստատուած մարդասիրական եւ միսիոնարական բոլոր հաստատութիւնները:*

*Քսան կախաղաններու պատմական եղելութիւնը բոլորիս ծանօթ է, եւ մեր նպատակէն շեղած կ'ըլլանք եթէ աւելի մանրամասն պատմական վերլուծութեան մէջ մտնենք: Սակայն եւ այնպէս շատ հետաքրքրական է յիշատակել այստեղ, թէ «Լա Սանթինէլ» թերթի մէջ տպուած՝ «Ահաբեկչութիւնը Թուրքիայի մէջ» խորագրով յօդուածը լոյս կը սփռէ քսան կախաղաններու ողբերգական իրողութեան եւ Օսմանեան Պետութեան անմարդկային մահավճիռներուն մասին: Նոյնքան հետաքրքրական է՝ սոցիալ-դեմոկրատ յայտնի գործիչ, Անդրկովկասի յեղափոխական ականաւոր դէմքերէն Արշակ Զուրապովի (Զուրապեան) երկարապատում յօդուածը «Թարմ հողակոյտերուն առջեւ» խորագրով: Նոյնքան եւ առաւել ներթափանցող գրութիւն մըն է Ժընեւի վրացի ուսանողներու հեղինակած «Օգնութեան աղաղակ Հայաստանէն» սրտացունց նամակ-յօդուածը, ուղղուած Գերմանիոյ սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան:*

*Եւ վերջապէս, իր արխիւային պրպտումներուն մէջ, հեղինակին ուշադրութեան առարկայ կը դառնայ նաեւ Գերմանիոյ մամուլի էջերուն մէջ տպագրուած յօդուած մը: Հեղինակին բառերով՝ «Այս յօդուածը կարեւոր կը դառնայ առանձնապէս այն հանգամանքով, որ Ա. Համաշխարհային Պատերազմին բերումով, երբ կայսերական Գերմանիոյ մամուլը գրեթէ ամբողջութեամբ կ'ենթարկուէր գրաքննութեան, Գերմանիոյ ամենահեղինակաւոր եւ ազդեցիկ թերթերէն «Տի Քրիսթլիխէ Վելթ»ի մէջ կը կատարուի լայն անդրադարձ մը Հնչակեան Քսան Կախաղաններուն, հայ քաղաքական ընտրանիի ձերբակալութեան եւ մտաւորականութեան ոչնչացման մասին»:*

*Արժանապատիւ Տէր Աբէլ Քահանային վերլուծողական-գիտական այս աշխատանքը արժանի է մեր բոլոր ընթերցողներուս յատուկ գնահատանքին: Զինք կը նկատենք որպէս Հայ մտքի եւ գրիչի ազատագրութեան զինուոր, եւ իրեն կ'ըսենք՝ Պատի՛ւ Արժանաւորին: Այդ պատիւին արժանի է ան ո՛չ միայն իրմէ անբաժան քահանայական արժանապատիւ տիտղոսին համար, այլ որպէս հայ ժողովուրդի մտքի եւ հոգիի արժանապատիւ մշակ:*

*Ցեղասպանութեան 100-ամեակի նախաշեմին, երբ ազգովին կը պատրաստուինք ոգեկոչելու մեր նահատակներու յիշատակը եւ վերանորոգելու մեր պահանջատիրութեան ուխտը, Թուրք պետութիւնը, որ ժառանգորդն է Օսմանեան Պետութեան, տակաւին պաշտօնապէս կը փորձէ արդարացնել իր գործած անմարդկային ոճիրը, որ ուրիշ բան չէր եթէ ոչ կանխամտածուած ցեղասպանութիւն, յայտարարելով թէ հայութեան տեղահանութիւնը պատերազմական գործողութիւններու անհրաժեշտութենէն կը բխէր: Թրքական պետական լրատուութեան այս քարոզարշաւը տապալելու համար, պարտինք պատրաստել ղեկավարութիւն մը որ կրնայ մեր բոլոր փայփայած յոյսերը իրականացնել մտաւորական, գիտական նոր սերունդի պատրաստութեամբ:*



# ԲԱԶՄԱՀԱԶԱ՞Ր ԲՈՂՈՔՈՂՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԻՒՆ

**Ռ. ԿՈՐԻՒՆ**

Հարիւրամեակի ոգեկոչման օրն էր՝ Ապրիլ 24, 2015 թիւ, երեք հոգով՝ ես, Երեմը եւ իր երիտասարդ Էդմոնդ տղան միացանք քայլարշաւին՝ Փոքրիկ Հայաստանում (Little Armenia): Երկինքը ամպոտ էր, ամբողջ օրը մնաց տխուր, սակայն մեր սրտերը եռանդով եւ յոյսով առ լեցուն մեր ձայնը միացնելու յանուր հայութեան ձայնին, միահամուռ ու միակամ կոչէինք՝ արդարութիւն հայոց դատին, ցեղասպանի դատապարտում եւ...

Խառնուեցինք ներկայ ժողովրդի հետ բեմահարթակին կից: Մեծադիր բեմահարթակ, երթեւեկութիւնը դադարեցուած Sunset կենտրոնական պողոտայի մէջտեղում, երիտասարդական կազմակերպութեան շտապի կենտրոնատեղի, երիտասարդ գործիչների կենսունակութիւնը ոգեւորիչ էր: Այդ միջոցին մտքովս անցաւ սուրբ գրային մի աւանդութիւն՝ Նոյեան Տապանը, բեմահարթակը երեւակայօրէն նմանեցնելով նրան, որը ծառայեց որպէս փրկութեան տապան, իսկ այս մէկը՝ պայքարը համադրող եւ հունաւորող նպատակասլաց տեսլականով: Բեմահարթակի շուրջ ծածանւում էին տասից աւելի ԱՄՆ-ի եւ հայկական դրօշակներ, մեղմ քամու հոսանքով նրանք շարունակ փողփողում էին յոյս, հաւատք, սէր եւ յարատեւութիւն ներշնչելով:

Ապրիլեան ոգեկոչման տարիների շատ միջոցառումների եւ քայլարշաւների եմ մասնակցել, այս հարիւրամեակը տարբեր է, ինչպէս տարբեր էր յիսուն ամեակը: Այս մէկը շատ աւելի իմաստ ունի այն նկատառումով, որ թշնամու սպասածին հակառակ սերունդներ չմոռացան Արեան Կանչը, այլ տարուէտարի պայքարը զօրեղացրին հասնելով այս հանգրուանին աւելի թէժ եւ բուռն:

Ինչպէս առերեւոյթ նկատւում է, այս հարիւրամեակը բնութագրւում է իր կազմակերպչական եւ միասնական աննկուն համոզումներով ու հաւատքով հանդէպ մեր դատին ու պայքարին՝ Հայաստան, Արցախ եւ Սփիւռք մէկ խորհուրդ ազգային ռազմավարութեան գաղափարախօսութեամբ: Հաստատապէս իմ եւ բոլորի ցանկութիւնն է այս գործելակերպը գրանիտէ եւ պողպատէ տարազ զգենու, կամք ու հոգեվիճակ ստանալ մեր դատի իրականացման եւ հայրենիքի ու Արցախի հզօրացման ճամբին: Սա պէտք է հրամայական ու պարտադրական լինի բոլորիս համար:

Հայրենիքի հզօրացումը կախուած է բոլոր կազմակերպութիւնների եւ քաղաքական կուսակցութիւնների մտահոգութիւնից եւ աշխատանքից, քանզի այս ճամբով կարող ենք մեր նահատակների երազանքներն ու փափագներն իրականացնել: Յարգանք մեր աւանդական կուսակցութիւններին, որոնք հայ դատի եւ ցեղասպանութեան ճանաչեցման ու հայապահպանման ծառայութեամբ մեծ ներդրում են ունեցել յանձնառութեամբ շարունակելով առաջելութիւնը:

Լոս Անջելէսաբնակ մեր ժողովրդի մասնակցութիւնը քայլարշաւին գնալով աճում էր եւ բեմահարթակից հեռու խտանում գետնման հոսանքի մէջ, նա ձնագնդակի պէս մեծանում էր ու մեծանում, վերջում հսկայ ուժով ու թափով զարնուելու թիրախին:

Զարմանքի եւ բերկրանքի արտայայտութեան ականատեսն եղանք մարդոց շուրթերին, որոնք հիացում էին յայտնում տեսնելով ամէն սեռի ու տարիքի մասնակցութիւն՝ հիւանդներ, անդամալոյծներ սայլակներով կրելով դրօշակներ եւ պլակատներ (ցուցատախտակ), առաւել յիշատակելի այն որ պատանիների եւ երիտասարդների մասնակցութիւնը բոլորից վեր էին գերակշռում : Գանգատւում ենք, թէ՝ ինչո՞ւ մեր դահլիճային միջոցառումներին պատանիներ եւ երիտասարդներ չկան, կիսում եմ այս մտահոգութիւնը, սակայն թող մի բան պարզ դառնայ այն առումով, որ նրանց ընդգրկումը մեր միջոցառումներում զանգատի առիթ չի դառնայ: Ախր, միջոցառումներից ոմանք կազմակերպում ենք մեզ ցոյց տալու, մեզ երեւցնելու անտես առնելով նրանց: Կարիք եւ թելադրանք է բոլոր ասպարէզներում սերնդափոխութիւն՝ երիտասարդների ընդգրկում:

Քայլարշաւի, բողոքի երթի ճամբան երկար էր՝ մօտ տաս կիլոմետր, որը պիտի անցնէր Willshire-ի կենտրոնական բանուկ պողոտայից դէպի Թրքական հիւպատոսարան, այս երկար եւ լայն ճամբան լրիւ ծածկուեց խիտ հայորդիներով հաշուելով շուրջ 130,000-ի, աննախադէպ քայլարշաւ Սփիւռքի հայ կեանքում: Ամբողջ ճամբան, քառուղիները, կողմնակի անցումային ուղիները փակուած էին ինքնաշարժների երթեւեկութեան համար եւ առնուած ոստիկանութեան հսկողութեան ներքոյ թէ՛ եթերից եւ թէ՛ գետնից: Ոստիկանները օգնում էին երթի բարեյաջող կատարուելուն:

Յիշատակելի եւ ողջունելի է քայլողների ձեռքում ծածանուող բոլոր այն երկրների դրօշակները, որոնք ճանաչել եւ դատապարտել են Ցեղասպանութիւնը՝ Ուրուգուէ, Ֆրանսիա, Ռուսիա, Կանադա, Աւստրիա եւ իրար յաջորդող բազմաթիւ անուններ: Արժանաւորապէս ձեռքերում ցուցադրւում էր Կաթոլիկ Աշխարհի Կրօնապետի պատկերը:

Ահա գործն այդ սուրբ,
Մղում է մեզ երախտագիտութեան,
Շնորհակալութեան գլուխ խոնարհել,
Ի մասնաւորի հռոմի Մեծ Պապ
Ֆրանցիսկոս Կրօնապետին,
Բոլոր-բոլոր այն երկրներին,
Ժողովուրդներին ու իշխանութիւններին...
Որ դատապարտել են ցեղասպանութիւնը:
Մեր հարիւրամեակի այս ոգեկոչման օրերին՝
Մեր գովասանքի խօսքն ենք նուիրում
Ֆրանսայի ժողովրդին
Նախագահ՝ Ֆրանսուա Օլանդին,
Եւ շատ երկրներին:

Մասնակցողները քայլում էին առոյգ, երկար էր ճամբան, սակայն որեւէ մի ընկրկում, պայքարի գիտակցութեան ներքին ձայնը հիւանդներին նոյնպէս առաջ էր մղում վերջակէտում իրենց բողոքը յայտնելու, Թուրքիոյ ներկայացուցչին հասկացնելու որ ժխտողականութիւնից ձեռք քաշեն եւ առերեսուեն իրենց պատմութեան հետ:

Շար.ը էջ 19

# ՍԳԱՏՕՆ-ՅՈՒՇԱՏՕՆ-ՍՐԲԱՏՕՆ

**ՄՆԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ**

Մեր նահատակներուն սրբադասումը զոր ամէն հայ կատարած էր անցեալին գործնապէս (de facto) իր հոգւոյն տաճարին մէջ, դարձաւ Ապրիլ 23-ին իրաւական (de jure)՝ Ս. Էջմիածնի՝ հայ ազգի հոգեկան հաւաքավայրին մէջ, երբ աշխարհի ամէն տեղ ապրող կամ գտնուող հայեր երկիւղածութեամբ ու անսահման ինքնագոհութեամբ հետեւեցան այդ սրբադասման արարողութեան: Այդ օր, մեր եկեղեցիներու գմբէթներէն հնչող հարիւր զանգին ու ղօղանջին ամէն մէկ ղօղանջն ու զանգը կարծէք ՄԱՐՏԱԿՈՉ էր մեզի՝ ՅԻՇԵԼՈՒ արհաւիրքը եւ ջարդը մեր նահատակ ազգին եւ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ արդարութիւն անոնց դատին, ինչպէս նաեւ ԿԱՆՉ էր մեր վիրաւոր եւ անմիաբան անցեալէն, որ կ՛ըսէր՝ «Ապրի՛ք հայ ազգի ներկայ գինուորագրեալներ»:

Ապրի՛ք որ դարձած էք այսպէս աշխոյժ ու կենսունակ, ձեռքձեռքի տուած, միասին ու միակամ, Սփիւռքով ու Հայրենիքով, եղբայրացած եկեղեցիներով ու համայնքներով, համախմբուած համազգային ուժով եւ կամքով: Ապրի՛ք ձեր աշխատանքի յամառ եռանդով եւ ձեր գործելու բարձրօրակ տաղանդով: Ապրի՛ք ձեր գիտակից եւ ազգասէր երիտասարդ սերունդներով՝ հայրենի հող ազատագրող ու պահող եւ Սփիւռքի մէջ բարեկամ պատրաստող: Ապրի՛ք երգարուեստի, գեղարուեստի ու պարարուեստի միջոցներով ձեր ներկայացուցած բարձրօրակ կատարումներով եւ այդպիսով ձեռք բերուած ազգանպաստ յաջողութիւններով:

Շատեր պիտի ըսեն թէ խաբկանքով պէտք չէ ուղղուիլ եւ թէ մեր տկարութիւններն ու թերի կողմերը անթիւ են ու անհամար: Այդպէս է, այո՛: Բայց սգատօնյուշատօն-սրբատօն երթով դէպի յառաջ քալող մեր ժողովուրդը կարօտ է ժամանակի, որպէսզի յաղթահարէ իրեն դէմ ցցուող դժուարութիւններն ու տկարութիւնները, եւ ազգայինը կարգի դնելէ ետք (որ կը թուի թէ դրած է արդէն իր համազգային կեցուածքով), ան պիտի գիտնայ կարգի դնել իր ընկերային կեանքը խանգարող կամ շահագործող արտաքին թէ ներքին խնդիրներն ու հարցերը:

Առ այժմ, պէտք է գոհանալ մեր ազգային աննախընթաց ներկայով: Տակաւին մօտիկ անցեալին "so called" կը կոչէին մեր Ցեղասպանութիւնը, արհամարհելով մեր պատիւն ու արժանապատւութիւնը:

Այսօր հասած ենք յաջողութեան աստիճանի մը, որ աշխարհի բոլոր ամպիոններէն եւ մամուլի ու հեռատեսիլի ամենէն հռչակաւոր կեդրոններէն կը լսենք մեր արդար ձայն ըլլալու եւ պահանջք ունենալու արձագանգը, եւ Թուրքիան մատնուած է վիճակի մը, որ Թանէր Աքչամի խօսքով՝ «դժուար է իրեն իր ներկայ հանրապետութեան հիմնադիր հայերը ոճրագործներ եւ գողեր կոչել», տրուած ըլլալով որ ներկայ Թուրք հանրապետութեան հիմնադիրներէն շատերը եղած են Հայոց Ցեղասպանութիւնը ծրագրողներ եւ գրաւուած հայ ինչքերը սեփականացնելով՝ հարստացած պետական ղեկավարներ:

Ապրիլ 24 է նորէն եւ ամենուրեք եռուզեռ կայ այս շաբաթ հայ տունէն, կեդրոնէն, դպրոցէն եւ եկեղեցիէն ներս, որպէսզի բոցավառի կրակը հայուն եւ յարգուի յիշատակը մեր նահատակներուն: Յաճախ մեր շարքերուն մէջ կը գտնուին հայեր, որոնք հարց կուտան թէ ինչի՞ կը ծառայեն այսքան գործ ու աշխատանք եւ թէ ի՞նչ շահ կ՛ակնկալուի Թուրքիայէն եւ աշխարհէն. եւ կամ՝ թէ Ապրիլ ամիսէն ետք կը մոռցուի ամէն ինչ մինչեւ յաջորդ տարուայ Ապրիլ ամիսը: Այդպէս չէ սակայն. փաստ՝ ամբողջ տարուայ ընթացքին տարած աշխատանքը մեր ժրաջան գործիչներուն կամ կազմակերպութիւններուն, որոնք Հայ Դատ կը հետապնդեն եւ մեր Ցեղասպանութեան ճանաչում կը յաջողցնեն. փաստ՝ այն միջազգային լայն շրջանակը մեր կապերուն ու ծանօթութիւններուն, որոնք կը ստացուին լուռ ու յամառ բարեխօսութեամբը եւ աշխատանքովը մեր անվճար գործիչներուն ու համբաւաւոր մարդոց բանակին: Իսկ թէ ինչի՞ կը ծառայեն Ապրիլ ամսուն կատարուող ձեռնարկներն ու քայլարշաւները, պէտք է անվարան ըսել թէ անոնք ուղղուած են նախ եւ առաջ մեր ներքին՝ սեփական ուժերը վերարծարծելու եւ մեր ազգային բարդը (battery) լեցնելու. ուղղուած են նաեւ մեր մատղաշ ապագայ սերունդին փափաք եւ տրամադրութիւն փոխանցելու, որպէսզի կրեն ջահը եւ շարունակեն ազգային գործը. ուղղուած են մեր երէց սերունդին երախտագիտութիւն ցոյց տալու եւ շնորհակալութիւն յայտնելու, որ դժուար պայմաններու տակ կրցան մեզ հպարտ հայեր դարձնել եւ հայեցի դաստիարակութեամբ մեծցնել:

Եւ վերջապէս, ուղղուած են Թուրքիային եւ աշխարհին, որպէսզի դանդաղօրէն բայց վստահօրէն (slowly but surely) արդարութիւն բերենք մեր իրաւունքներուն եւ տուն բերենք մեր բանտարկեալ Մասիսն ու միւս բռնագրաւեալ բոլոր արժէքներն ու սրբավայրերը:

# ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՄԷՋ

20րդ դարու առաջին ցեղասպանութեան զոհ գացած մէկ ու կէս միլիոն հայերու նահատակութեան 100րդ տարելիցին նուիրուած պատմական յատկանշական հանդիսութիւններ նախատեսուած են Մայիսի 7ին, 8ին եւ 9ին, 2015: Այս առթիւ ԱՄՆի մայրաքաղաք Ուաշինկթըն պիտի ժամանեն Ամենայն Հայոց Գարեգին Բ. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսները, Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեանը, ինչպէս նաեւ տարբեր նահանգներէն ժամանած հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչներ: Այս առթիւ նախատեսուած միջոցառումներն են հանդիսաւոր պատարագ եւ ոգեկոչում Ուաշինկթընի Մայր տաճարին մէջ, քաղաքական հաւաք գոնկրէսականներու հետ, պաշտօնական ճաշկերոյթ ի պատիւ այն ամերիկեան ընկերութիւններուն որոնք անցնող 100 տարիներու ընթացքին մարդասիրական բազմապիսի աջակցութիւններով օգնած են հայ որբերուն եւ կարօտեալներուն: Նախատեսուած է նաեւ Հայոց Ցեղասպանութեան նուիրուած ցուցահանդէսի մը բացումը:

# ԿՈՄԻՏԱՍ՝ ՍԻՐՈՅ ԿԵՐՈՆ

«Ասա Վա՛րդապետ, Ո՞վ է քո սէրը,
Բախտի պէս թաքուն, Քո սրտի տէրը...»

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ
«Անլռելի զանգակատուն»

*ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ*

*Տաքը, կպրահոտ ու թանձր տաքը կը բարձրանար սալայատակներէն ու ծանրացած Սէն գետի գոլորշիներով, կը կախուէր օդին մէջ՝ մածուցիկ ու կպչուն: Շնչելն իսկ տաժանք մըն էր ինքնին: Ա՛լ ո՞ւր մնաց երկու խոշոր ճամպրուկներով բարձրանալ սա շէնքին երրորդ յարկը: Կառապանէն յոյս չկար: Հոս Պոլիս չէր: Մարդը իր բարձրադիր գահաւորակին վրայ ցից նստած, տեղէն շարժելու ոչ մէկ միտում ցոյց կու տար: Աչքերը միայն կ՚ըսէին թէ վարձքին կը սպասէր: Ճարահատ՝ վճարեց ու ճամբեց զինք:*

*Խոր շունչ մը, եւ վերցուց ճամպրուկները: Քալեց վճռակամ: Դարպասը սակայն փակուած էր զանգուածեղ հարցականովը կնոջ մը որ ամենազօր դռնսիերժ (դռնապանուհի) կը կոչուի Փարիզի մէջ:*

*- Փարտոն մատա՛մ...*

*Գլխու կիրթ շարժումի մը հետ կաշառող ժպիտ մը, զինաթափ ըրեր էր դռնապանուհին:*

*Սանդուղը ոլորուն էր եւ ճռնչացող: Մինչեւ առաջին յարկը բարձրացաւ մէկ շունչով: Պահիկ մը հանգիստ եւ նայուածք մը դէպի վար՝ կտրած ճամբան չափելու համար: Դռնապանուհին վարն էր միշտ, թեւերը մէջքին կանթած եւ գլուխը վեր ցցած՝ իր շարժումներուն հետամուտ: Նորէն կաշառքժպիտ մը նետեց դէպի վար: Ժպիտը ինկաւ, փշրուեցաւ սալայատակին վրայ:*

*- Զո՞վ կ՚ուզէք, պարո՞ն:*

*Հարցումը սպառնալից էր ու դժգոհ միանգամայն: Բայց ինք ալ արեւելքցի ըլլալուն, յամառ էր ու դեգ: Առանց պատասխանելու վերցուց ճամպրուկները եւ կրկին մագլցում: Վերջապէս երրորդ յարկը : Ու վարէն՝ դռնապանուհիին եզրակացութիւնը.*

*- Քէլ սովաժ... (ինչպիսի՜ վայրենի):*

*Դէպի դրան զանգը բարձրացող ձեռքը կաշկանդուեցաւ կարծես: Գուցէ իրաւացի՞ էր վարի կինը. անտաշութիւն չէր, ի՞նչ էր իր այս ըրածը. չորս տարուայ բացակայութենէ ետք, առանց լուրի, այսպէս ճմռթկած հագուստներով, ճամբաներուն մուրն ու փոշին դէմքին՝ յայտնուիլ մէկէն ու... եւ ի՞նչ: Ի՞նչ կ՚ուզէր ինք: Ո՞վ իրեն իրաւունք տուեր էր զարնելու սա դիմացի դուռը, անկից ներս խուժելու եւ խառնշտկելու ներսի խաղաղ, դասաւորուած առօրեան: Իսկապէս որ իրաւացի էր ֆրանսացի սա պարզ կինը: Հարկ էր ըլլալ քաղաքակիրթ եւ նրբանկատ: Արդարեւ նախընտրելի պիտի ըլլար թիկնադարձ հեռանալ այս դռնէն, իջնել պանդոկ մը նախ, մաքրուիլ ճամբու փոշիներէն, կոկուիլ քիչ մը եւ յետոյ միայն վերադառնալ: Անշո՛ւշտ: Բայց չես գիտեր դրան ո՞ր ճեղքէն կամ փողոցին վրայ բացուած ո՞ր մէկ պատուհանէն յանկարծ դուրս սպրդեցաւ երգը: Բիւրեղի պէս ջինջ էր ձայնը, թրթռուն ու քնքոյշ: Ձայնը եկաւ զեփիւռի պէս ու սիրտը լեցուց հով խայտանքով:*

*«Հո՜վ արէք, սարեր ճան, հո՜վ արէք,*
*Իմ տարտին դարմա՞ն արէք...»*

*Ու մտածումէն առաջ մատները թռան հնչեցնելու դրան զանգը: Իսկոյն զղջաց սակայն: Ջքացաւ կախարդանքը. երգը մարեցաւ:*

*Լռութիւն ու սրտատրոփ սպասում:- Համբերէ՛, սիրտ իմ, խաղաղէ: Ահա՛ մօտեցող քայլեր դրան ետեւէն... ահա՛ փականքի խշշոց:*

*Ու դրան հետ բացուեցաւ կախարդանքը: Մարգարի՜տն էր՝ շուար դէմքով, դող ելած ձայնով:*

*- Հա՜յր սուրբ...*

*Անոր այլայլումին դիմաց ինք հանդարտ էր ա՛լ ու ժպտուն: Զմայլանք կար, երգ ու կարօտ՝ սրտին մէջ: Սիրտը զսպել չկրցաւ: Երգեց.*

*«Ես սարէն կու գայի,*
*Դուն դուռը բացիր...»*

*Յետոյ խեղճ ու յոգնած ձեւանալով .*

*- Քոյրի՛կ,- ըսաւ,- ղարիպ կռունկն եմ, «Թողնել եմ ու եկել մըլքերս ու այգիս», ինկեր եմ փարիզեան սա տաքեր ու ջոլեր ... քոյրիկ, կարո՞ղ ես հիւր ընդունիլ, պուտիկ մը պաղ ջուրով սիրտս զովացնես:*

*Մարգարիտ, երիտասարդ ու թուխ, ա՛լ կը ճառագայթէր իր բոլոր լոյսերով: Կլոր, մսեղ շրթունքներուն մէջ խնդուքը հագիւ զսպած, ան հիանալի դերակատարութեամբ շիկնեցաւ, եղաւ «հարսնուկ գեղջկական», ձեռքերը հեզիկ դրաւ գոգը եւ խոնարհ գլուխ տուաւ.*

*- Հիւրն Աստծուն է, ղարիպ աղբեր, հիւրը գլխիս ու աչքիս վրայ տեղ ունի. համեցէ՛ք, պատի՛ւ արէք:*

*Լիահագագ խնդուքով ու աղմուկով ներս մտաւ: Խլեց, ամուր սեղմեց Մարգարիտին ձեռքերը: Պահեց զանոնք ափերուն մէջ կարօտի ծարաւով եւ հիացիկ սուզուեցաւ անոր աչքերուն մէջ, ուր երկու արցունքի կաթիլներ կը շողային արդէն:*

*Կեցեր, մնացեր էին նրբանցքին մէջ: Ա՛լ լուրջ էին ու լուռ: Մարգարիտ գլուխը յուշիկ հանգչեցուցեր էր Կոմիտասի ուսերուն եւ ա՛լ չէր կրնար զսպել հեկեկանքը: Իսկ ինք, քնքշօրէն կը գգուէր անոր վարսերը եւ կը շշնջար.*

*-Մարգարի՜տ... Մա՛րգօ ճան...*

*Երբ քիչ առ քիչ խաղաղեցաւ Մարգարիտ, երբ անցաւ յուզմունքին յորձքն առաջին, ան փափկութեամբ շտկեց կնոջ գլուխը եւ համբուրեց ճակատէն, միշտ մրմնջելով անոր ականջին.*

*- Մարգօ ճան, ի՞նչ երգեր եմ բերեր քեզի, նոր երգեր՝ տաք-տաք կալերէն ու արտերէն քաղուած:*

*Ու առանց սպասելու, արտօրանքով ան հիւրասենեակ անցաւ ու նստաւ պոչաւոր դաշնամուրին առջեւ: Նայուածքը ալ բացակայ էր, պատուհանէն դուրս յարած: Բայց մատները ճապուկ ու գայթող՝ շոյեցին ստեղները: Կարծես հովե՜ր անցան: Կարծես մէկը վերէն քար շպրտեց ու թփուտներուն տակէն թփրտացին, թռա՜ն կաքաւները: Ծուէն ծուէն ամպերը բուրդ մանեցին երկինքին վրայ: Բնութիւնը շունչը բռնած կը սպասէր կարծես: Ու մէկէն, վճիտ, խոշոր կաթիլներով, «անձրեւ եկաւ շողալէն, ուռ ու տերեւ դողալէն»: Ծիածանը կամար կապեց լեռնէ լեռ: Ու գարնան անձրեւէն ետք, յաղթական ու հնչեղ՝ «արեւ ելաւ թուլելով», ցնծաց Կոմիտասի տաք ձայնը:*

*Ու չքացաւ Փարիզը, տաքերը տեղի տուին եւ մոռցուեցաւ սենեակը: Ա՛լ հայրենի գիւղ մըն էր: Ծխաններէն կապոյտ ու բարակ ծուխ կ՚ելլէր: Բարտիները կ՚օրօրուէին արծաթ-արծաթ: Ու հեռուէն, արտերէն ձայն կու տար բեզարած մաճկալը.*

*«Արա՛ հօ... հօ՛, արա հօ՛...*

*Մարգարիտ եկեր կռթներ էր դրան: Չէր համարձակէր ներս մտնելու: Շարժում մը, աննշան շրշիւն մը կրնային վանել մտապատկերը, ուր երանութեամբ կը սաւառնէր իր հոգին: Ու Կոմիտասի ձայնը, հնչեղ ու տաք նոյն թաւշային ձայնը, դարձեալ կը թափանցէր իր էութենէն ներս՝ այնպիսի ուժգնութեամբ, այնպիսի քնքշութեամբ ու խռովքով, որ, Աստուա՜ծ իմ, իր սիրտը փուլ կու գար: Արցունքները կ՚իջնէին առատօրէն, արձակ համարձակ, առանց փղձկումի: Իսկ արցունքներուն ընդմէջէն կրկին կը յիշէր իրենց առաջին հանդիպումը:*

*«... 1902-ի գարնան օր մըն էր, երբ Թիֆլիս կ՚ապրէինք: Քսանինը տարեկան ծաղկատի պարմանուհի մըն էի, այդ օրերուն, վառ երազներով խանդավառ ու արուեստի սէրով թրթռուն: Որպէս դաշնակահարուհի եւ երգչուհի արդէն գրաւեր էի Թիֆլիսի հայ թէ օտար երաժշտասէրներուն սրտերը: Գովեստ ու ծաղկեփունջ, հրաւէրներ ամէն կողմէ: Բայց դժգո՛հ էի ես ինքզինքէս. առանց պատճառի անհանգիստ կը զգայի, կը տրտմէի: Չէի գիտեր թէ ի՞նչ կ՚ուզեմ:*

*Ահա այդ օրերուն էր, որ մեզի այցի եկաւ Տիրայր վարդապետը, հօրս լաւ բարեկամը:*

*- Օրիորդ Մարգարի՛տ,- ըսաւ ան հազիւ ներս մտած,- գիտե՞ս ո՜վ է ժամաներ Թիֆլիս, Կոմիտաս վարդապե՜տը....*

*Կոմիտա՜սը... այդ օրերուն բոլոր շրթներուն վրայ էր այդ անունը: Քաղաքէն իմ մէկ բացակայութեան եկեր էր ան ու գրաւեր իմ տեղս հասարակութեան սրտին մէջ: Վերադարձիս, ա՛լ ձախ Կոմիտաս, աջ՝ Կոմիտաս: Նախանձիս հետ արթնցեր էր հետաքրքրութիւնս: Կ՚ուզէի անպայման ծանօթանալ անոր հետ: Բայց առիթ չէր ներկայանար: Կոմիտաս շատ քիչ անգամ Թիֆլիս կու գար: Ուրեմն, Տիրայր վարդապետէն խնդրեցի անպայման մեզի բերել Կոմիտասը: Վարդապետը յաղթական ժպիտով ըսաւ, թէ արդէն կարգադրեր էր այդ մասին: Միայն մասնաւոր պայմանով. չէր ուզեր երգել տան մը մէջ, այլ կը նախընտրէր սրահի մը բեմէն՝ շատ սեղմ, մտերմական շրջանակի մը մէջ:*

*Անմիջապէս շտապեցի ապահովելու Նորականոյց Երաժշտանոցի սրահը: Նոյն երեկոյեան, քոյրերուս հետ, մտերիմ քանի մը բարեկամներով, սրտատրոփ կը սպասէնք սրահին մէջ: Ծառան մոմ մը կը վառէ ու կը զետեղէ բեմին, աթոռակի մը վրան: Համարեա՛ մութի մէջ ենք: Ոչ ոք կը համարձակի խզել լռութիւնը:*

*Ահա՛ բեմ դուրս կու գայ նիհար, սեւազգեստ երիտասարդ մը ու կը նստի դաշնամուրին առջեւ: Խոր լռութեան մէջ, սարսուռով կը լսեմ իր ձայնը, որ կրակոտ, կարծես արցունքներով շաղուած, կը հնչէ, կը բարձրանայ, կը բարձրանայ ու կը թափանցէ հոգիէս ներս՝ այնպիսի ուժգնութեամբ, այնպիսի քնքշութեամբ ու խռովքով, որ Աստուա՜ծ իմ, սիրտս փուլ կու գայ: Արցունքներս կ՚իջնեն առատօրէն, արձակ համարձակ, առանց փղձկումի:*

*Ի տես արցունքներուս, քովէս Տիրայր վարդապետը կ՚ընդմիջէ երգը:*

*- Բաւակա՜ն է, Կոմիտա՛ս, սպաննեցիր աղջկան:*

*Կոմիտաս շուարած կանգ կ՚առնէ: Մենք բեմ կը խուժենք: Առանց մտածելու կը խլեմ անոր ձեռքերը եւ կը համբուրեմ:*

*- Շնորհակալութի՜ւն, Հայր սուրբ, շնորհակալութի՜ւն...- կը շշնջամ:*

*Ա՛լ սիրտս լիացած էր: Անգին, աննման գանձ մը գտածի պէս էի.- Հայ ե՛րգը՝ Կոմիտասի ձայնով»:*

*-Ի՞նչպէս գտար, Մարգարի՛տ, սրտո՞վդ են այս նոր երգերս:*

*Մարգարիտ սթափեցաւ յուշերէն: Արտօրանքով փորձեց սրբել արցունքները եւ ժպտաց յանցաւոր:*

*- Էլի այդ արցունքնե՜րդ... Մարգօ՛ ճան, ես քեզ ուրախացնելու համար երկնեցի եւ երգեցի, ու դուն կու լա՞ս... ա՜խ դու փխրուն ճնճղուկ:*

*- Ներէ՛ ինծի, Հայր սուրբ, ուրախութենէ՛ս է որ կու լամ:*

*- Լա՜ւ, քանի այդպէս է, հիմա դուն երգէ որ ես լամ, ուրախանամ: Գիտե՞ս, որքա՜ն լեցուեր է նաեւ ի՛մ սիրտս: Դառնութեամբ հեռացայ Վանքէն, յաղթեցի Պոլիսին, Գահիրէին ու Աղեքսանդրիային: Այնքա՜ն տանջուեցայ ու յոգնեցայ: Ըսի, երթա՛մ Մարգարիտիս քով, լամ, լամ ու թեթեւնամ:*

*Մարգարիտ ա՛լ մոռցած իր արցունքները, կնոջական խուզարկու աչքերով կը զննէր զինք: - Միշտ նիհար էր ան, դէմքը իսկապէս յոգնած, բայց ներքին լոյսով մը օծուն: Աչքերը փոսը ինկած, երազո՛ւն ու բացակայ: Պեխն ու մօրուքը՝ մացառոտ, անխնա՛մ: Հագուստները՝ ճմռթկուած, ճամբաներու փոշիով պատած: Երբեք այսպիսի վիճակի մէջ չէր տեսած զինքը: Կարեկցանքին հետ փայլատակեց մտածումը:*

*- Հայ՛ր սուրբ, ճիշդ ժամանակին եկար: Քանի մը օրէն արձակուրդի կը մեկնիմ: Քեզ անպայման հետս տանիմ պիտի: Փորթզմըլթհի ճիշդ դէմը անգլիական փոքրիկ կղզի մը կայ, խաղաղ եւ արեւոտ անկիւն մը՝ Ուայթ կ՚ըսեն: Հոն պիտի երթանք: Երկու շաբաթով կը հանգչիս: Արեւն ու ծովը կը կազդուրեն քեզ: Կոկիկ պանդոկ մը գիտեմ հոն, դաշնամուր ալ ունին: Ի՞նչ կ՚ըսես ասոր:*

*- Աղջի՛, կամա՜ց-կամա՜ց: Ո՞ւր կը վազցնես գլխս այդպէս: Եկեր եմ ահագին գործով ու ծրագիրներով. երգերուս տպագրութեան հարցը կայ, դասախօսութիւններ տալու հարկադրանքը ունիմ, քանի մը երգահանդէսներ... դեռ ինչ գիտնամ.... ի՞նչ հանգիստի մասին կը խօսիս:*

*- Հապա կ՚ըսէիր թէ Մարգարիտիդ համար եկած ես... սուտը մե՜ղք բան է, Հա՛յր սուրբ ... չըլլա՛ր, անպայման պիտի գաս: Եթէ չգաս, սիրտս կտրած պիտի ըլլաս: Լուրջ եմ, սաստիկ վշտանամ պիտի:*

*- Լա՜ւ, լա՜ւ, մի յուզուիր, ես քու սիրտը կտրողը չեմ... դեռ կը մտածենք:*

*- Ժամանակ չկայ. հիմա պէտք է որոշուի. ահագին կարգադրելիք գործեր կան:*

*- Լա՜ւ, այս ալ քու փափաքա-*

*Շար.ը էջ 19*

# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԴԵՍՊԱՆ ՀԵՆՐԻ ՄՈՐԳԸՆԹԱՈՒ-Ի ՅՈՒՇԵՐԸ

## ԹՈՒՐՔԻԱ-ԿՈՆՍՏԱՆՏՆՈՊՈԼՍՈՅ ՄԷՋ ՊԱՇՏՕՆԱՎԱՐԱԾ ԱՏԵՆ 1913-1916 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

## Դեսպան Մորգընթաու՝ Թալէաթից յետոյ հանդիպում նաեւ Էնվէրի հետ

*ՊՕՂՈՍ ԱՐՄԷՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ*
*(Շարունակութիւն նախորդ թիւէն)*

*Թալէաթ, մարդասիրական տեսակէտից երբեք կարեւորութիւն չէր տուել Հայկական դէպքերին:*

*-Նիւթական կորուստների մասին խորհէիք, ասել էր Մորգընթաուն. -Հայերն են ապահովում երկրի բարգաւաճութիւնը, նրանք երկրի ճարտարարուեստականների մեծ մասն են կազմում եւ երկրի ամենախոշոր հարկատուներն են: Եթէ հայերը ջնջէիք ի՞նչ պիտի ստանայիք:*

*Թալէաթ պատասխանել էր, - որ իրենք արհամարհում են տնտեսական վնասները, իրենք հաշուած էին եղել երկրի վնասները, որոնք 5 միլիոն ոսկիէն աւելի չպիտի լինէին եւ որ այն մտահոգութիւն չէր պատճառում իրենց: Թալէաթ շարունակել էր. —դեսպանին խնդրել էր գալ նրան հաղորդելու, որ Հայկական հարցերի շուրջ որոշումներ առնուած են, եւ ոչ մէկ բան կարող էր այն փոխել: Իրենք, Անատոլուի մէջ Հայ չէին ուզում տեսնել: Հայերը կարող են «անապատի մէջ ապրել, բայց երբեք ուրիշ տեղ»: Մորգընթաու, երեք տարբեր առիթներով Թալէաթին ասել էր՝ «Դուք մեծապէս կը սխալիք»:*

*-Այո, շատ սխալներ ենք գործում, ասել էր Թալէաթը, գլուխը թօթուելով պատասխանել, — երբեք չենք ցաւիր նրանց համար:*

*Այնուհետեւ, Մորգընթաու Թալէաթի հետ բազմաթիւ խօսակցութիւններ էր ունեցել Հայկական հարցերի շուրջ, սակայն երբեք չէր կարողացել ազդել նրա վրայ: Հայերի հարցը Թալէաթի սրտում խորը հետք էր թողել, նրանց հանդէպ ատելութիւնը գնալով աւելի էր ահագնացել: Մորգընթաու, մի յայտնի հայու մասին խօսելու ատեն, Թալէաթին ասել էր, - որ սխալւում էր նրան թշնամի նկատել, նա իրեն երբեք հակառակ չէր եղել:*

*Թալէաթ, պատասխանել էր, - որ ոչ մէկ Հայ կարող էր մեր բարեկամը լինել, այն բոլոր դէպքերի համար, որ կատարել ենք նրանց հանդէպ: Թալէաթ, Մորգընթաուից «աշխարհի ամենաապշեցուցիչ բանը ուզել էր``:*

*-«Նիւ Եօրք Լայֆ» եւ «Էքուիթըպըլ Լայֆ օֆ Նիւ Եօրք» ապահովագրական ընկերութիւնները՝ կարեւոր գործարքներ էին արել հայերի հետ, ասել էր Թալէաթ, ապա շարունակել. -Նրանք իրենց կեանքն էին ապահովագրել, որը իրենց բարգաւաճութեան ապացոյցն է:*

*-Ես ուզում էի, ասել էր Թալէաթ, - որ ինձի օգնէիք ամերիկեան կեանքի ապահովագրութեան ընկերութիւնների Հայ հաճախորդների ցուցակը ունենայի, որոնք գրեթէ բոլորն էլ մահացած են, նրանց դրամը պատկանում է մեր երկրին, որի կառավարութիւնը կարիքն ունի այդ դրամներին: Կը ցանկանայի՞ք այդ ծառայութիւնը մատուցել, աւելացրել էր Թալէաթը:*

*Մորգընթաուն կատաղած, Թալէաթին պատասխանել էր՝*

*-Ինձի մի՛ ապաւինէք, որ ես ձեզի այդ ցանկը կը հայթայթեմ:*

*Թալէաթ, իր բարեկամների ներկայութեան, ամենաշնական արտայայտութեամբ, ասել էր.*

*«Ես Հայկական հարցը լուծելու համար երեք ամսուան մէջ աւելի գործ տեսայ, քան Ապտիւլ Համիտ 30 տարուան մէջ»:*



### *«ԷՆՎԷՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ» ՄՈՐԳԸՆԹԱՈՒԻ ԽՕՍՔԸ*

*Մորգընթաու, Թալէաթից բացի կամեցել էր նման ճնշում գործադրել նաեւ Էնվէրի վրայ, որը ըստ իր կարծիքի՝ նրանից տարբեր էր եղել: Նա ինքզինք հաճոյակատար, անաչառ, քաղաքավարի եւ աւելի նուազ անհաշտելի էր ցոյց տալիս: «Ցիմար ծայրայեղութիւնների» տեղ էր դրել հայերի մասին դեսպանին հասած պատմուածները: Վանայ դէպքերը պատերազմի անդրադարձն էին, ջանացել էր համոզել դեսպանին, որ «խնդիր չկար Հայկական ցեղը բնաջինջ անելու»: Սակայն, Էնվէրը, Յոհաննէս Լեփսիուսի հետ խօսակցութեան ատեն, խոստովանել էր նրան՝ «թէ առիթը եզակի էր ազատուելու համար հայերից եւ որ մտադրուած էին օգտուիլ այդ առիթից»: Մորգընթաուի այդ հրապարակումը՝ «Տակնուվրայ» էր արել Էնվէրը:*

*Էնվէր, Մորգընթաուի հանդէպ խստաբարոյ վարմունք ցոյց չէր տուել: Մորգընթաուին հասած մանրամասն տեղեկագրերը իզուր էին աւելի երկար ատեն թաքցրել Հայկական գաւառներում պատահած դէպքերի կացութեան մասին: Նա, այդ հարցի շուրջ «փոթորկայոյզ» վէճեր էր ունեցել Էնվէրի հետ:*

*Էնվէրը Մորգընթաուին յայտնել էր, թէ իբր հայերը ժամանակին զգուշացուել էին՝ ինչ կարող էր պատահել իրենց հետ, եթէ երկրի թշնամիին կողմն անցնէին: Երեք ամիս առաջ, Պոլսոյ Պատրիարքին իր մօտ էր կանչել, նրան ասել. - եթէ հայերը փորձէին յեղափոխութիւն անել, կամ ռուսներին օգնէին, դրա հետեւանքների համար ինք պատասխանատու պիտի չլինէր: Խօսքը շարունակելով Վանայ դէպքերի մասին յայտնել էր, որ բազում իսլամներ էին սպաննուել: Իրենք իբր տեղեակ էին, որ հայերը ուրիշ տեղեր էլ ապստամբութիւն էին նախապատրաստում: Ասել էր, որ իրենք Տարտանել-Կալիպոլիում կռւում են իրենց գոյութեան համար, իրենց «տան» մէջ չէին կարող թոյլ տալ կռնակից զարնուէին: Ինքը, իբր հակառակ չէր եղել հայերին եւ որ գնահատել էր նրանց խելացիութիւնը: Այն պիտի գոհացնէր իրեն՝ նրանց տեսնելով իրենց «ժողովուրդի հետ մէկ մարմին եղած»: Սակայն, եթէ Վանայ դէպքերի նման երկրի թշնամիների հետ եղած լինէին, « պէտք կը լինէր ջախջախել նրանց»: Նա, իբր հսկել էր, որ անարդարութիւն տեղի չունենար եւ որ հրահանգած էր տեղահանուած հայերը իրենց տեղերը վերադարձուէին, երբ տեսել էր, որ նրանք անմեղ էին:*

*Էնվէր խօսքը շարունակելով ասել էր, որ Ռուսիա, Ֆրանսա, Մեծն Բրիտանիա եւ Ամերիկա ծառայութիւն մատուցած չէին լինի հայերի հանդէպ համակրանք ցոյց տալով, այն կարող էր յեղափոխական նկրտումներ առաջացնել նրանց մօտ: Երբ իրենց կուսակցութիւնը Ապտիւլ Համիտի վրայ էր յարձակուել, բարոյական ազդեցութիւնը դրսից էր եղել, որը հանդիսացել էր իրենց յաջողութեան պատճառը: Եթէ հայերը օտարների կողմից օժանդակուած չլինէին, նրանք պիտի հրաժարուէին կառավարութեան նկատմամբ ընդիմութիւնից, պիտի դառնային հաւատարիմ քաղաքացիներ: Յայտարարել, որ հայերն իրենց ձեռքերում են, եւ որ դիւրին է երկրի հանդէպ դաւադիր վարմունք ցոյց տուողներից, «մեր վրէժը լուծել»:*

*Մորգընթաուն Էնվէրին պատասխանել էր, եթէ նրա ըսածները իրաւ էին, ինչո՞ւ յանցաւորները միայն չպատժել եւ ինչո՞ւ ամբողջ մի ցեղը զոհել:*

*Այդ իրաւացի պիտի լինէր խաղաղութեան ատեն, պատասխանել էր Էնվէր, որի դէպքում հնարաւոր էր «Պղատոնական» միջոցներ կիրառել «հանդարտեցնելու» հայերը ու յոյները, իսկ պատերազմի ատեն անհրաժեշտ է շտապ միջոցներ գործադրել: Իր կարծիքով, հայերը սխալւում են ռուսներին ապաւինելով, որոնք նախընտրած պիտի լինէին հայերի մեռնիլը՝ քան ողջ մնալը, եւ որ հայերը նոյնքան վտանգաւոր են նրանց համար, ինչքան նաեւ մեր երկրին: Եթէ հայերը Թուրքիայում անկախ կառավարութիւն կազմէին, Ռուսիայի իրենց եղբայրակիցներն էլ նոյնը պիտի անէին: Հայերը մեղապարտ են երկրում ջարդեր կատարելով, Վանի մէջ միայն երեսուն հազար թուրքեր կարողացել էին փրկուիլ, մնացածը սպաննուել հայերի ու քուրտերի կողմից: Պոլիսի մէջ կան 70,000 հայեր, բացի թուրքերի դէմ դաւադիրներից՝ մնացածները ապահով պիտի լինեն: Դեսպանին խորհուրդ էր տուել չ'անհանգստանալ, այլեւս ջարդ տեղի պիտի չունենայ: Մորգընթաուն չէր հաւատացել Էնվէրին, իրենց խօսակցութեան ատեն Հայկական գաւառներում ջարդեր, տարագրութիւններ էին:*

*Երբ Թուրքիայում Հայկական ջարդերի լուրը հասել էր ԱՄՆ, նրանք սկսել էին տուժածներին օգնութիւն կազմակերպելու աշխատանքներ կատարել: Շրջան արած լուրերի համաձայն, տարագրուածները իրենց ճանապարհի երթին, ուտելիք չէին ունեցել: Ջմոռանալով վերապահումներ անել, Էնվէրը խոստացել էր օգնել նրանց, որովհետեւ ամերիկեան ներկայացուցիչները փափաքել էին հանդիպել տարագիրներին, նրանց «օգնելու ու սփոփելու համար»:*

*Էնվէր դժգոհել էր տարագիրներին օգնելու Ամերիկայի ջանքերից, որովհետեւ ըստ նրա այն նրանց քաջալերելու առիթ պիտի ընծայէր: Թուրքիայում 28 միլիոն բնակիչ է ապրում որից մէկ միլիոնը հայեր էին: Էնվէր չէր ցանկացել այդ միլիոնը՝ մնացածների խաղաղութիւնը վրդովէին: Հայերի հետ համաձայնելու արգելքը համարել էր նրանց անջատողական ձգտումները, նրանք ինքնավարութիւն էին ցանկացել: Նրանք խաբուած են ռուսերու կողմից, որոնք այդ պատերազմում օժանդակում էին նրանց: Էնվէրը թելադրել էր Մորգընթաուին չմոռանալ, որ իրենք 1908 թուականի յեղափոխութեան ատեն 200 հոգի էին եղել եւ հակառակ այդ փոքր թուին կարողացել էին տապալել սուլթանը, հաւատացնելով հասարակութիւնը, որ իրենք մեծ թիւ էին եւ զօրաւոր: Յանդուգն կերպով պարտադրել էին սահմանադրութիւն հաստատել: Երկրում կատարուածի փորձարութիւնը՝ հայերի կողմից շահագործելը, վախեցրել էր իրենց, որ 200 զարգացած ու խելացի հայեր կարող էին նման մի ձեռնարկում իրականացնել: Էնվէրը յայտարարել էր, որ իրենք այն բացառելու համար որոշած են տեղահան անել հայերին, արգիլել նրանց համախումբ բնակեցումը եւ որ նրանց Պատրիարքին յայտնած էին, որ պատերազմի ատեն եթէ հայերը յարձակէին իրենց վրայ, անողոք վրէժ պիտի լուծէին:*

*Էնվէր վրդոված էր, որ միսիոնարները եւ «Հայ ցեղի» բարեկամները նիւթապէս ու բարոյապէս օգնում էին նրանց: Խստաբարոյ վիճակում ամէն անգամ կրկնել էր՝ «Ցիրաւի, չափազանց հետաքրքրութիւն ցոյց են տալիս նրանց հանդէպ»: Մորգընթաուի այն առաջարկին, որ միսիոնարներ տարագրութեան վայրեր գնային, Էնվէր առարկել էր, զգուշացրել, որ տեղացիները կարող էին բարկանալ ու ցաւալի դէպքեր պատահէին եւ որ հայերի համար առաւել շահաւոր պիտի լինէր ամերիկացի միսիոնարները տեղւոյն վրայ իրենցով զբաղուէին:*

*Մորգընթաու, Թալէաթին յայտնածի նման, Էնվէրին զգուշացրել էր երկիրը տնտեսապէս քայքայուելու մասին: Էնվէր, Թալէաթի նման պատասխանել էր, որ նախարարութեան կողմից այդ հարցի մասին արդէն ուսումնասիրութիւն կատարուած է:*

*Էնվէրին չէին հետաքրքրել տնտեսական հարցադրումները, նրա համար իրենց սկսած այդ պայքարը շահիլն էր, հակառակ դէպքում ըստ իրեն՝ «ամէն ինչ կորսուած» պիտի լինէր: Նա իրենց վիճակը յուսահատական էր համարել եւ որ չէին թողնելու հայերը իրենց թիկունքից յարձակուէին: Անօթի հայերին օգնելը անհրաժեշտութիւն էր, սակայն Էնվէր համառօրէն արգիլել էր ամերիկացիների օգնութիւնը:*

*Էնվէր յայտարարել էր, երկիրը հնարաւորութիւն չէր ունեցել հաց տալ սեփական ժողովուրդին, եւ ի՞նչպէս կարող էին հաց տրամադրել հայերին: Լկտիավարի ասել, որ ինք գիտէր որ այդ ձմեռ նրանք ուտելիք պիտի չունենային, որ նոյնիսկ Պոլսոյ մէջ ալիւր ու հացուստ ունենալը դժուար պիտի լինէր: Ըստ նրա, իրենք հայերը պարենաւորելու կարիքը չէին ունեցել: Նրանց օգնութիւն ցուց*

*Շար.ը էջ 17*

## Ի՞ՆՉ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ԿԸ ԶԳԷ ԾԽԵԼԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԵՒ ԻՆՉՈ՞Վ ՓՈԽԱՐԻՆԵԼ ԶԱՅՆ

Հակառակ տարածուած կարծիքին, թէ ծխելը կ'օգնէ ջիղերը հանգստացնելուն եւ կը մեղմէ անհանգստութիւնը՝ գիտնականներու հետազօտութիւնը ցոյց տուած է ճիշդ հակառակ արդիւնքը:

Ծխողները 70 տոկոսով աւելի շատ կ'ենթարկուին ճնշախտի եւ անհանգստութեան ազդեցութեան, քան չծխողները: Ծխելը ունի նաեւ հոգեբանական բացասական ազդեցութիւն: 40 տարեկանէն վեր ծխողներուն 19 տոկոսը կը տառապի ճնշախտէ ու անհանգստութենէ, երբեմն նաեւ, այսպէս կոչուած, կպչուն միտքերէ: Չծխողներու պարագային նմանօրինակ դրսեւորումները կը կազմեն 9 տոկոս, նախկին ծխողներու մօտ՝ 11 տոկոս:

Ասիկա այն պարագային, երբ հետազօտութեան մասնակցած մարդոց 37 տոկոսը վստահօրէն ըսած է, որ կը ծխէ ճնշումներն ու լարուածութիւնը մեղմելու համար:

Ծխողներուն մեծամասնութիւնը վստահ է, որ ատիկա իրենց կ'օգնէ խուսափելու ճնշումներէ ու մեղմելու անհանգստութիւնը, որ շատերը ետ կը պահէ ծխելը ձգելու մտքէն:

Բժիշկները, սակայն, կը բացատրեն, որ իրականութեան մէջ ծխելը հանգստացնելու փոխարէն կը մեծցնէ լարուածութիւնը ու ընկճուածութիւնը: Լարուածութենէն հանգստանալը ժամանակաւոր երեւոյթ է, որ կարճ կը տեւէ եւ կապ չունի հոգեբանական հանգստութեան ու ջիղերու հանգստացման հետ: Ընդհակառակը իւրաքանչիւր ծխախոտէն ետք մարդը գիտակցուած կամ անգիտակից կը սկսի սպասել յաջորդ ծխախոտը վառելուն, որ կը յառաջացնէ նոր լարուածութեան ու անհանգստութեան զգացում:

Հետազօտութեան մասնակցած բազմաթիւ նախկին ծխողներ նշած են, որ իրենք սկսած են չծխել, քանի որ նկատած են, որ իւրաքանչիւր ծխախոտէ ետք կը սկսին սպասել ու անհանգստանալ յաջորդ ծխախոտի մասին:

Մասնագէտներու կարծիքով՝ ծխելը կարելի է ձգել անոր փոխարէն այլ «զբաղում» գտնելու ճամբով, ինչպէս սիրած պտուղով, կտոր մը շոքոլայով կամ խառն հիւթով:

Շարք մը հետազօտութիւններ ցոյց տուած են, որ ծխողներու մօտ 35 տոկոսին համար անիկա զուտ մեքենայական սովորութիւն է, երբ ծխողի մօտ սովորութիւն կը ձեւաւորուի անընդհատ ձեռքին մէջ որեւէ բան ունենալ: Գիտնականները կը նշեն, որ ժամանակի ընթացքին ծխելը կը դառնայ մեքենայական շարժում, որ ըստ իրենց կարելի է փոխարինել այլ միջոցներով:

## ԱՆՔԱԿՏԵԼԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՅՄԱՆԸ

Հոգեբանները յաջողած են ապացուցել, որ ամուր ամուսնութիւնը մեծապէս կախուած է կնոջ երջանկութենէն:

Անքակտելի ամուսնութեան եւ երջանիկ յարաբերութիւններու բանալին աշխարհի հոգեբանները կ'որոնեն արդէն երկար ժամանակ: Վերջապէս անոնք գտած են բոլորը յուզող այդ հարցին պատասխանը: Մասնագէտները ուսումնասիրած են 400 ամուսնական զոյգ, որոնց համատեղ կեանքի ժամանակահատուածի միջինը կազմած է 39 տարի:

Բոլոր հետազօտուողներուն հարց տուած են, թէ իրենք ինչպէ՞ս կը գնահատեն իրենց յարաբերութիւնները իրենց ամուսինին կամ կնոջ հետ, որքա՞ն կը հասկնան իրարու եւ որքա՞ն բարձր կը գնահատեն իրենց երջանկութեան մակարդակը:

Պարզուած է, որ զուգընկերներէն իւրաքանչիւրին համար ամուսնութենէն բաւարարուածութիւնը մեծապէս կախուած է կնոջ երջանիկ ըլլալէն: Այլ խօսքով՝ եթէ յարաբերութիւններուն մէջ երջանիկ է կինը, ուրեմն երջանիկ է նաեւ ամուսինը:

Գիտնականները նաեւ պարզած են, թէ ինչը կրնայ ամուսնութեան մէջ կիները մտահոգել եւ լրացուցիչ ճնշախտ պատճառել: Ատիկա ամուսինին հիւանդութիւնն է: Իսկ ամուսինները այլ ձեւով կը վերաբերին իրենց սիրելի կիներու հիւանդութեան՝ անոնք ատկէ դժբախտ չեն զգար իրենք զիրենք: Խնդիրը այն է, որ հիւանդ կիները սովորաբար կը բուժեն ո՛չ թէ ամուսինները, այլ երեխաները:

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԴԵՍՊԱՆ

Շարունակուած էջ 16-էն

տալը «մեծագոյն դժբախտութիւնն է, որ կարող էր իրենց պատահիլ» շարունակել էր Էնվէրը»: Ըստ իրեն հայերը օտարների համակրութեանն են ապաւինած, որի համար էլ նրանք դիմադրում են, պատճառ հանդիսանալով իրենց դժբախտութիւններին: Հայերին օգնութիւն ձեռնարկելը, «յանձինս ձեզ» զօրաւոր բարեկամներ պիտի տեսնեն, որից իրենց ըմբոստութիւնը պիտի զօրանայ եւ անհրաժեշտ պիտի լինէր նրանց «աւելի խստութեամբ պատժել»: Մորգընթաուից պահանջել հայերի համար ուղարկուած դրամը իրենց տալին եւ որ իրենք կը հսկէին այն գործածուէր նրանց օգնելու համար:

Էնվէրը յաճախ էր կրկնել այդ առաջարկը: Մորգընթաուն տեղեակ էր, որ թուրք պաշտօնեաները ու ոստիկանները գողանում էին հայերի տնական ունեցուածքը, ուտելիքները, դրամը, «կանանց վերջին ցնցոտիները . . .նրանք հազիւ իրենց մերկութիւնը ծածկած քշւում էին դէպի հրակէզ անապատը»: Այդ բոլորից յետոյ Էնվէրը դեռ պահանջել էր օգնութեան հասած դրամը տրամադրել օրէնքի նման պաշտպաններին, որ այն իրենց առաջնորդած թշուառներին յանձնէին: Մորգընթաուն Էնվէրին յայտնել էր, որ եթէ նա ցանկանար կառավարութեան ուրիշ մի ներկայացուցիչ դրամի բաշխումի պատասխանատուութիւնը երաշխաւորել, իրենք պիտի յօժարէին դրամը Էնվէրին վստահիլ, սակայն երբեք այն նրանց չենք տալու՝ «որոնք հայերը ջարդած են եւ կիները խոշտանգած»:

Էնվէրը նորէն կրկնել էր, որ հայերը չպէտք է իմանային, որ Ամերիկայում թիկունք ունէին, որը «նրանց կործանումը պիտի լինէր»: Վանայ ու Սարըղամիշի ճակատամարտերը տանուլ տուած, հարիւրապետի աստիճանին գինուորական կարողութիւն ունեցող տկարամիտ, պճնամոլ, անարգ շնագայլ «զօրավար»-ը, յայտարարել էր՝ «շատ աւելի նախամեծար համարելի է, որ անօթութիւնից մեռնին...»: Եւ նա դեռ հայերի շահն էր նկատի ունեցել, եթէ նրանք արտերկում բարեկամներ չունենային իրենց հանգիստ գտնելով ու Թուրքիային ապաւինելով կը լինէին խաղաղ քաղաքացիներ: Շարունակել էր, որ Ամերիկան հայերին համակրանք ցոյց տալով՝ «Դուք անոնց գլխուն մեծագոյն փորձանքներ կը բերէք»:

Այդ բոլորից խիստ ազդուել էր Մորգըթաուն: Նրան սարսափելի էր մտածել, որ որքան շատ դրամ ամերիկացիները ուղարկէին սովահար հայերին սնուցանելու, այնքան աւելի շատ պիտի ջարդուէին...: Իրենց խօսակցութեան ընթացքին, Էնվէր սկսել էր մեղմանալ ու թոյլ տալ, որ միսիոնարների միջով տարագիրներին օգնութիւն փութացուէր: Իրենց վիճաբանութեան ատեն, Էնվէր այդ «կեղծաւոր չքմեղանքով» իրեն ներկայացնում էր որպէս «ճնշուած ազգին իբր անկեղծ բարեկամ»: Էնվէր, ջանում էր դեսպանին վստահեցնել, որ իբր իր ցանկութիւնն էր հայերի հանդէպ արդարութեամբ վարուել եւ որ իր վարմունքը տարբեր էր Թալէաթի վարմունքից: Տարագրուած հայերի վիճակը մեղմելու համար՝ Մորգընթաու նրա տեսակէտների համաձայն ծրագիր էր պատրաստել ու ներկայացրել Էնվէրին, թելադրել նաեւ նրան օգնելու համար հայերից կազմուած յանձնախումբ կազմել եւ յետոյ էլ յայտնի մի Հայ անձի ուղարկէր տեղում ուսումնասիրելու գաղթականների վիճակը, ինչպէս կարող էր լինել նախկին հեռագրական նախարար Ոսկան Էֆէնտիին: Էնվէր մերժել էր Մորգընթաուի բոլոր առաջարկները:

Էնվէրի հետ մի այլ խօսակցութեան ատեն Մորգընթաուն նրան յայտնել էր, որ նա յանցաւոր չէր հայկական ջարդերի համար եւ որ ինքը գիտէր «դահլիճը երբեք այդ կարգի հրահանգներ տուած չէ»: Աւելացրել, որ ոչ ոք կարող էր մեղադրել նրան, Թալէաթը եւ կոմիտէի միւս անդամները, իրեն ստորակարգեալները որոշուածից տարբեր էին գործել: Ես ուղղակի մէջբերում եմ Էնվէրի պատասխան խօսքը.

«Դուք բոլորովին սխալւում էք, մենք այս երկրին բացարձակ տէրերն ենք: Ես երբեք դիտաւորութիւն չունեմ մեղադրանքը մեր ստորակարգեալների վրայ նետել եւ բոլորովին տրամադիր եմ վրաս առնելու ամբողջ պատահածին պատասխանատուութիւնը: Դահլիճը անձամբ հրամայած է տարագրութիւնները եւ ես համոզուած եմ, թէ մենք այդ բանին իրաւունքը ունինք, նկատելով որ հայերը հակառակ են մեզի: Աւելին կայ, մեծերը մենք ենք այստեղ եւ մեզանից վար գտնուողներից ոչ ոք պիտի համարձակուէր այդ կարգի միջոցներ ձեռք առնել՝ առանց մեր հաւանութիւնը ունենալու»:

## 5 ՄԹԵՐՔ, ՈՐՈՆՔ ՄԱՐՄԻՆԸ ԿԸ ԹՈՒՆԱԶԵՐԾԵՆ ԱՒԵԼԻ ԼԱՒ՝ ՔԱՆ ՈՐԵՒԷ ԱՅԼ ԴԵՂԱՄԻՋՈՑ

Մարմինը թունազերծելու կամ «մաքրելու» համար այժմ ստեղծուած են բազմաթիւ դեղամիջոցներ, սակայն մինչեւ վերջին նորամուծութիւնները միշտ եղած են մթերքներ, թուրմեր կամ աւանդական միջոցներ, որոնցմով հնարաւոր եղած է թունազերծել մարմինը: Շարք մը մթերքներու մէջ կան մարմինը «մաքրելուն» օգնող օգտակար նիւթեր ու հանքանիւթեր, որոնք ամբողջութեամբ կրնան փոխարինել յատկապէս քիմիական բաղադրութեամբ դեղամիջոցները: 5 մթերք, որոնք օգտագործելէ յետոյ ձեր մարմինը կը դառնայ «նորածին»:

Ճակնդեղ– Ճակնդեղը մարմնի թիւ մէկ մաքրուհի է: Անիկա կը պարունակէ բջջանք (ֆայպըր), ֆոսֆոր, վիթամին C եւ շարք մը այլ օգտակար նիւթեր, որոնք կը նպաստեն մարմնէն աւելորդ ու անպէտք մնացորդներու չէզոքացման: Ճակնդեղը կը մաքրէ ստամոքսն ու աղիքները: Անիկա նաեւ կը պարունակէ այնպիսի նիւթեր, որոնք կ'օգնեն լեարդին ազատելու թոյներէ:

Կաղամբ – Կաղամբը կը պարունակէ մեծ քանակութեամբ սննդային հիւսուածքներ, որոնք կ'օգնեն մարմնին իրար միացնելու սննդային ծանր մետաղներն ու թոյները եւ դուրս հանելու զանոնք աղիքներուն միջոցով: Կաղամբի բաղադրութեան մէջ կը մտնեն կենսական թթուներ, որոնք կը բարելաւեն ստամոքսին եւ աղիքներուն աշխատանքը: Կաղամբը նաեւ ունի բացառիկ վիթամին Ս, որ կը չէզոքացնէ վտանգաւոր քիմիական նիւթերը եւ ստամոքսի խոցի պաշտպանութեան, զերծ կը պահէ կարեւոր օրգանները... րագային քիչ, թէ շատ կը նպաստէ, որ վէրքը փակուի:

Սխտոր – Սխտորը կը պարունակէ աւելի քան 400 օգտակար նիւթեր ու տարրեր: Առաջին հերթին անիկա հիանալի միջոց է արեան մէջ քոլեսթերոլի մակարդակը իջեցնելու համար: Սխտորը կը մաքրէ երակները, կը չէզոքացնէ թոքախտի ցուպիկը: Սխտորի միջոցով կարելի է պայքարիլ աղիքներուն մէջ յայտնուող որդերուն դէմ:

Սոխ – Սոխին գլխաւոր արժէքը ֆիդօնցիտն է, որմով հարուստ են նաեւ եթերային իւղերը: Ֆիդօնցիտի միջոցով սոխը կը կատարէ հակաթոյն այնպիսի պաշտօն, որ նոյնիսկ չեն կրնար ամենալաւ դեղամիջոցները: Սոխը նաեւ կը բարելաւէ մարսողութիւնը, կ'օգնէ ստամոքսին առանց ծանրաբեռնուածութեան ու արագ «մաշեցնելու» ճաշը:

Խնձոր – Խնձորը կը պարունակէ մեծ քանակութեամբ փեգդին եւ բջջանք (ֆայպըր), որոնք կը կարգաւորեն ստամոքսի եւ աղիքներու աշխատանքը: Խնձորը նաեւ կը նպաստէ ստամոքսահիւթի արտադրութեան եւ կ'ազատէ փորկապութենէ:

Խնձորին միջոցով կարելի է պայքարիլ այնպիսի վարակներու դէմ, ինչպէս A խումբի վարակները, ստաֆիլագոգը, տիզենթերիան եւ բրոզէլը:

Ըստ սննդագէտներու՝ այս մթերքները աւելի լաւ կը թունազերծեն մարմինը, քան որեւէ այլ դեղամիջոց: Անոնք նաեւ կը պարունակեն շարք մը կենսանիւթեր, որոնք կը նպաստեն մարմնի դիմադրողականութեան բարձրացման:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԵՏԵՒՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ

*Շարունակուած էջ 1-էն*

իա չի մոռնար յիշատակելու Ֆրանսայի մէջ ապրող 600 հազար թուրքերու թուաքանակը, լռելեայն հասկցնելով, որ անոնք դէմ են Հոլանտի այդ քաղաքականութեան...:

Թուրքիա նոյն սրդողանքով կը բողոքէ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի դէմ, որ ինք եւս իր մասնակցութիւնը բերած էր Ծիծեռնակաբերդի սգահանդէսին եւ հակառակ իր... ազդարարութիւններուն, Ցեղասպանութիւն որակած է 1915-ի սպանդները: Իր բողոքագրին մէջ, Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարը դիտել կու տար Փութինին թէ «Թուրքիա ոչինչ կը համարէ արդարութեան հետ կապ չունեցող նմանօրինակ պնդումները» միաժամանակ դիտել կու տայ անոր, որ Ռուսիոյ պատմութիւնը լեցուն է սպանդներով... որով Փութին լաւ պէտք է գիտնայ ցեղասպանութեան իրական տարողութիւնը:

Այն տպաւորութիւնը կ'ունենանք, որ թուրք նախարարը առաւելագոյնս վշտացած է առաջին համաշխարհային պատերազմին, Թուրքիոյ դաշնակից Գերմանիոյ մերօրեայ նախագահ Երաքիմ Կաուքիի դէմ: Ան, Պերլինի Մայր տաճարին մէջ, Ապրիլեան ցեղասպանութեան 100-ամեակի կապակցութեամբ տեղի ունեցած հանդիսութեան մը ընթացքին, 1915ի դէպքերը կոչած է ցեղասպանութիւն: Չաւուշօղլու կոչուած թուրք նախարարը, նախագահ Կաուքին առաքած մեղադրագրին մէջ դիտել կու տայ, որ ոչ ոք իրաւունք ունի թուրք ժողովուրդը ամբաստանելու յանցանքով մը զոր գործած չէ (ընդգծումը մեր կողմէ. Ա.Գ.): Այստեղ եւս, նախարարը (թելադրական կարգով) կը յիշէ Գերմանիոյ մէջ ապրող թրքական ծագումով հարիւր հազարաւոր գերման քաղաքացիներու կարծիքը, որ հաշուի առնուելու է նման կեցուածքներ ճշդելէ առաջ...

Ծանրագոյն բողոքը կը հասցէագրուի Միացեալ Նահանգներու նախագահ Պարագ Օպամային, որ կը մեղադրուի անով, որ հայոց ցեղասպանութեան 100-ամեակի կապակցութեամբ իր յայտարարութեան մէջ յիշատակած է ցեղասպանութիւն բառի ստեղծիչին՝ Ռաֆայէլ Լեմքինի անունը: Այդ կապակցութեամբ ըսած է նախագահ Օպամա. «... երբ 1915-ի սարսափազդու դէպքերը տեսանելի դարձան, Ամերիկայի դեսպան Մորկընթաու կառավարական շարքերէն ներս ահազանգ հնչեցուց եւ կանգնեցաւ օսմանեան ղեկավարներուն դէմ: Անոր տարած ջանքերուն շնորհիւ երեւան ելաւ Մեծ Եղեռնի իրականութիւնը եւ ասիկա իր ազդեցութիւնը ունեցաւ Ռաֆայէլ Լեմքինի նման մարդկային իրաւունքները պաշտպանող մտաւորականներու ապագայ աշխատանքին վրայ:

Արդարեւ, Ռաֆայէլ Լեմքինի անուան յիշատակումը «գող՝ սիրտը դող» ժողովրդական ասացուածքի հետեւողականութեամբ, յիշեցուցած է թուրքին «ցեղասպանութիւն» բառը, թող որ անիկա արտասանուած չէր նախագահ Օպամայի կողմէ:

Թուրքիոյ ունեցած այս գերզգայնութիւնը Հայոց Ցեղասպանութեան կապակցութեամբ արտասանուած մէկ մի բառի, դիրքորոշումի եւ մարդասիրական պատգամի հանդէպ՝ ցոյց կու տայ հոգեբանական տագնապ մը, որ կ'ապացուցէ անվիճելի յանցապարտութեան, որ տակաւ կը բիւրեղանայ եւ կը մերկանայ: Տարակոյս չկայ, որ ծագող ամէն առաւօտ անսպասելիօրէն շարունակելի, նոր հարուած մը պիտի տայ ուրացողին, մինչեւ արդարութեան լրիւ նուիրագործումը:

## ՀԱՅ «ՍԻՔԼԻՍԹ»ՆԵՐԸ ԴԷՊԻ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*նի տարիներու հեծելաշրջանի ախոյեան, իր հմտութեամբ առաջնորդելով այս խումբը, որուն հետ հաղորդակցութեան ընթացքին երկու օրեր առաջ յայտնեց թէ իրենք Արիզոնա հասած են եւ պիտի ուղղուին դէպի Մեքսիքօ, հասնելով Ուաշինկթըն Մայիսի եօթին, եթէ ամէն ինչ հեզասահ ընթանայ: Սոյն խումբի ուղեւորութեան կ'ընկերակցի «վէն» մը, յատուկ մննդամթերքով եւ պէտքերով: Հայ ժողովուրդի անունով պէտք է շնորհաւորել այս յատուկ միջոցառումը եւ նպատակը: Բարի երթ բոլորին եւ ձեր վարձքը կատար: Հայոց Ցեղասպանութեան հարիւր ամեակը թող հարիւր հազար նոր գարուններ եւ խաղաղութիւն բերէ հայ ժողովուրդին, բոլոր նպատակներու իրականացում եւ արդար հատուցում:*

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

## ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐԸ ՄԻԱՅՆ ՀՆՉԱԿԵԱՆՆԵՐՈՒ ՀԵՐՈՍՆԵՐԸ ՉԵՆ

*Շարունակուած էջ 8-էն*

*Անոնք են այս հողին վրայ սոցիալիստութեան ռահվիրաները:*

Հ. Իսկ ի՞նչ էր ձեր հակադարձը, երբ յառաջիկայ Յունիս 7ին տեղի ունենալիք Թուրքիոյ խորհրդարանական ընտրութիւններուն ընդդիմադիր քեմալական «Ժողովրդա-Հանրապետական» կուսակցութիւնը առաջադրեց հայուհի Սելինա Օզուզուն Տողանի թեկնածութիւնը, յատկապէս որ ան յայտարարած է որ Ապրիլ 24ին պիտի մասնակցի ձեր կողմէ կազմակերպուած Թաքսիմ հրապարակի վրայ տեղի ունեցող ցոյցին:

*Պ. Մենք ընդհանրապէս յարաբերութիւններ չունինք Տիկին Սելինա Տողանի հետ, սակայն խիստ գոհ ենք անոր թեկնածութեան առաջադրումով, նկատի առած որ առաջին հայ կինն է որուն թեկնածութիւնը կ'առաջադրուի քեմալական այս շարժումին կողմէ: Քաջալերելի է այն փաստը որ ի վերջոյ կին է առաջադրուողը: Գիտէ՛ք, մենք արեւելեան ժողովուրդ ենք, եւ նոյնն է պարագան Լիբանանի մէջ: Խիստ դժուար է կիներուն համար գրաւել խորհրդարանական աթոռներ, նկատի առած կանանց դէմ ի գործ դրուած խտրականութիւնը, որ գոյութիւն ունի մեր շրջանի բոլոր երկիրներուն մէջ:*

*Առ այդ մենք կոչ կ'ուղղենք բոլոր հայ կուսակցութիւններուն եւս, որ նախագահական սիստեմը փոխեն, եւ համանախագահութեան ձեւին անցնին, բարձրացնելով կիներու մասնակցութեան տոկոսը իրենց ղեկավար շարքերուն մէջ:*

*Նշեմ որ Թուրքիոյ խորհրդարանական ընտրութիւններուն պիտի մասնակցի առնուազն 4 հայ թեկնածու, բոլորն ալ պիտի պայքարին Պոլսոյ շրջանէն: Թուրքիոյ իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութիւնը հայ լրագրող, գրող Մարգար Եսայեանի, որուն խիստ դէմ ենք, որովհետեւ իշխանութեան հետ է, իսկ Քրտական «Ժողովուրդներու Դեմոկրատական» կուսակցութեան համամասնական ցուցակներուն վրայ կայ երկու հայ թեկնածու՝ Կարօ Փայլան եւ Մուրատ Մըհչըն: Հոս կ'ուզեմ անպայման մատնանշել որ շատ հաւանաբար Պարթըն քաղաքէն ընտրութիւններուն մասնակցի նաեւ «Նոր Զարթօնք»ի համանախագահ Տիւենճէ Այշէն, որ իսլամացած հայ է եւ մեր մօտ հայերէն սորված է:*

Հ. Իսկ ի՞նչ են Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման գծով ձեր ծրագիրները:

*Պ. Թուրքիոյ մէջ 6 կազմակերպութիւններու կողմէ ստեղծուած «Վերջ 100-ամեայ ժխտմանը նախաձեռնութիւնը» ծրագրած է Ապրիլ 24-ին Պոլսոյ եւ Տիարպեքիրի հրապարակներուն վրայ «Ճանչցիր, ներում հայցէ, կարգաւորէ, փոխհատուցէ» պահանջով Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած երթեր կազմակերպել: Հայոց Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին նուիրուած յիշատակի արարողութիւններու նախաձեռնողները, ներառեալ մենք, մեր երթը կը սկսինք ժամը 11-ին Սուլթան Ահմէտ բանտին առջեւէն, հայ մտաւորականներու ձերբակալութեան վայրէն՝ ներկայիս Թրքական եւ Իսլամական ստեղծագործութիւններու թանգարանէն: Այդտեղէն երթով կը շարժինք դէպի Հայտարփաշայի երկաթուղային կայարան, այնուհետեւ կ'այցելենք Թրքական բանակին մէջ զինուորական ծառայութեան ընթացքին Ապրիլ 24-ի օրը, հայ ըլլալուն համար սպանուած Սեւակ Պալըքչըի գերեզման: Երթը կ'աւարտի երեկոյեան՝ Կալաթասարայէն մինչեւ Թաքսիմ հրապարակ, ուր պիտի կազմակերպուի մեծ հաւաք մը: Այստեղ արդէն ուղերձներ պիտի արտասանուին: Կ'արժէ նշել որ մեզի համար աւելի նախընտրելի է որ այս խօսքերը արտասանուին ոչ հայերու կողմէ, որոնք վստահաբար աւելի ընդունելութիւն պիտի գտնեն Թուրք հասարակութեան կողմէ, նկատի առած որ այլ ազգի մը ներկայացուցիչն է ան, ըլլայ ան քիւրտ, չերքեզ կամ Թուրք, որ կը զօրակցի մեր գաղափարներուն եւ համոզումներուն:*

*Տիարպեքիրի մէջ նախաձեռնութեան երթը կը սկսի Սուրբ Սարգիս եկեղեցւոյ մօտէն: Հայոց Ցեղասպանութեան զոհերու զաւակները եւ թոռները կը յիշատակեն Ցեղասպանութեանը զոհ գացած հայ եւ ասորի նահատակները:*

*Նախաձեռնութեան հեղինակներն են «Անատոլու մշակոյթի եւ հետազօտութիւններու միութիւնը» (AKA-DER), Մարդու իրաւունքներու կազմակերպութեան (IHD) Ցեղապաշտութեան եւ խտրականութեան դէմ յանձնաժողովը, «Նոր Զարթօնք»-ը, «Թուրապտին ասորական միութիւնը», «Առերեսման փլաթֆորմը», «Զան սոցիալ-քաղաքական տնտեսական հետազօտութիւններու հիմնադրամը»: Նախաձեռնութեան իրենց աջակցութիւնը յայտնած են Լոնտոնի «Կոմիտասի հիմնարկ»ը, Եւրոպայի հայկական կոմիտէն (Armenian Council of Europe) եւ Փարիզի Collectif Van նախաձեռնութիւնը: Տեղի ունենալիք ձեռնարկներէն յետոյ կազմակերպիչները եւ մասնակիցները երկու քաղաքներուն մէջ ալ հանդէս կու գան բացօթեայ հրապարակային մամուլի ասուլիսով: Նախաձեռնութեան կազմակերպիչները յայտարարած են, որ Ցեղասպանութեան ճանաչման համար եւ ժխտման դէմ իրենց պայքարը պիտի չաւարտի ոչ 2015 թուականի Ապրիլ 24-ին, ոչ ալ 2015 թուականի Դեկտեմբեր 31-ին:*

*Մենք նաեւ հաղորդագրութիւն մը պիտի հրապարակենք, որոնցմէ առաջինը կոչ կ'ուղղէ իշխանութիւններուն, Ցեղասպանութեան ճանաչման, ապա դպրոցներու անուններու փոփոխութեան, որոնցմէ մին՝ Թալէաթ փաշայի անունով վարժարանը, որ կը գտնուի հայկական Թաղամասի կեդրոնը, ինչպէս նաեւ դասագիրքերու մէջ նշուի Հայոց Ցեղասպանութեան մասին, ինչպէս նաեւ փոխհատուցում տրուի հաւաքական հասարակական կալուածներուն _ եկեղեցի, մշակութային կեդրոն, դպրոց _ վերադարձը հայ համայնքին:*

*Մեր հաղորդագրութեան մէջ նաեւ լուսաբանիչ հատուած մըն ալ կայ Թուրք նոր սերունդին, առանց դատապարտելու զայն իր նախնիներու կատարած յանցագործութեանց համար:*

**Հարցազրոյցը վարեց՝**
**ՆԱՋԵԼԻ ԷՊԷՃԵԱՆ-ՆԱԼՊԱՆՏԵԱՆ**

## ԲԱԶՄԱՀԱԶԱ՞Ր ԲՈՂՈՔՈՂՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԻՒՆ

*Շարունակուած էջ 14-էն*

Այդ ծովածաւալ ժողովրդի ճամբին տարբեր բովանդակութեամբ պլակատներ էին ցուցադրւում եւ կարգախօսներ հնչում: Երկինք ու երկիր թնդում էր միակտուր ու միաբերան մասանների հուժկու ձայնով, թէ՝ ամօթ քեզ Թուրքիա: Վեց ժամ շարունակ հնչեց այս լոզունգը, եթէ կարծր քարին այդքան յանդիմանէին, նա կը հալուէր, իսկապէս հազար ամօթ Թուրք իշխանաւորներին, որ հերքում են ցեղասպանութիւնը եւ պաշտպանում են Ջարդարարներին: Նաեւ անդադար հնչում էր՝ Պայքա՛ր, պայքա՛ր մինչեւ յաղթանակ Միութիւն պայքար յաղթանակ Յիշում եւ դատապարտում ենք Հայաստան, Արցախ եւ Սփիւռք մէկ բռունցք: եւ այլ կարգախօսներ:

Խուռներամ ժողովրդի շարքերը կանգ առան, այլեւս տեղ չկար առաջ ընթանալու: Հիւպատոսարանի դիմահայեաց բեմահարթակից լսուեցին պետական ճանաչուած հեղինակաւոր ամերիկացի եւ հայ անձնաւորութիւնների ճառերն ու պատգամները, որոնք դատապարտում էին Թուրք իշխանաւորների դիրքորոշումը եւ պահանջում էին հրաժարուելու կեղծարարութիւնից եւ ժխտողականութիւնից ու ընդունել Ցեղասպանութիւնը:

Ահա մեր մասնակցութեամբ այս ճակատագրական ոգեկոչումին վերանորոգեցինք մեր ուխտը՝ յարատեւօրէն շարունակել պայքարը արդարութեան եւ իրաւունքների ձեռք բերման համար: Ապրել, այսինքն՝ պայքարել, իւրաքանչիւրիս պարտքն է մեր սրբազան նահատակների հոգիների խաղաղութեան համար կուռ հաւատքով եւ միասնական ոգով շարունակել պայքարը առանց այլեւայլի, նահանջն ու համակերպումը Ջուրը կը թափի ծով աշխատանքը, գոհողութիւնները, նուիրուածութիւնները եւ...

Ահա հարիւրամեակի այս հայամէտ եւ նպաստաւոր քաղաքական հարթակում յոյս ունենք մեր դատը իրաւական տեսք ստանայ միջազգային ատեաններում:

### ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ԷԼԻՄՈՆ ՃԷՐԷՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած Պէյրութ) Հայ Ամերիկեան Խորհուրդը իր խորազգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի հարազատներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ՆԱԶԱՐ ԿԷՕԶԵԱՆԻ յիշատակին Տէր եւ Տիկ. Ճորճ Գուզուեան կը նուիրեն 100 տոլար «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ցեղասպանութեան 100 տարելիցին առթիւ Տէր եւ Տիկ. Աւօ եւ Աստղիկ Ճէրէճեան կը նուիրեն 200 տոլար «Մասիս»ին:

******

Ցեղասպանութեան 100րդ տարելիցին առթիւ Միսակ Գասպարեան $20 տոլար կը նուիրէ «Մասիս»ին:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 * $100,00 (first class) for USA
$ 125,00 (Air Mail) for Canada.
$ 250,00 (Air Mail) Overseas.
Name: ----------------------------------------
Address: ---------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :----------------------- Email: -------------------------

## ԿՈՄԻՏԱՍ՝ ՍԻՐՈՅ ԿԵՐՈՆ

*Շարունակուած էջ 15-էն*

ծիդ պէս ըլլայ թող. երթանք, տեսնենք քու այդ չքնաղ անգլիական կղզին:

Ուայթ կղզին, տարակոյս չկար, գեղեցիկ էր, նոյնիսկ՝ սքանչելի՛: Ամէն ինչ մեղմութեամբ կը բնորոշուէր եւ խաղաղ նրբութեամբ: Ծովուն կապոյտը բաց ու վճիտ էր Մարգարիտի աչքերուն պէս: Ծառերուն կանաչը՝ թեթեւ ու աչք շոյող: Իսկ մարդիկը՝ լուռ ու խոհուն: Պոլիսի, Գահիրէի եւ միջերկրականեան նաւահանգիստներու եռուզեռէն ու բարկ գոյներէն ետք, անդորր այս կղզին իսկապէս որ կազդուրիչ անհրաժեշտութիւն մըն էր իրեն համար:

Պանդոկը փոքր էր, մաքուր ու կոկիկ: Աքասիաներու մէջ ծուարած խաղաղ անկիւն մը: Սպիտակ պատեր ունէր, կապոյտ լուսամուտներով: Ննջասենեակները վերն էին, կանաչով, արեւով ու ծովուն բուրմունքով ողողուած: Ցերեկները կը շլանար կապոյտով, իսկ գիշերներն ալ կը գինովնար ալիքներու շարշափով: Ցերեկները Մարգարիտին հետ կ՛ըլլար ընդհանրապէս: Այնքան իրարու ըսելիքներ եւ պատմելիքներ ունէին: Ի՞նք մանաւա՛նդ: Կը պատմէր վերջին օրերու վանքին մէջ անցուցած անդոհանքի մասին: Գձուձ մեքենայութիւններու սարդոստայնով մը շրջապատեր էին զինք, նախանձոտ միաբանները: Որքա՜ն ժամանակ ու ջանք վատներ էր ինքզինք պաշտպանելու համար, եւ այդպիսով, որքա՜ն մեղեդիներ, կարօտ լոյսի եւ ձեւի, մնացեր էին անաւարտ: Ուղղակիօրէն անկարելի էր շարունակել մնալ այդ թունաւոր մթնոլորտին մէջ: Վերջապէս Վեհափառն ալ համոզուելով արտօներ էր իր մեկնումը: Բաժանումը Էջմիածինէն եղեր էր բաւական դժուար եւ ցաւալի. ի վերջոյ, անոր պատերուն ետին կը թողուր տասնեակ տարիներու կեանք մը, ի՜նչ փոյթ թէ վիրաւոր եւ հալածուած, բայց ստեղծագործական ձեռքբերումներով հարուստ:

Իր առաջին մտադրութիւնը եղեր էր Մարգարիտին միանալ, բայց վախցեր էր անոր խաղաղ կեանքն ալ պղտորել իր տուայտանքներով: Յետոյ, Պոլիսը բացեր էր յոյսի նոր դուռ մը: Ճիշդ էր, հոն չկար հայրենի հողը՝ վճիտ ակունքը իր երգերուն, բայց փոխարէնը կար մտաւորականներու եռուն շրջանակ մը, երգի կարօտ ժողովուրդ մը: Անոնց օգնութեամբ, ոտքի հանեց հրաշալի Գուսան երգչախումբը: Իր մեծ երազներէն կարեւոր հանգրուան մըն էր այդ: Մարգօ՛ ճան, պէտք էր տեսնէիր, երբ երեք հարիւր հոգիներ իրենց բազմաձայնութեան մէջ միաւորուած՝ առաջին անգամ հնչեցուցին «Հօ արա հօ»ն, այնքա՜ն դաշնալուր, այնքա՜ն վսեմ ու առինքնող՝ որ ինք մոռցաւ բոլոր չարչարանքներն ու հալածանքները: Երբ Պոլիս վերադառնար, պիտի յաջողցնէր երաժշտանոցի միւս երազանքն ալ: Այդ առնչութեամբ, որքա՜ն երջանիկ պիտի ըլլար, եթէ ինք ալ ընկերանար իրեն: Ձեռք ձեռքի տուած, ինչպիսի՜ սերունդ պիտի պատրաստէին: Հայ երգի եւ երաժշտութեան ոսկեդարը պիտի պատրաստէին:

Մարգարիտ լուիկ մտիկ կ՛ընէր: Թող կու տար որ ան խօսէ՛ր, պարպուէր տարիներու ներքին կուտակումներէն: Գիտէր թէ միայն այդ պարպումով ան պիտի գտնէր իր հոգեկան խաղաղութիւնն ու կազդոյրը:

Այդպէս ալ, իրօ՛ք, ժամանումի երրորդ օրն իսկ Կոմիտաս փոխուեցաւ: Արթնցեր էր շատ կանուխ, աշխատանքի նոր եռքով վարակուած: Հին ու նոր մեղեդիներու պատառիկներ կը ծաղկէին մտքին մէջ եւ կը հալածէին զինք: Անհամբեր սպասեց որ պանդոկին կենուորները վերջացնելով իրենց նախաճաշը, մեկնէին իրենց առօրեայ պտոյտներուն: Խնդրեց որ Մարգարիտ ինք ալ պտոյտի երթայ առանց իր ընկերակցութեան:

Վերջապէս ա՛լ առանձին էր: Վերցուց թուղթերն ու գրիչը եւ դահլիճ իջաւ: Փակեց դուռը եւ նստաւ դաշնամուրին առջեւ: Մատները աննպատակ հնչեցուցին ստեղները: Պահ մը աչքերը փակած, ականջը հետամուտ մատներէն ծորող պատահական հնչիւններուն, փորձեց բռնել զինք հալածող մեղեդիներէն մէկը: Բոլորը գրեթէ խուսափեցան ու խոյս տուին: Միայն մնաց մէկ հատը: Ձեւաւորուիլ սկսող եղանակին հետ, մտքին մէջ ուրուագծուեցաւ նաեւ պատկերը՝ նախ աղօտ ձեւով, ապա յստա՛կ, կենդանի՛ գիծերով:

... Արարատեան դա՛շտն էր: Արեւավառ, հնչեղ առաւօտ մը: Մութնուլոյսին ինք դուրս ելեր էր վանքէն: Գիշերը ունեցեր էր ընթացիկ բախումը Վեհափառին հետ, որ դարձեալ մերժեր էր ընթացք տալ միաբանութենէն հեռանալու խնդրանքին: Ամբողջ մարմնով դող ելած, գիշերը չէր կրցած քնանալ: Գարագեղին մէջ բանտուած յովազի մը պէս գալարուեր էր մինչեւ առտու: Ու երբ սկսեր էր աղօթարանը բացուիլ, զգացեր էր որ ա՛լ չէր կրնար մնալ չորս պատերուն մէջ եւ նետուեր էր Վանքէն դուրս: Ժամերով քալեր էր դաշտերուն մէջ, առանց ոչինչ տեսնել, նկատելու: Ու երբ արեւը անակնկալի բերեր էր զինք, երբ արեւը շողացեր էր յաղթական եւ համատարած ջերմութեամբ ընդգրկեր դաշտ ու արտ՝ կանգներ էր ինք թեթեւ բարձունքի մը վրան եւ դիտեր՝ դիմացը տարածուող արտերուն վէտվէտումը: Զգաց թէ յոգնած էր սաստիկ: Աչքերուն մէջ խտղտանք էր: Ուստի երկնցաւ ծառի մը ստուերին տակ: Կ՛երեւի քունը յաղթահարեր էր անմիջապէս:

Իսկ երբ արթնցաւ, եղանակմեղեդին ներկայ էր արդէն. ան կու գար արծաթեայ ձայնով, այնպէ՝ս բարակ ու հեզիկ, որ ինք վախցաւ անմիջապէս աչքերը բանալու: Եթէ բանար, կարծեց պիտի փրթէր բարակ երիզը ձայնին:

«Քելեր, ցոլեր իմ եարը...»

Բայց ձայնին անմեղ հրապոյրը ստիպեց որ բանայ աչքերը շլացումով: Եւ երգը մնաց: Երգը կու գար վարէն, արտի մէջէն: Նախ տեսաւ փայլը գերանդիներուն: Երեք այր մարդիկ էին, կը հնձէին ցորենի հասկերը: Անոնց ետին, երկու հարսեր էին, գլխաշոր կապած: Անոնք ծունկի եկած, հնձուած հասկերով որայ կը կապէին: Անոնցմէ մէկն էր երգողը: Ո՞ր մէկը՝ չկրցաւ զատորոշել. հո՛վ կար: Կիները կ՛երեւէին թիկունքէն: Ինք ուզեց որ կարմիր շոր կապած հարսը ըլլար երգողը: Աւելի պարմանի թուվռուն կ՛երեւէր ան:

(Շարունակելի)

# Ցեղասպանութեան 100-Ամեակը Նկարներով



















